Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2594

89

11

P
1854

84
$-47

242

ԳԱՂՏԵՒԻՐ

ԻՆԿԱՅԻՕՅԻՑԻԱՑԻ

ԲՕՄԱՆ

Մ. ՖԵՐԻՆԱԼԻ

Ի թարգմանութեանց

Յովհաննու Կոլենեանց

և

Մեսրոպէ Պոպիանեանց։

ԳՐԱԴԱՐԱՆ

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ն. ՆԵՐՍԻՍԻ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարգի աստուածեղեան մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

84
Ֆ-47
Կգ.
Ֆ-119

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ։

Ի ԹԻՖԼԻՍ։

Ի Տպարանի Ճերախեան Ռաստնարանի ընծայելոյ յաշխատական Գէորգայ Աբծրունեաց։

Ի 1854 ամի. և Աշխարհի 1303։

2003

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ.

Тифлисъ. 4 Марта 1854 года.

Исправляющій должность Цензора Протоіерей І. Орбели.

57276-ш
9

ՖՐԱՆՁԻՍԿԵՍԸ ԵՒ ԺԱՊԱՎՈՐԸ։

Գլուխ Բ։

Լսօղէն, բաժանուելով Գոլօրէսից, գնաց Ինկվիզիցիօրի պալատը։ Նստեղ գնալիս, նա պէտքէր անց կենար էն քուչից, ուր բնակւում էր Սեվիլայի նոր կառավարիչ Նրիկէզը։ Երբ Լսօղէն մտաւ էն քուչէն, զարմանալով տեսաւ, թէ այնպիսի ուշ ժամանակ Նրիկէզի տան առաջը ժողոված էին շատ բազմութիւն։

Այս բազմութեան մէջ լսւում էին գանգատ, նախատինք և ապտառնալիք, որոնք իրար խառնուելով դառել էին մին զարհուրելի խառն գոռում։

Լսելով այսպիսի ձայն հեռուից, մարդ կարծում էր, թէ այն էր թարձր կաղնիի անտառից դուրս եկած քամիի ձայն։

Բազմութիւնը քանի գնում էր շատանում էր, գոռումը քանի գնում էր զօրանում էր։

— Ինչ է պատճառը, որ էստեղ հաւաքւել են էսքան շատ ամբոխ, հարցրուց Լսօղէն Ինկվիզիցիայի մին պաշտօնատարից, որին ղրկել էր Ս. Ըրուէսը իմանալ պատճառը։

Մարդակ բան է, պատասխանեց նա. բռնել են մին պառաւ հրէուհի, Հայր իմ։

— Էն հրէուհին — ասաց մին համարձակ ռամիկ կին, որ լսեց Ինկվիզիցիայի պաշտօնէի պատասխանը — էնպէս իսկ կաթոլիկ է, ինչպէս որ ես եմ, Հայր իմ. միայն նա դուրս է աբել իրա մին ծառային, որ յանցաւոր է գտնուել նրա առաջը, և էն ծառան մատնեց, թէ — իբր էն կինը դարձեր է հրէից հաւատը։

— Ո՞ւռ կը Ճանապարհեն նրան, հարցրուց Ինկվիզիցիայի սիրելին։

— Նրան Ճանապարհում են բոլոր էստեղի աղքատները. նա բաժանել է նրանց համարեա թէ իրա բոլոր կայքը. մերզանումը ամենքը նրան անուանում են Մոյրէ, և ահա հիմի մկրտեալները հաւաքւել են էստեղ, որ ազատեն քանտից մեր բարեբարին։

Ինկվիզիցիի ծառան կամենում էր բռնել էն կնիկանը և գցել քանտը, բայց Լսօղէն աչքով արաւ նրան հեռանալ, և ծառան կա-

տարեց Աբբուէսի սիրելիի հրամանը։

Բայց հեռանալիս էն ծառան գցեց իրա սուր աչքերը էն կնոջ վրա, որ դեռ ունէր վստահութիւն խօսել էնպէս հաւանաձակ. երևի, թէ նա ուզում էր միտը պահել նրա կերպարանքը, որ իրա ժամանակին վրէժ առնէ նրանից։

— Այս խորհուրդ կըտամ քեզ, կաւոց ասաց նրան Խօզէն երբ Ինկվիզիցիայի ծառան հեռացաւ, ես խորհուրդ կըտամ քեզ, որքան կարելի է շուտով փախչել Սևիլիայից. ապա թէ ոչ՝ քո խօսքերը քեզ շատ թանկ կընստին։

— Շատ կարելի է, պատասխանեց կինը, մեկ տալով Դոմինիկեանին և երդիճանօք ժպտելով, չէ՞ որ դուք էլ Ինկվիզիթօր էք։

— Այս ուշումին չար չեմ ուզում, ասաց Խօզէն, ես ընդհակառակն սիրում եմ ժողովրդին, և՝ լի հարկէ քեզ չեմ մատնիլ։

Այս ժամանակումը բազմութիւնը աւելի շատացաւ. ամբոխի մէջ վազում էին դանակները, և դուրս եկան մին քանի մարդիկ ձեռերին հատ երկաթի նիզեր, և մօտիացան հենց էն տան դրանը, ուր բնակում էր Այնրիկէզը։

— Ինչ էք ասում, սկսե՞նք թէ չէ, եղբա՛ր, ասաց նրանցից մինը։

— Սկսեցէք, սկսեցէք. մտածելու բան չկայ, լուեցաւ բազմութիւնից։

Էնց էն րոպէումը ասատիկ հարուածի ձայնը դրանը լսուեցաւ, նրա ետևից էլի հարուածներ. դուռը, թէ և շատ ամուր էր, բայց ժաժ եկաւ։

Զարհուրելի էր էն ժամանակը Ընդալուզիոյ ռամիկների կերպարանքը։ Ամէն կողմից խոժոռ աղդու դէմքեր, ամէն կողմից վառուած աչքեր, ամէն կողմից պատրաստութիւն և բարկութիւն։

Կնանիքն էլ, Ջահիլ աղջկերքն էլ անհամբեր մնում էին մէկ մէկու դիպչելու դուրս հանելով իրանց նոր սրած դանակները։

Բայց էն ժամանակումը ի՞նչ էր անում նա, որի դէմ ոտի կանգնած էր բազմութիւնը, նա, որ ամէնից առաջ պէտք էր ցրուէր բազմութիւնը, մին խօսքով՝ Աբբուէսի դիտաւորութեանց կատարող Այնրիկէզը։

Փոքրոգի Այնրիկէզը չէր համարձակում դուրս դալ իրա դրան շէմքը, նա՝ ոչինչ հնարք չէր դործ դնում, ոչինչ բանի ձեռք

չէր տալիս, ոչուլի հետ չէր խօսում, այլ միայն երբեմն շտապով մոնելով մին սենեակից միւսը և խլելով իրա կուրծքին, առում էր մին քանի անհասկանալի խօսքեր։

Նա ենքան ուշք ու միտքը կորցրել էր, որ համարեա թէ պատրաստ էր լաց ըլել երեխի պէս։

Նիգերի հարուածները քանի գնում էին աւելանում էին, և վերջապէս լսուեցաւ դռան ճռճռալը. պոկուեցաւ իրա կոճակներից և մեծ թրխքոցով գետին ընկաւ։

Ժողովուրդը բղաւեցին, ուզեցին առաջ վազել, բայց կանգնեցան և լռեցին։ Ենց իմանաս նրանց յանկարծ արդելեց մին անբևոյթ անպարտելի զօրութիւն։

Այս կարող զօրութիւնն էր — ,,վարժապետի ,, կամքը։

Ենց էն րոպէին, երբ ամբոխը պատրաստ էր թափուել Այնրիկէզի տունը, երևեցաւ բաղմութեան մէջ Յովհաննէս Աւիլեանը և ասաց իւր վեհ հրամայողական ձայնիւ, ձայնիւ, որը որ Սիվիլից բնակիչները շատ անգամ լսել էին եկեղեցիների մէջ։

— Ի՞նչ էք անում, անխելքներ, մին քայլ էլ առաջ չըգնաք։

Այս հրամանը խիզոյն հասաւ բերնէ բերան և բարկութեան յարձակումը հանգաւ աղմկեալ բաղմութեան մէջ, ինչպէս երբեմն յանկարծ հանդարտում է մրրկեալ քամիների յարձակումը։

Այսքան զօրաւոր էր Ֆրանչիսկեանի ներգործութիւնը Սիվիլից հասարակութեան վրա։

Երբ ամբոխը բաժանուցեաւ նրա առաջը, նա ասաց նրանց, որոնք միւաներից աւելի մօտ էին իրան՝

— Ի՞նչը ստիպեց ձեզ, որդեակք իմ, թափուել էս տան վրա և ի՞նչ բանի կարող է հասցնել ձեզ էս գործը։

— Ո՛վ հայր մեր, պատասխանեց մին ռամիկ, ախր նրանք բանտն են գցել մեր բարեբարուհին. ի՞նչպէս կարելի է չը կանգնենք նրա համար, երբ նա չէ խնայել մեզ համար վերջին փրանքն էլ։

— Ստուած նրան յետ կրտայ ձեզ, ասաց վարժապետը, աղօթք արէք, բայց պարտաւորութեանց ընդդէմ մի՛ գնաք։

Այս բոպէումը ,, վարժապետին ,, մօտեցաւ մին բարձրահասակ մարդ, ահագին երկաթի նիզը ձեռին։

Այս մարդը, որ ըստ երևութին էր ամբոխի շատ վատահ կրտալիչներից մէկը, մեզ ծանօթ Սկրեռնայի ընկերն էր։

Ֆրանչիսկեանը Հանաչեց նրան առաջին մութկ տալիս և ասաց հանդարտ ձէնով՝

— Դու ինչ ես անում էստեղ, Մանոշինա։

— Այս, պատասխանեց (էքսքանդիտը) հրաժարական առաղակը, ես կամենում էի հաշիւ տեսնել վասն . . . վասն . . . այսինքն, ինչպէս դուք, հայր իմ, անուանում էք, վասն Ինկվիզիցիայի զոհին . . . մենք, համարձակւում եմ յայտնել, մոքերս դրած էինք տալ նորին բարձրանուն ողորմածութեան Ինքիսիզին էն կեանքը գնալու անցաթուղթ։

— Դուք մոքերդ դրել էիք ապանել նրան։

— Այ, եթէ բանը էնտեղը հասնէր։

— Ո՛չովի չէ՛ պէտք ապանել։

— Ուրիշին, 'ի հարկէ, բայց էսպիսի մոր ծիծ կտրողին կարելի է . . . Բայց եթէ դուք, Այր, չէք կամենում, մենք տեղերից էլ չենք ժաժ գալ . . . ախըր ի՞նչ որ դուք ասէք, մեզ համար հրաման է։

— Ուրեմն ամէնքդ, որդեակք, ձեր տները գնացէք, աղօթք արէք և Աստուծոյ ողորմութեանը ապաւինեցէք։

Ամբոխը առանց տրտունջի, առանց մին փոքր անբաւականութեան նշանի կատարեց էս հրամանը։

Ինկվիզիցիայի սրիները, որոնք մինչև էն ժամանակը չէին համարձակւում ոչինչ բանի ձեռը տալ, կամեցան թափուել մին քանի քաղաքացիների վերայ, որոնք մէկմէկու ետևից հեռանում էին. բայց յանկարծ լսելով, թէ վարժապետը պահանջում է որ ոչովի չընդառնեն, կանգնեցան մոլորուած։ Այս միայրկենական տարակուսութեան ժամանակը նրանց մօտեցաւ Յոզէն, և մին գաղտնի նշան տուեց նրանց։ Սրիները էն վայրկեանին կորան։

Գնդէտ վարժապետը շատ բարեսիրտ էր, բայց այնու ամենայնիւ մտիկ տուեց Աստուծոյ սիրելի վրա բարկութեանը։

Այն ժամանակներումը Ֆրանչիսկեանները և Դոմինիկեանները անհաշտ թշնամիք էին իրարու, և վարժապետը տեսնելով Յոզէն չընկալաց յաղթել իրա ակամայ ստելութեան զգացմանցը. բայց Յոզէն մօտեցաւ Յովհան Աբելեանին, հանդարտ և մտերմական դէմքով ասաց նրան՝ — Այր իմ, նա՝ որին դուք աշխատում էք գտնել, հիմի ապահով տեղ է։

Ֆրանչիսկեանը, որ գեռ ոչինչ չը գիտէր Գոլոբէսի վիճակէ

համար, ասրատիեցու. Նա կարծեց, թէ կուն Աբզօզոյ դուստրը Ինկվիզիցիայի ձեռն է ընկել։

— Այո՛ իմ, շարունակեց Դամինիկեանը, հեզութեամբ մը տիկ տալով վարժապետի երեսին, մի թէ չէք առնում իմ երեսից, որ ես Հշմարիտն եմ խօսում։

— Ուրեմն յետ տուէք ինձ էն խեղճ երեխին, պատասխանեց վարժապետը. Նա ինձ է, դօն Յատէվանին է շատ արտասուք է նստել։

— Յդուց էլ գիշերին դուք ինձ կարող էք գտնել մայր եկեղեցւոյ Հրապարակումը շատրվանի մօտ. եթէ կըգաք էնտեղ, ես ձեզ կըտանեմ Դօլօրէսի մօտ։

— Սուս . . . ասաց Ֆրանչիսկեանը նկատելով, որ նրանց մօտենում է Յատէվանը, որ մինչև հիմի կանգնած էր փոքր ինչ հեռու։ Մենք կըտեսնուինք վաղը. ես կըգամ։

Խօսքն շտապով հեռացաւ վարժապետից մին քանի քայլ, սուր աչքով մոլիկ տուեց Դօլօրէսի նշանածին, խորը արտից հրդեց հանեց, և սրբելով արտասուքները, որոնք յանկարծ ցայտեցին նրա աչքերից, գնաց։

Վարժապետը ոչինչ չասաց Յատէվանին Աբրուէսի սիրելի խօսակցութեան համար. Նա մտքումը դրել էր մէնակ գնալ նշանակած տեղը։

Ինկվիզիցիօնի պալատը գալից յետոյ Խօջէն իսկոյն գնաց Աբրուէսի մօտ։

Աբրուէսը մինակ էր իրա սենեակումը, քայց պալատի չորս կողմը պատած էին բազմաթիւ պահապաններ, որոնց իսկոյն կանգնեցրել էին, ինչպէս որ յայտնել էին նրան ռամիկների տան վրա թափուելը։

Նա նստած էր սև փոյտից շինած գեղեցիկ սաղաւորով պատած սեղանի առջևը, և երկու ձեռքը յեցած նրա վերայ մտադրութեամբ ծնողում էր առաջևը դրած մին փոքրիկ ոսկի էքմին, որ շատ խորթ ձև ունէր, և որի ինչի համար ընելը չէր կարելի հասկանալ առաջին տեսնելումը։ Դ էքմինը բժժանք (թլսամ) էր, որ առաջ իլել էր Ինկվիզիցիօն Հօրկուեմադայ այնքան արիւնարբու Ֆանատիկինը, որի անգթութիւնը զարհուրեցրուց նա և. Պապ Աղէքսանդր Խօրջիային։ Այս թլսամի զօրութեամբ, որ Աբրուէսի ձեռը ընկել էր, ում գիտէ՞ ինչպէս, երկու Ինկվիզիցիօնները

էլ կարելի էին համարում՝ ինչ բանի մէջ որ թոյն լինի, խմանալ և նրա զօրութիւնը կորել։

Երբ որ Լոզէն մտաւ սենեակը, Ադրուէսը գլուխը բարձրացրուց, և ասաց իրա սիրելին՝

— Հը, ի՞նչ է, Լոզէ, ի՞նչ համբաւ։

— Ամէն բանը լաւ է գնում շատ, ձերդ արքայութիւն, պատասխանեց Ջահիլ Ռամինիկեանը։ Ինկվիզիցիայի ոգիները ցրուեցին ռամիկներին և Հիմի քաղաքումը խաղաղութիւն է։

— Վերջապէս, աղաղակեց Ինկվիզիթորը. իսկ Ինրիկէզը . . . նրան ինչ-որ չե՞ն տուել։

— Ո՛չինչ, ձերդ արքայութիւն, և նա Հիմի բոլորովին անվտանգ է . . . ռամիկները միայն կոտրեցին էին տան դռները, որ տեղ նա բնակում է։

— Ուրեմն էդ ապստամբները դիտաւորութիւն չե՞ն ունեցել մեր պալատի վրա յարձակվել։

— Ո՛չ մէկը. և ո՞վ կըհամարձակուի վրդովել ձեր արքայութեան անդորրութիւնը։

— Կարծեմ որ . . . . բայց կարող են պատահել անակնկալ բաներ . . . կարելի է, Լոզէ, ես առաջից մտածելու բան բռնեցի, որ Ինրիկէզին բարձրացրի էդ երևելի տատիճանին. ախը, նա էնպիսի մարդ է, որ ոչ եռանդ ունի, ոչ վստահութիւն . . .

— Ներկարծեմ, ձերդ արքայութիւն։

— Բայց նա շատ ցած տոհմից է . . . էնդուրից ջոկի՝ տղէ։

— Ի՞նչ անենք, որ կըթութիւն չունի և երևելի տոհմից չէ. նա ձեզ մտերիմ է՝ գլխաւոր բանը էդ է։

— Ղոռոմլուրդը մինչև հիմի էլ դեռ ախտում է կոմս Ադրդոզոյին, մինչև հիմի էլ դեռ սիրում է նրան. և ինչի՞ն է . . . էնդուրից, որ կոմս Ադրդոզոն երբէք չէր դորձ դնում խիստ հնարքներ հերետիկոսների և թերահաւատների դէմ։

— Ուրեմն, պէտք է հիմի կրկնապատկել խստութիւնը։

— Դա, Լոզէ, պէտք է, ժամանակը հասել է, որ Ինկվիզիցիան էն նշանակութիւնը ունենայ, ինչ որ է. ժամանակն է, որ հերետիկոսութիւնը՝ էս կորստական ժանտախտը՝ յաւիտեան բարձուի երկրի երեսից։

— Եւ հասել է ժամանակը, որ բոլոր երկիրը պատկանի Ինկվիզիցիային, աւելորդ սիրելին՝ կէսը հանած կէսը ղրդի դէմքով։

— Ինչքան որ շատ կորչին հելլենիկոսները և Թերահաւատները, սակայն նա չեկայ յանկարծ փոխելու խոստմնամուտեան երդումը, նրան ուզում էր կրկնել Ինովլեցին։

— Խորհիր չլինի, պատասխանեց Աբրուէսը գազանացին ժպտալով։ Մենք էլ, փառք Աստուծոյ, չենք Թուլանում մեր երդումից. առաջինոյ ամիսս—դա—Ջեկի համար դատապարտուած են հարիւր սատանք ուխտը հելլենիկոսներ։

— Եղնամով ուրեմն անցեալ տարուանից. բայց կամ Աբրդոզին ի՞նչ է ուզում անել։

— Նա կբաժանուի իրա յանցանքի յարմար . . . կրպատժուի, ինչպէս օրէնքն է լիւտերական հելլենիկոսուԹեան համար, ազատուելց Աբրուէսը սատանի բարկուԹիւնով, որ յանկարծ զարԹեցաւ նրա սրտումը, երբոր նա միտքը բերեց, Թէ ինչպէս անյաջող էլան իրա աշխատուԹիւնները՝ սատանայ Հօլօքէսի սէրը և զբաղեալ նրան։

Դա միջոցումը Լսօզէն վեր առաւ սեղանի վրայից էն Թղթը, և խաղալով նրանայի պէս՝ ձեռումը պատռտ էր տալի։ Դա տեսնելով Ինովլեցիոյը բռնեց իրա սիրելի ձեռից և սաստիկ յուզեալ հանգարտեցուց՝

— Ինչ, սիրելիս, դու էդ բանը էրա տեղը։ Աստուած սա Թլատ է, իմ սիրելի Լսօզէ։ Սա պահպանել է Գլատելից սատանայի մեծ Ինովլեցիոյի արժանապատիւ Տօրիուեմոգայի կեանքը, և հիմի պահպանում է մերը։

Լսօզէն, որ շատ սիրելի հեռու չէր մնացածներից, վրայը ինչ վրդովեցաւ և խոկոյն կատարեց Աբրուէսի հրամանը։

— Լսօզէ, սակայ Ինովլեցիոյը. որովհետև հիմի քաղաքումը հանգարտուԹիւն է, վատ չէր լինիլ, որ մենք լրիվուայ հայ ուտէինք։ Մենք կըփորձէինք հազարը էն գլխին, որ ինձ համար ուզարկել է պապի նուէրակը։

— Դա ամենևին ուտել չեմ ուզում, պատասխանեց սիրելիանը։

— Կ՚ուզես, երբ որ գլխիդ համը կրտեսնես։ Ուրեմն կանչէ, հագուէ, գնա և հրամայէ, որ մեզ ուտելու բան բերեն։

Հենց Լսօզէն ուզեց գնալ դրան մօտ, յանկարծ մտաւ սենեակը Ինովլեցիոյի ապատաւորներից մինը ձեռին նամակ բռնած։

— Ամենն է, հարցրուց Աբրուէսը վերառնելով նամակը։

— Պարոն քաղաքապետից, պատասխանեց Ինովլեցիոյի

ապատաւորը և դուրս գնաց սենեակից։

— Ս. Բրուէսը բաց արաւ նամակը և կարդաց՝ «Շտապում եմ յայտնել Ձերդ սրբազնութեան, թէ Կարմելիտեանների մայրապետը յանկարծ դժուար հիւանդացել է, և կանչել է իրա մօտ Ֆրանչիսկեան կարգի անդամների մէկին, ինչպէս ասում են, խոստովանելու համար։ Այն Ֆրանչիսկեանը կըդայ վանքը էսօրէս. որանից աւելի ուշինչ չըկարացի իմանալ էս բանի համար։

«Ես կամենում էի էս բանի համար յայտնել Ձեր սրբազնութեանը երկու ժամ առաջ և պատրաստած էլ ունէի նամակը, բայց չըկարացի ուղարկել Ձեզ մօտ էն շտապի պատճառաւ, որի ժամանակը իմ կեանքս վտանգի մէջ էր։»

— Խեղճ Անրիկէզ, աղաղակեց Անկվիզիթօրը, որի երեսին նամակը կարդալու ժամանակը երևում էր սաստիկ բարկութիւն, Ի՞նչպէս աշխատում է նա ծառայել մեզ։

— Իմի դուք տեսնում էք, ես Ձեզ մարիտ էի ասում, թէ ուշ, Ձերդ սրբազնութիւն, ասաց Խոզէն դեռևս չ'իմացած, թէ ինչով է ցոյց տուել Անրիկէզը Ս. Բրուէսին իրա ջերմեռանդութիւնը։

— Ա՜ նա համարձակուել է, շարունակեց Անկվիզիթօրը իրը թէ ինքը իրահետ խօսելով, համարձակուել է կլանչել իրա մօտ Ֆրանչիսկեան . . . մեր մահաբեր թշնամիներից մէկին։ Այ, նա կարող է վնասել մեզ . . . շատ կարելի է, որ նա բոլորը ասէ . . . պէտք է էս բոլորն նրան տեսնել։

— Ս. տղայ, աղաղակեց նա յետոյ մօտենալով դրանը և քաշելով ապրշումեցոյ վարագուրը, իմ գահաւորակը. ես դուրս եմ գնում։

— Խոզէ, ասաց նա իրա սիրականին, որ էս բոլոր ժամանակումը 'ի զուր աշխատում էր իմանալ, թէ ինչ է անցկնում Ս. Բրուէսի սրտումը, — մեծ բան է պատահել. Կարմելիտեանների մայրապետը մեռնում է, ես պէտք է տեսնեմ նրան. մնաս բարով։

Այս խօսքերից յետոյ նա շտապով դուրս եկաւ իրա պալատից, նստաւ իրա գահաւորակի վրա և գնաց Կարմելիտեանների վանքը։

Վանքի դրան մօտ նա հանդիպեցաւ Ֆրանչիսկեան կարգի հոգևորականի։

— Դուք ինչի՞ էիք եկել էստեղ, հարցրուց Ս. Բրուէսը բարկութեամբ։

— Ինդուր համար, որ փրկեմ հոգին, որ մօտ էր կորստեան,

պատասխանեց Ֆրանչիսկեանը։

Այս Ֆրանչիսկեանն էր — Յովհաննէս Աւիլեանը։ Ինկվիզի-թորը խստոյն ձանաչեց նրան թէ՛ և աղտեմուտ էր։

Այրժապետի պատասխանը լսելուց յետոյ, Աբբուէսը ատելութեամբ լցուած աչքով մոտիկ տուեց նրան, և շտապով մտաւ վանքը։

Ֆրանչիսկոյ Լէրմն վոտքը ինչ թեթեւացել էր, երբոր Ինկվիզիթորը մօտեցաւ նրա մահիճին։ Նրան նոր էին հանդարտացրել, նոր էին հաշտեցրել իրա խղճմտանքի հետ Այրժապետի խօսքերը, որին նա ցանկացել էր տեսնել տանջուելով մահուան երկիւղից և ապաշաւելից, և որի վրա ունէր նա միշտ անսահման հաւատարմութիւն։

— Լսեցէք, ասաց հիւանդին Աբբուէսը, երբոր միտք մը-նացին սենեակումը, ինչի՛ համար դուք հրաւիրեցիք ձեզ մօտ Ֆրանչիսկեանին, երբոր ձեզ պէտք էր էսպիսի վայրկեանումը ինձ կանչել։

Այրապետը մոտիկ տուեց նրան գլխից մինչև ոտքը, և փոխուած պատասխանի անորգանոք ժպտեցաւ։

— Դուք պէտք էր ոչ թէ նրան, այլ ինձ յանձնէիք ձեր երկբայութիւնները, շարունակեց Ինկվիզիթորը առնելով իրա վրա կեղծեալ բարեպաշտութեան կերպարանք, ես ձեզ կը հանդարտացնէի . . . ես ձեզ համար ներողութիւն կը հայցէի։

— Դո՞ւք, ասաց մայրապետը ոկսը ձէնով . . . առաջ ձեզ համար հայցեցէք, հայր Ինկվիզիթոր. . . . . .

Ֆրանչիսկոյ Լէրմը լռեց և երեսը շուռ տուեց։

Ինկվիզիթորը վերջապէս հասկացաւ, թէ էլ ոչինչ իշխանութիւն չ'ունի նրա մտքի վրա, թէ նրա մտքերի ձևը բոլորովին փոխուած է։ Նա երդուեցաւ կորցնել նրան։

Այց էս անգամումը նա թաքցրուց իրա չարութիւնը և դուրս եկաւ հիւանդի մօտից առանց մին սպառնալիքի։

II.

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինկվիզիցիոյի սիրելիից նշանակած Յովհաննէս Ալիլեանի հետ տեսութիւն անելու ժամանակը մօտենում էր։

Լատէվանի հետ իրիկնահաց ուտելիս Ֆրանչիսկեանը թէպէտ շատ աշխատեցաւ, բայց չըկարաց թաքցնել իրա անհանգստութիւնը. քան մեծի մասին նա լուռ էր կենում, և եթէ խօսում էր, էն էլ կցկտուր, ակամայ, և դէմքի վրա յայտնի երևում էր ներքին սաստիկ վրդովումը։

Լատէվանը նկատում էր, և կարծելով թէ Ֆրանչիսկեանը թաքցնում է ներանից Գոլգոթայի համար մին տրտմալի հաւքաւ, աւելի նեղանում էր իրա նշանածի կողմանէ։ Այնուամենայնիւ նա երկար ժամանակ չէր համարձակւում խօսք բաց անել էդ ուրը վրա Ֆրանչիսկեանի հետ, հնարանդելով էն մարդկային ընդհանուր տկարութեանը, որից մենք երբ նախադուշակում ենք տարաբաղդութիւն՝ համ ուզում ենք, համ վախենում ենք հարցնել։

Վերջապէս նա յաղթեց իրա վրդովմունքը և հարցրուց Յովհաննէսից՝

— Այր իմ, էքմին խօմ չէ՞ք լսել տարաբաղդ Կոմս Ալբերտ ղոյի համար։ Դրանից թէ տկսուել է արդէն նրա դատաստանը. և կարօղ ենք մենք արդեօք դոնեա քիչ յոյս ունենալ նրան փրկելու։

— Նրա դատաստանը դեռ չէ տկսուել, պատասխանեց վարժապետը, և երբ տկսուի, ես քեզ իմաց կըտամ, որովհայտ ... չէ՞

որ մենք էդ մասին խօսք ենք կապել. այլ միւսն էն ժամանակը խնդրում եմ քեզանից, — կրկին խնդրում եմ, — չընեղանալ ուշ մին բանի համար, ուշ մին բանի ձեռը չբռնալ և չընդնալ Ինկվիզիցիային հակառակ . . . Իսկ եթէ ուշ, կբկորչես . . .

— Օ՞, իմ կորուստս համար, ես ամենևին չեմ հոգում, պատասխանեց Լատէվանը հաստատութեամբ։

— Բայց դու հիմա կբկորչես անօգուտ, եթէ որ ուրիշ հանգամանաց մէջ, այսինքն, իրա ժամանակին քո անձնուրացութիւնը դարդակ չի անց կենալ, ինքդ էլ կ'աղատուես վտանգից։

Որանից յետոյ վարժապետը դուրս գնաց անից առանց խօսելոյ, ինչպէս առաջ էլ շատ անգամ անում էր։

Լատէվանը՝ որին դեռ վերդոլում էին Գօլօրէսի համար կատկածանքները, մին քանի րոպէից յետոյ նմանապէս դուրս եկաւ Ֆրանչիսկեանի տանից, դուռը կողպեց, և թաքուն գնաց Յովհաննէս Ս. Էլիսեանի եռեից մին քանի քայլ նրանից հեռու։

Այդ երեկոյեայ հրապարակումը շինած շատրվանի մօտ վարժապետը կանգնեցաւ։ Խօսքն ուզէն սպասում էր նրան էնտեղ, նստած շատրուանի մարմարոնեայ եզերքի վերայ, գլուխը կռացրած իրա սպիտակ սիրուն ձեռի վրա։

Երիտասարդ Գամինիկեանը ընկղմած էր խորը մտածմանց մէջ։ Նրա երևակայութիւնումը գալիս և գնում էին մէկ մէկու եռևից նրա անցեալ կենաց տեսարանները, և նա անպատմելի տխրութեամբ միտն էր բերում իրա առաջուայ անկատար մնացած մոքի դարտողութիւնները, ցանկութիւնները և յոյսերը։

Յովհան Ս. Էլիսեանը մօտեցաւ նրան, և նա վերկացաւ տեղից։ Այն րոպէին նրանցից փոքր ինչ հեռու նստնչի ծառերի եռևը կանգնեցաւ Լատէվանը։

— Այդ իմ, ասաց Խոզէն, խորը գլուխ տալով Ֆրանչիսկեանին, ուշ թէ դուք պէտք էր գայիք էստեղ, այլ ես պէտք էր դայի ձեզ մօտ. քայց ես չբկարացայ էդ բանը անել առանց վերնասելու ձեզ և ինձ, առանց կորցնելու ձեզ օգտաւէտ լինելու հնարքներս,

Ինկվիզիցիոյի սիրելին խօսում էր էնպիսի իտալակ սրտով, նրա դեղնած, լուանից լուսաւորած երեսի վրա նկարագրած էր այնպիսի բարութիւն, որ վարժապետի նրա հագուստից զգացած կասկածանքը համարեա թէ բոլորը փարատուեցաւ։

— Լաւ, ասաց նա շուտով, ուր է Ղոլօրէսը։

Ղոլօրէսի անունը ասելիս նարնջի ծառերի տերևների միջից լսուեցաւ թեթև շշնջիւն, հէնց կարծես թէ, նրանց յանկարծ շարժեց քամին։

— Ասահանո՞ւմ էք դուք իմ եռևէյս գալ, հարցրուց Լյոզէն հեգնութեամբ։

— Ինչի՞ պէտք է չըմատահանում, պատասխանեց Յովհան Ալիլեանը, որի վերհ հոգին անմատչելի էր վախի։ Ես յօժարութեամբ կըգամ ձեզ հետ, եղբա՛յր իմ։

— Ոչ. ո՛չ եղբայր, այլ որդի՛ ձեր, պատասխանեց Ղոմինիկեանը փոքր ինչ բարձրացնելով և իրարու կցելով ձեռները, — որդի՛ հլու և հնազանդ, որդի՝ որ կարօտ է ձեր աղօթքին. . .

Ֆրանչիսկեանի սիրտը շարժեցաւ. նրա արտումը հակառակ իրա կամքին ծնում էր անպարտելի համակրութիւն (սիմպատիա) առ Ինիվիզիթօրի սիրելին. . . . . .

— Ուրեմն գնանք, հա՛յր իմ, շարունակեց Լյոզէն. մեր Հանապարհը հեռու չէ՛։

Մին քանի րոպէից յետոյ նրանք կանգնեցան էն տան առջևը, ուր բնակում էր Լյուանան։

Լյոզէն հանեց գրպանից (ջէբից) բանալի, բաց արաւ դուռը և ներս մտաւ։ Այրժապետը նմանապէս կամենում էր մտնել, բայց նրան յանկարծ մօտեցաւ Լյուսէվանը և ասաց, համարեա թէ աղերսական ձայնով՝

— Հա՛յր իմ, եթէ ձեզ էստեղ մին վատանգ է դալու, թոյլ տուէք ինձ ընկեր լինել. . . և նմանապէս, թոյլ տուէք ինձ տեսնել նրան. . .

— Ամենեւ քեզ ամէն բանը յայտնի է, ուրեմն արի հետս, պատասխանեց Այրժապետը։ Ես քեզ ո՛չ ինչ չէի ասում, միայն էնդուր համար, որ ինքս էլ ո՛չ ինչ ասոյգ բան չըգիտէի, և չէի ուզում քեզ խաբել դատարկ յուսով։

Լսեցէ՛ք — ասաց նա յետոյ, դառնալով դէպի Լյոզէն, որ էս միջոցումը փոքր ինչ դուրս էր հանել գլուխը դռնից, որ իմանայ, թէ նա ինչի՛ ուշացաւ։ Ես չեմ կարող ներս մտնել առանց իմ որդի Լյուսէվանին։

— Լյուսէվանի՞ն, կրկնեց Ինկվիզիթօրի սիրելին, հաղիւ լսելու ձայնով. թո՛ղ նա էլ դայ, Հա՛յր, շարունակեց նա բարձր, թո՛ղ տեսութիւն անէ նրա հետ։

Նրը որ նրանք ներս մտան՝ Յոզէն զդուշութեամբ դուռը կողպեց։

Ֆոլօրէսը և Յուանան, որոնց առաջուց խմոց էր տուել Ֆոմինիկեանը, սպասում էին նրան և վարժապետին։ Սեղմով նրանց ոտքի ձայնը սանդուխտի վրա, Ֆոլօրէսը վազեց իրա երկու պաշտպանների առաջը և ուղում էր խօսել Ֆրանչիսկեանի հետ։ բայց տեսնելով Յասէվանին, որին ամենևին տեսնելու յոյս չունէր, դեղնեցաւ և թուլացած վեր ընկաւ գեանի վրա։

Նրան ոտքի կանգնեցրին և կամաց կամաց նա ուշքի եկաւ։

— Ողորմեակ իմ, ասաց նրան Յոհան Պ.ուիլեանը, տրտմութիւնն էլ, ուրախութիւնն էլ պէտք է ընդունել արիութեամբ. այլ հիմի արիութիւնը աւելի հարկաւոր է, քան թէ ուրիշ անգամ.

Ֆոլօրէսը մտիկ տուեց առաջ նրան, յետոյ Յոզէին, և երկուսին էլ մտիկ տալիս նրա կերպարանքումը երևում էր շնորհակալութիւն։

Յոզէն շուտ եկաւ արտասուքը թափցնելու համար, որ աչքերից վազեցին նրա աչքերից։ Սակայն Ֆոլօրէսի ուրախութիւնը երկար չտևեց. նրա միտքն եկաւ հայրը և խեղճ աղջիկը վրդովուած հարցրուց Պ.ուիլեանի սիրելիից՝

— Ո՞ւր Յոզէ, ե՞րբ կլսեմ իմ հօր դատաստանը։

— Այսօր չէ միւս օրը, պատասխանեց Ֆոմինիկեանը։

— Ուրեմն յառա՞ջ գիտէք, հարցրուց վարժապետը։ Ես կարծում եմ, թէ աւելի ուշ կլսեմ։

— Յաուսկ գիտեմ, պատասխանեց Ֆոմինիկեանը. ես լսեցի մեծ Ինկվիզիցիօրից իրանից, որ ինձանից ոչինչ չէ թաքցնում։

— Ուրեմն, Պ.ատուած իմ, աղաղակեց Ֆոլօրէսը առաջուանից աւելի վրդովուած. հիմի մենք ի՞նչ պիտի անենք։ Պ.խրը մենք դեռ ոչինչ էնպէս բանի ձեռք չենք տուել, որ կարողանայ ազատել հօրս . . . . . .

— Այ. մինչև հիմի ոչինչ հնարքը էլ չըկար անելու, պատասխանեց Յոզէն։

— Լաւ. բայց հիմի՞, հարցրուց Ֆոլօրէսը։

— Հիմի մենք կ՚աշխատենք նրա համար վկաներ գտնելու. միմիայն էս հնարքը կարող է նրան փրկել։

Ֆոլօրէսը մի ցոլքի չափ մտածեց, և ասաց Յոհան Պ.ուիլեանին՝

— Այդը իմ, դուք կըհամաձայնի՞ք վկայ լինել։

— Դ՝ հարկէ, պատասխանեց Յովհանը. և դու ազջիկս, ոչ ինչ բանի համար մի՛ նեղանար. մենք ամէն հնարքը գործ կը դնենք. մենք ամէն բանը կ՚անենք, ինչ որ կարող ենք։

Երբ որ Հոլօրէսը միայն իրա հօր վրա մառնելով, ականջ էր դնում իրա պաշտպանի խօսքերին, Լուզէն դուրս կանչեց Լասուելանին այդին, և ասաց նրան՝

— Հոն Լասէլան, վկայութիւնով մենք չ՚ենք կարող ազատել Բ.ըզօզը Կոմսին. պէտք է մառնել ուրիշ հնարք։

— Ուրիշ հնարք ես չըգիտեմ, պատասխանեց Լասէլանը, վախենալով յայտնել իրա ծածուկ միտքը բոլորովին իրան անծանօթ մարդուն։

— Բայց, շուտով հարցրուց Հոմինիկեանը, եթէ էդ հնարքը չի՞ ներդործել, էն ժամանակը ի՞նչ անենք։

Լասէլանը պատասխան չըտուեց։ Լուզէն բռնեց նրա ձեռը, ուժով Հ՝խառեց և ասաց՝

— Դուք ինձ չի՞ք հաւատում, Հոն Լասէլան, բայց սխալում էք։ . . Մէկ անգամ մեծ Ինկվիզիցիօն տանից դուրս գալիս ես Հանդիպեցայ ձեր նշանածին. նա յուսահատած էր և ուզում էր խնդրել Բ.ըռուէսին իրա հօր համար. . . . Դուք դիտէք, թէ էստուրից ինչեր կարող էին դուրս գալ. . . Նա նրան ազատեցի էն բաներից, ես տուի նրան ապաստանարան իմ տեղհալան տան մէջ, ուր պահում եմ իմ հարազատ քուրը պէս։ Հիմի ես ուզում եմ ազատել նրա հօրը։ Ես ի՞նչ կարող եմ անել ձեր մտերմութեանը արժանանալու համար. ուրեմն ինչի՞ էք կասկածում ինձանից։

— Դուք Հոմինիկեան էք, պատասխանեց Լասէլանը չը թաքցնելով իրա խոսքերի կարծիքը։

— Ես միայն շորերով եմ Հոմինիկեան, իսկ հոգով բոլորովին ուրիշ եմ, պատասխանեց Լուզէն։

— Կարելի է, պատասխանեց Լասէլանը. ամէն բանը տոպում է հաւատալ ձեզ. ձեր երեսին գրած է սրտի պարզութիւն, ձեր խօսքերը լիքն են մեր վրա ունեցած կարեկցութիւնով. բայց . . . բայց մեղաւորը եմ ես, որ հիմի Լասանիսումը շատ սրտակից բարեկամին էլ չի կարելի հաւատալ։

— Տես, Յովհան Բ.ելլեանը ինձանից չըկասկածեց. . . .

— Հիմի ես էլ չեմ կասկածում, պատասխանեց Լասէ-

վանը, ձեռք տալով Ռոմինիկեանին։

— Եթէ էզպէս է, Ռոմ Յատէվան, ուրեմն ասացէք ինձ յայտնի, ի՞նչ հնարքը պէտք է բանեցնէք դուք, եթէ մեզ չը յաջողի վկայութիւնով աղատել Աբգօղ Կոմսին։

— Սուտ, չըգիտեմ, ասաց Յատէվանը երկմտելով։

— Հնարքը կայ, շտապով պատասխանեց Ռոմինիկեանը. պէտք է հաւաքել ռամիկ ժողովրդին և նրանց օգնականութիւնը աչքս - դա - ֆէի ժամանակը գաւառապետի Հանդապարհը կտրել և . . . . Ինկվիզիցիային ապանել։

Յատէվանը երկմտուբ մոտիկ տուաց նրան. Լյոզէն հասկացաւ, որ վերջապէս կարողացաւ իմանալ Ռոլոբէսի նշանածի խորհուրդը։

— Այդ հնարքը, ասաց Յատէվանը վերջը ինչ լռելից յետոյ, կարող է լաւ լինել վերջին ծայրը հասնելիս . . . .

Լյոզէն տեսաւ, որ Յատէվանը կատարելապէս չէ՛ հաւատում իրան, և թէ էս բոպէիս հնարքը չըկայ բոլորովին յաղթել էս երկրայութեանը, ասաց նրան մեղմական կարեկցութեամբ՝

— Ռոմ Յատէվան, ինչ որ պատահի, յուսացէք ինձ վրա. իմ մտերիմ բարեկամութեան վրա։

— Շնորհակալ եմ. բարեկամութիւնը հաստատում է ոչ թէ խօսքերով, այլ գործքով։

— Պատցոյցները կը լինին. Այն պատերազմումը, որ մեր առաջին է, կարելի է ես կը զոհեմ իմ կեանքս, և էն ժամանակը դուք ինձ կը հաւատաք։

Այս խօսքերից յետոյ նրանք վերադարձան սենեակը, ուր թողել էին Ռոլոբէսին, Աբժատլեանին և Լուսանոյին։ Յատէվանի սիրտը սաստիկ լքցուած էր։ Նա, համարեա՝ թէ պատրաստ էր յայտնել Ռոմինիկեանին բոլոր իրա դաղտնի դիտաւորութիւնները. բայց յանկարծ լսուեցաւ դրան սաստիկ ծեծելու ձայն։

" Ինչ դաւաճանութիւն են արել,, մտածեց Յատէվանը։

Յովհան Պէլեանը սուր աչքով մոտիկ տուաց Լյոզէնի, երբու ուղելով իմանալ, թէ ինչ է անցկնում նրա սրտի մէջ. բայց Ինկվիզիցիայի սիրելի երեսին ոչինչ վրդովման նշան չը կար։ — Լսուանան բաց արա գուռը, և ներս մտաւ Կոկօն, որ ամէն երեկոյ գալիս էր Ռոմինիկեանի մօտ հրամաններ ստանալու։ Նրան տեսնելիս բոլոր կարծիքները փոփոխեցան։

— Ո՛նչ նոր հաւքաւ կայ, իմ բարեսիրտ Կոկօ, հարցրուց Լյոզէն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясницяна
Ս. ԱՆՎԱՆ

— Հայր իմ, երկբայութեամբ պատասխանեց Կոկոն, պարոն Ադրոզոս Կոմսը . . .

— Պէտք է վաղը չէ, մեւս օրը ներկայանայ դատարանը, ասաց Խոզէն. էդ ինձ յայտնի է. ուրիշ ինչ գիտես։

— Ինձ կարգեցին պահպանելու բանտին, պատասխանեց Կոկոն։

— Օ՛, աղաղակեց Գոլոլէսը, ուրեմն դուք կարող էք . . . .

— Ես մենակ չեմ ըլնի, պատասխանեց պանդուկապահը, հանկարելով նրա մտքը։

,, Եթէ էդպէս է, մռայեց Գոլոլէսը, եթէ ոչանցից ոչոք չէ կամենում նրան ազատել, ես կըսիրձեմ ,,։

Ֆրանչիսկեանը պատրաստուեցաւ գնալու։

— Գոլոլէս, դառնց ասաց Յատէվանը իրա նշանածին. կամ ես կըմեռնիմ, կամ կ՚ազատեմ քու հօրը։

— Ստուած վարձատրէ ձեզ ձեր հոգւոյ բարութեան համար, պատասխանեց Ջահիլ աղջիկը։

— Գնում եմ, ասաց Ֆրանչիսկեանը, ղդուշ կացէք, էստեղից դուրս մի՛ գնաք և բոլոր յոյսդ դէր քու բարեկամների վրա։

Գոլոլէսը, չըկամենալով ոչինչ խոստանալ, գլուխը կռացրուց և պատասխան չտուեց։ Իրա նշանածի հետ մնաք բարով ասաց միայն մտիկ տալով։

Տունից դուրս գալից յետոյ Յատէվանը, Խոզէն և Պարժապետը գնում էին միասին մինչև Տրիանի կարմունջը. Կոկոն գընում էր նրանց ետևից փոքր ինչ հեռու։

Կարմունջի մօտ Գոմինիկեանը բաժանուեցաւ իրա ընկերներից, մին քանի քայլ յետ գնաց և երբ պանդուկապահը հասաւ նրան, ասաց՝

— Կոկո, Գոն Յատէվան դէ Պարդոսի վրա աչք պահէ, և հէնց նա մին բանի ձեռք տայ, իսկոյն՝ ինձ իմաց արա։

— Ինչի՞ն է պէտք ձեզ, հայր իմ, հարցրուց Կոկոն փոքր ինչ վրդոված. այսինքն սրանից նրա համար ոչինչ վատ բան չի՞ դուրս գալ . . . . . ախբը նրան, գիտէք, շատ սիրում է վարժապետը . . . . Գոն Յատէվանը համարեա՞ թէ նրա որդին է . . . . . .

— Քո կասկածանքները՝ ի զուր են, իմ բարեսիրտ Կոկո։ Մինթէ ոքմինի գոնեա՞ փոքր վատութիւն արել եմ։

— Օ՛, դուք հրեշտակի հոգի ունիք, պատասխանեց Կոկոն, և ես կըկատարեմ ձեր հրամանը։



III.

ԻՆՉ ՊՈՒՐԲՈՅ ԴԻՆ ԴԻՏԱՊԻՆԱՊԵՐՈՒՄ·

Ուրեգակը նոր ծագել էր երկնքումը և նրա առաջին Հառաջդայթները նոր սկսել էին ոսկեզօծել Սիերրա—Մօրենայ սարերի գլուխները, երբ որ Սիերրի ամենից բարձր գագաթներից մինի վրա, որի անունը է Պուերտօ Դէտապէնապէրրաս, ծանրաքայլ գնում էին վեր երկու Հանապարհորդներ, էն հեռաքերով, որ օձաձև ծռծռւում էր ըստ մեծի մասին մ Թին անդունդքների միջից, և շատ անգամ էնքան նեղ տեղերից, որ կարծես Թէ հալիւ մին եղջերու (ջէյրան) կարող էր անցկենալ։ Այրենի և սխուր էր էն ժայռերի տեսքը, որոնք շրջապատած էին նեղ Հանապարհը. միայն տեղ տեղ երևում էին նրանց վրա կարճ ծուռ սօսի ծառեր, որոնք տրտմագին կախ Թողել էին իրանց Հիւղերը դէպ 'ի իրանց ապառաժուտ պատուանդանները, և դեղին վարդի Թուփեր, որոնք կարծես Թէ բնութեան կամակորութեամբ երբեմն կախուած էին վէհերի զարհուրելի և մ Թագին խորութեանց վրա։

Այրջապէս Հանապարհորդները հասան տարի ծայրը և վատակեալ երկար և դժուար Հանապարհորդութիւնից նատեցան երանները դէպ 'ի Ուրևելքը։ Նրանցից մինը միւսից աւելի ջահել էր, բայց երկուսի դէմքն էլ միատեսակ սխուր, միատեսակ վեհ

էին։ Մոխիկ տալով էս Հանապարհորդների վրա մարդ խսկոյն կ՚ասէր, թէ նրանց ծանրացնում է տարաբախտութիւնը և թէ իսկապէս տարաբախտութիւնն է կապել նրանց իրարու հետ մոխիկ չը տալով նրանց տարիքի զանազանութեանը։ Սրանք էին Յովհան Ա։ Էլեանը և Յ։ Աստէվանը։

Մին քանի րոպէ հանգստանալուց յետոյ, զգալով թէ իրանց շնչառութիւնը հանդարտուեցաւ և ուժերը նորոգւում են, նրանք մոխիկ տուին չորս կողմը մանրաղնին աչքով, որով կարող է մոխիկ տալ արարչագործութեան աքանչելեաց վրա մեծն Տիեզերեան, որ աշխատում է հասկանալ էս աքանչելեաց գաղտնիքը։ Նրանց ետևից բարձրանում էր գարաւոր ձիւներով ծածկած յատկապէս Սիերրա — Մօրենայ անուանեալ սարի գլուխը։ Նրանց առաջը տարածուած էին Մանչի սխուր հովիտները, որանցից վոքր ինչ ձախակողմը կարծես թէ հակադրութեան համար տարածուած էին ձիթենիի անտառները, գեղեցիկ վազները և ծաղիկներով զարդարուած վարթամ Անդալուզիայի կիտրոնի թուփերը։ Ետևից երևում էին Սիերրա — Նեվադայ, Սիերրա — Նէվէրայ և Ալպուխարասեան բարձունքը՝ գագաթը էն անմերձենալի սարերի, որոնք իրանց ապառաժուտ կոյտերով շրջապատում են երկու Կաստիլիան։ Մէկ խօսքով, էն սարի վրայից, որի դլխին նստած էին մեր Հանապարհորդները, նրանք տեսնում էին իրանց աչքերի խապանիայի մեծ տարածութիւնը։ Բայց էս տեսարանը նրանց չ՚էր ուրախացնում. նա նրանց միտքը բերեց էն բոլոր տառապանքները, որոնք ծանրացած էին նրանց գեղեցիկ հայրենեաց վրա։

Նրանք չ՚էին խօսում. նրանց լռութիւնը երկար քաշեց. վերջապէս Ֆրանչիսկեանը սկսաւ խօսել։

— Ահա մեր Հանապարհորդութեան նպատակը, ասաց նա, ցուցանելով հեռուն, ուր նա մատց աչքով տեսնում էր իրանց նպատակը։

— Աստուած իմ, Աստուած իմ, պատասխանեց Յ։ Աստէվանը. կը հասնենք մենք արդեօք իրա ժամանակին . . . կը յաջողի՞ մեզ արդեօք շարժել թագաւորի սիրտը։

— Յոյսդ մի՛ կտրիր, որդեակ. ինչի՞ պէտք է վաղօրօք յուսահատիլ։ Աստուծոյ ձգտումը միշտ ճնշում է դործի յառաջադիմութեանը, և յաջողութիւնը կարելի է միայն էն ժամանակ, երբ որ մարդս վարում է զգուշութեամբ և համբերութեամբ. իսկ

անհանդուրժողականությունից, գուշակություններից և ակնկալությունները միայն հոգին է թուլանում։ Սրիտախիստ մարդը առանց երկիւղի և առանց շտապելու ապրում է գալիքին։ այսպիսի մարդը շատ անգամ կարծում է անդգայ. սակայն նրա կարծեցեալ անդգայությունը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արիություն . . . .

— Օ՛ հայր իմ, ասաց Լասալլանը վշտացած դէմքով. Ձեր խօսքերը միայն ցոյց են տալիս՝ ինձ, թէ դուք, հրաժարեալ աշխարհի ուրախությունները, կարիքից էլ չէք լինում մարդկությունն վնասելու. թէ դուք կենում էք մարդկերանց մէջ էնպէս, ինչպէս թէ բոլորովին մենակ էք աշխարհքում . . . . . .

— Սխալում ես, որդեակ, պատասխանեց Ֆրանչիսկեանը հեղությամբ. ես ընտրել եմ իմ այժմեան կարգը, ոչ թէ մարդկանց չարչարանքներից հեռանալու համար, այլ աւելի նրանց մոտենալու համար։

— Այո՛, հայր, ես ընդունում եմ, ես մեղաւոր եմ ձեզ մօտ, ներեցէք ինձ . . . . բայց էդպէս են արդեօք բոլոր ձեր կարգակիցները . . . .

— Ամենքն էլ նրա ոտից քաշ կ՚անեն, և պէտք չէ՛ տրտնջալ, այլ պէտք է հնազանդիլ Նրա անխնամելի հրամաններին, Որի ամենակարողությունը այսպէս ակն յանդիման երևում է ամէն տեղ։ Մեր միտքը շատ անգամ չի՛ հասնում էս հրամանների մեծությանը և բարի նպատակին. բայց նրանք ամէնքը տանում են դէպ՚ի էն նպատակը, որ նախանշանակած է Յաւիտենական Իմաստությունից։

Լասալլանը միտքը ժամանակ չէր խօսում ջերմեռանդությամբ մոխիկ տալով էրա ուղեկցին։ Նա էս ըսպէին միտքը բերաւ Ֆրանչիսկեանի անցեալ կեանքը. միտքը բերաւ թէ էս չնաշխարհիկ մարդը էրա պատանեկությանն և ծաղկեալ դեղեցկությանն հատակումը հրաժարուել է հարստությունից և աշխարհքի բոլոր վայելչությունները միայն մերձաւորներին լաւություն անելու համար։

«Քիչ քիչ Լասալլանի միտքը դարձաւ ուրիշ առարկայի վրա և ասաց վարժապետին՝

— Էս օր հինգ օր է, որ մենք Հանապարհումն ենք. այլ Մադրիտը դեռ հեռու է։

— Մենք շատ քիչից ունիմք էլի մին շաբաթուայ Հանապարհ, պատասխանեց Վարժապետը։

— Այս էս միջոցումը, կարելի է, Ադրոզոյ Կումը կըկորչէ.

— Այդ մասին կարօղ ես հանգիստ լինել, որդեակ. սովորաբար Անկվիզիցիան շուտով չէ մատնում իրա զոհերը կորստեան. նա սիրում է երկարաձգել իրա մեղապարտների պատիժը, էնդուր որ ինչքան նրանք աւելի են տանջւում բանտերումը, էնքան նա աւելի համ է տեսնում նրանց տանջանքից. նա իրա կանոնը չի՛ փոխել։ Այց — ասաց նա տեսնելով, որ մօտենում են իրանց բեռնած ջորիների հետ եկող ծառաները, որոնց նրանք թողել էին սարի տակը —, ժամանակ է, գնանք. դեռ շատ ճանապարհ ունիմք։

Գրանք վերկացան իրանց տեղից և ծառաների հետ միասին սկսան սարից ցած գնալ ձախուձուռ և վտանգաւոր նեղ ճանապարհից, որի փոխարէն հիմի շինած է լայն և ընդարձակ ճանապարհ։

IV.

ԻՆՉՊԻՍ ԿԱՌՈՒՑՎԵՑ ԳԵՂԱՊԱՐՏԵՐԸ։

Այդ տխուր օրը, օր Անկվիզիցիայի առնակալութեան։ Բացուեցան էն դահլիճի դռները, ուր սովորաբար կտրւում էր Անկվիզիցիայի գահերի վճիռը։

Այս լայն քառանկիւնի դահլիճի պատերը պատած էին սեաւ շալերով. դահլիճի մէջ տեղը դրած էր երկայն, կիսաբոլորաձև տրապէզ նեղնապէս ծածկած սև շալով. տրապէզի եռևը սեաւ թաւիշեայ ամպհովանիի տակ դրած էր մեծ Անկվիզիթորի աթոռը պատած սև թաւիշով։ Այս աթոռի մօտ փոքր ինչ ցածը դրած էին էլի երկու սև աթոռներ երկու Անկվիզիթոր – խորհրդականների համար, իսկ ամպհովանիից բարձր՝ պատի վրա քաշ արած էր պղնձեայ խաչելութիւն. տրապէզի վրա ատենապետի աջ կողմը դրած էր փոքրիկ զանգակ, ձախ կողմը բաց արած Աւետարան, իսկ երկուսի մէջ տեղը մին թեթի ապիտակ թուղթ, որի վրա մեծ Անկվիզիթորը գրում էր իրա նշանները։

Խաչելութեան դէմուդէմ տրապէզի միւս կողմումը դրած էր մեղապարտների նստարանը։ Այս նստարանը էր եռաձայր կոճղ, որ կանգնեցրած էր սուր ծայրերը դէպ՝ի վեր չորս ոտքի վրա, որոնք կցած էին իրարու հետ այսպէս XX. էս սուր ծայրերի վրա նստում էին մեղապարտները։ Երբեմն ստիպմամբ կամ ասել տա-

լու Համար նրանց ջոքեցնում էին կոնձղի վրա երկու և երեք ժամի չափ։ Ուրեմն հատեղ էր չարչարանքի սկիզբը։

Մեծ Ինկվիզիցիոն օրը արդէն նատած էր իրա տեղումը։

Ինկվիզիցիոն օր—Խորհրդականները նմանապէս նատած էին իրանց աթոռների վրա։ Սրանք էին մարդիք, որք չըգիտէին, թէ ինչ է կարեկցութիւնը և թէ ինչ է էն տանջող կասկածանքը, որ վրդովում է արդարասէր դատաւորին վէճիւռ տալու բոլէ ին։ Սրանք միայն մին բանից էին վախենում — դատապարտելի անմեղութիւնը խոտոլանելու կարիքից. և էնդուր Համար նրանց աչքումը ամբաստանեալները, Համարեա թէ, միշտ մեղապարտ էին։

Մեծ Ինկվիզիցիոնի դէմքը զայրագին էր, նրանց երեսին գրած էր կենդանաւոր հեղութիւն։

Տրիբունալից վոքր ինչ հեռու նստոտած էին բաղմաթիւ զանազան կարգի հոգևորականները, որոնք ասելիքաբարներկայ էին գըտնըւում ատենակալութեան ժամանակը, և մին քանի Ինկվիզիցիոնի մտերիմ ելևելի մարդիք, որոնց Աստուծոյ յատուկ հրաւիրել էր էն պատճառաւ, որ էս անգամին պէտք էր դատել ոչ թէ հասարակ մարդու, այլ հերետիկոսութեան մեջ ամբաստանեալ մեծ ասոյնանաւորի։

Մեծ Ինկվիզիցիոնի աթոռի մօտ աջ կողմը կանգնած էին սրիններ և չորս դիմակաւոր մարդիք սև շորերով և սև վերարներով, որոնք ծածկում էին նրանց դէմքը և երեսները, և որոնց վրա ծակեր էին բաց արած միայն աչքերի, քնթի և բերնի համար։ Վերջապէս Ինկվիզիցիոնի աթոռից վոքր ինչ հեռու ձախ կողմումը նստած էին ուրիշ տրիբունի առջև երկու սեկրետարներ, որոնք ասելիքաբար գրում էին մեծ Ինկվիզիցիոնի հրամանները և հարկաւոր իլած տեղը մեղապարտների պատասխանները։

Դահլիճումը թաղաւորում էր զարհուրելի գերեզմանական լռութիւն։ Այս տեսց քառասան երկար ժամանակ և վերջապէս լսուեցաւ ոքմինի թեթև ոտքի ձայն։

Ամենքի աչքերը դարձան դէպ 'ի էն դուռը, որ կողմից լսուեցաւ ոտքի ձայնը։ Դուռը ծանր բացուեցաւ և ներս մտաւ երկու սրիններ հետ մեղապարտը։

Ետ երևութին նա կը լինէր յիսուն տարիկանից աւելի, բարձրահասակ, լաստած և ցամաքած մարդ. նրա մազերը, երբեմն սև, հիմի կէսից աւելի սպիտակ էին, և նրա դեղնած, պարզ և

ազնիւ երեսի վրա երևում էր խարին թախծութիւն։

Նա կամաց մօտեցաւ վերոյդրեալ եռածայր կռնգի մօտ և տեսնելով որ իրա ջուրս կաղմք ուրիշ ոչ ոռ չըկայ, դառնութեամբ ժըպտեցաւ և նստեցաւ մեղապարանների նստարանի աւր ծայրի վրա. յետոյ նա հանդարտ առանց փոքր ինչ վրդովմանն բարձրացրուց գըլուխը և մակի տուաւ մեծ Ինկվիզիթօրին էնպէս աչքով, որով կարծես թէ կամենում էր թափանցանել նրա սրտի մէջ։

Ս.ըրուէսի տեղ ուրիշը աչքերը վեր կըթողներ էս փորցող հայեցուածքի առջևը. բայց Ս.ըրուէսը յաղթեց իրան ամենևին չըփոխելով իրա կերպարանքը, և հաստատ և աւր ձայնով ասաց՝

— Դատապարտեալ, վեր կաց տեղէդ և երդուիր աւետարանի վրա, թէ կ՚ասես բոլոր ճշմարտութիւնը։

Դատապարտեալը վեր կացաւ նստարանի վրայից, մօտեցաւ տրապիզին և մէկ ձեռքը դնելով աւետարանի վրա ասաց նմանապէս հաստատ և աւր ձայնով՝

— Երդնում՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ի վերայ սրբոյ Աւետարանի նորա, թէ ոչ թաղուցից ինչ, և ասացից զճշմարիտն։

— Ինունդ ի՞նչ է, շարունակեց մեծ Ինկվիզիթօրը։

— Պօղոս Յովակիմ Մանուէլ Ս.ըգօզօ. — Կոչմամբս Կոմս Յեւալլոս, Խապանիոյ Գրանդ (իշխան) երկրորդ կարգի և Սրբին Մեծութեան մեր Թագաւորի կամքով Կառավարիչ Սեվիլիոյ։

— Քո տիտղոսները համբել հարկաւոր չէ. դու էլ չ՚ունիս իրաւունք նրանց գործ ածելու։

Ս.ըգօզօ Կոմը մէկ խօսք էլ պատասխան չըտուաւ, բայց նրա դէմքի վրա երևեցաւ աբհամարհանք։

— Քանի՞ տարեկան ես, մե՛ղապարտ, հարցրուց Ս.ըրուէսը։

— Յիսուն, պատասխանեց Սեվիլիոյ նախկին կառավարիչը։

— Մանուէլ Ս.ըգօզօ, ծանր և առաջնայ պէս բարձր ձէնով շարունակեց Ս.ըրուէսը. Մանուէլ Ս.ըգօզօ, դու մեղապարտեալ ես էնդրով, որ ընդունելով քո տուն անսուրբ և հերետիկոս տոհմից առաջ եկած մին երիտասարդ, և որի կարծիքները անհամաձայն են կաթոլիկական եկեղեցւոյ,—իմաց չըտուիր նրա համար։

— Չեմ հասկանում, հանդարտ պատասխանեց Ս.ըգօզօ Կոմը, չ՚եմ հասկանում, ձերդ սրբազնութիւն, ում համար էք խօսում դուք։

— Հերետիկոսի համար իմաց չըտալ, նշանակում է հերե-

[illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

Խորհրդականները զարհուրանաց շարժմունք ցոյց տուին և կեղծաւոր հեզութեամբ աչքերը բարձրացրին դէպ 'ի վեր։ Այս նրանց սովորական շարժմունքն էր էսպիսի ժամանակում։ Այս միջոցում սեկրետարները գրում էին մեծ Ինկվիզիցիոնի հարցմունքը և Ադոլֆոս կոմսի պատասխանները։ Ադրուէսը չէր խօսում և կարծես թէ մտածմանց մէջ էր մտել։ Բայց հարցմունքի էս տեսակ ընդմիջելը միայն էնդուրից իլաւ, որ Ադրուէսը տեսաւ, թէ անշուշտ հարկաւոր է թաքցնել իրա անձնական կիրքերը, որոնք իրա կամացը հակառակ սկսան երևել նրա հարցմունքի ձևի մէջ, և առնել իրա վրա էն կեղծեալ նուաստութեան և հեզութեան կերպարանքը, որոնք Ինկվիզիցիոնները սովորաբար գործ էին ածում դատապարտեալներին հարցնելու ժամանակը։

Այս նպատակին հասնելից յետոյ, մեծ Ինկվիզիցիոնը ասաց Ադոլֆոս Կոմսին՝

— Ձեզ կամակորութիւնը, որդեակ, ազդել է քեզ մարդկային հոգւոյ փրկութեան թշնամին, և ես սրտանց ցաւում եմ դրա համար։ Այս մին ժամանակ էիր իմ սիրելի եղբայր 'ի Տէր, և ես խնդրում եմ հիմի Նրա սուրբ գթութիւնից, զի առաքեցէ առքեզ զՀոգի զողջման և հեզութեան, զի դու հրապարակաւ մերժեցես զկորստական մոլորութիւնս և դարձցիս 'ի Ճանապարհն Ճշմարտութեան։

— Այո՛յ է ինձ Ադոնաւոյ, հանդարտութեամբ պատասխանեց Ադոլֆոս կոմսը, վկայ է ինձ Ամենիմաստ սրտագէտն Ադոնաւոյ, թէ ես չեմ ունեցել երբէք և ոչ մին կարծիք ընդդէմ վարդապետութեան Ադեատրանի, և թէ ես միշտ աշխատել եմ ամենայն զօրութեամբ կատարել նրա սուրբ պատուիրանները։

— Սակայն դու խօսմ վի՞ղդ ես առնում, որդեակ, որ բարեկամ ես իլել մաւրի հետ . . . . . .

— Դոն Լուսէվանը մաւր չէ՛, ձերդ սրբազնութիւն. նա հէնց էնպէս կաթոլիկ է, ինչպէս որ ես և դուք, հա՛յր իմ։

— Ադոնաւոյ ամենակարող, աղաղակեց Ադրուէսը, կեղծաւորական երկիւղով. հոգին խաւարի կուրացնում է սրան, և սա հայհոյում է մեր սուրբ հաւատքը։

— Ձեր սրբազնութիւն, կամաց ասաց մեծ Ինկվիզիցիոր — խորհրդակիցը, սա խօսմ վի՞ղն է առնում, թէ բարեկամ է իլել դոն Լուսէվանի հետ, ուրեմն . . . . . .

Մեծ Ինկվիզիցիոնը գլխով նշան տուեց լռելու թէ՝ գիտեմ և միտքս կըպահեմ։

— Ողորմա՛ծ, ասաց նա յետոյ դատապարտածին։ Մի՛ թէ էն էլ վիզդ չ'ես առնիլ, որ աղջկանդ մնուցել ես կաթոլիկական հաւատոյ հոգւոյն հակառակ կանոններով, և թէ էդ քո աղջիկը սեպհականել է իրան էն հոգեկորուստ ուսումը, որ հիւսիսից մեր միջն է նեղս մտել և որ կոչւում է փիլիսոփայութիւն։

— Այդ չ'եմ առնում, պատասխանեց Ս.ղբոզօ կոմսը։

— Կարող ես ապացուցանել, թէ ասածդ ստա չէ։

Ս.ղբոզօ կոմսը լուռ շուռ եկաւ հոգեորականների և ազնուականների կողմը, որոնք հաւաքուած էին ատեանը, և տեսնելով ազնուականների մէջ մին քանի մօտիկ ծանօթներ, որոնք շատ անգամ իրեր էին նրա տանը, ասաց նրանց՝

— Ձեզանից, պարոնայք, իմ տանս ոչինչ ծածուկ չըկար. դուք գիտէք, որ ո՛չ ես, ո՛չ իմ աղջիկս չենք հեռացել աւետարանի վարդապետութիւնից. ուրեմն ձեզանից ո՞վ կըհաստատէ, ո՞վ կը վկայէ իմ խօսքերիս ճշմարտութիւնը։

Պատասխան չըկար . . . ո՛չ ոք մոլիկ չըտուեց մեղադրածին, ո՛չ ոքի դէմքումը կարեկցութեան և խղճալու շուք էլ չ'երևեցաւ։ Ս.ղբոզօ կոմսի մէջքը կոտրուեցաւ։ Ինքնամոլի յուսահատութեամբ նա մոլիկ տուեց մեծ Ինկվիզիցիոնին և աղաղակեց՝

— Բայց դուք, հայրը իմ, դուք համարեա՛ թէ ամենայն օր գալիս էիք իմ տունը և ձեզ աւելի, քան թէ ուրիշներին յայտնի են իմ և իմ աղջկայ զգացմունքները։

— Ես նրա խոստովանահայրը չ'էի, ասաց պատասխանեց Ս.ռբուէսը։

— Ուրեմն, ասաց Ս.ղբոզօ կոմսը աղերսալի ձէնով, Գ.ոլոբէնն էլ մեղադրատած է հերետիկոսութեան մէջ, ուրեմն նա՞ էլ բանտումն է . . . Ո՞վ, հայրը իմ, հայրը իմ. . . . . .

— Իմն խօսքը քո աղջկայ յանցանքի վրա չ'է, այլ. քոյ անձնական յանցանքի վրա է, Ս.ռանուէլ Ս.ղբոզօ, պատասխանեց մեծ Ինկվիզիցիոնը գիտութեամբ աշխատելով երկարացնել Ս.ղբոզօ կոմսի կասկածանքը աղջկայ մասին. ուրեմն յանձդ ա՛ռ քո յանցանքը, եթէ ցանկանում ես արժանի լինել ողորմութեան Տեառն և նրա սուրբ եկեղեցւոյ։

Ս.ղբոզօ կոմսը լուռ կացաւ մին քանի րոպէ. նրա աչքը կար-

ձեռ թէ հարցնում էր մեծ Ինկվիզիթորի մասին տալից. նա աշխատում էր հասկանալ Ս.ըրուէսի երեսից Հոլօրէսի համար պատրաստած վիճակը. բայց Ինկվիզիթորի դէմքի վրա պատասխան չը կար, այլ երևում էր միայն խառաստութիւն կիսատ ծածկուած կեղծաւոր բարեպաշտութեան դիմակով։

— Իմ աղջի՛կը, ասաց յեսոյ Ս.ըդօզօ կոմսը աղերսական ձայնիւ, ո՞ւր է հիմի իմ աղջիկը . . . ա՜հ, երդմնեցուցանում եմ ձեզ, երդմնեցուցանում եմ երկնքի անուամբ, պատասխան տուէք ինձ, հաւատացրէք ինձ, թէ նա վտանգներից ազատ է, և ես համբերութեամբ կըտանիմ բոլոր չարչարանքը . . . . . .

— Մանուէլ Ս.ըդօզօ, պատասխանեց Ս.ըրուէսը, հիմի ժամանակը չէ միտք անելու մարմնաւոր կապակցութեանց համար. քո մեղաւորների վիճակը յանձնէ ամենաբարի նախախնամութեան Տէրունը և մտածէ միայն քո հոգւոյ փրկութեան համար։

Թէպէտ էս խօսքերը ասուեցան կեղծեալ հեզութեան ձէնով, բայց Ս.ըդօզօ կոմսը հասկացաւ, թէ էլ ո՛չինչ յոյս չըկայ մեծ Ինկվիզիթորի անողոքելի ատելութիւնից։

,,Ո-ըեմն եղիցին քոմֆ Տէուռ»։ մտքումը ասաց նա մարտիրոսական քաջութեամբ գլուխը կռացնելով իրա կուրծքի վրա։

— Ոդեակ իմ, շարունակեց Ս.ըրուէսը, աւելի հեզ ձայնով, գոնեա՛ յանձդ առ, թէ քեզ փորձութեան մէջ է գցել չար հոգին, որի որոգայթներից մենք էլ երբեմն չենք կարողանում փախչել, թէ և մեր խորհուրդները ամենևին սուրբ են . . . . յանձդ առ, սիրելի որդեակդ իմ 'ի Քրիստոս, թէ նրա պատրանքները կուրացրել են քեզ, և մենք թեթևացնելով քեզ համար երկրաւոր տանջանքների խստութիւնը, կ'աշխատենք փրկել քո հոգին յաւիտենական կորուստից։

Ս.ըդօզօ կոմսը պատասխան չըտուեց։

— Խնդա՛, մոլորեա՛լ եղբայր, ասաց մեծ Ինկվիզիթորը. էնդուրից էլա մի՛ յուրատ լինիր, որ պաշտպանել ես էն կանանները, որոնցով լուտերական հերետիկոսութիւնը ամենայն տեղ մոլորեցնում է թերահաւատներին ուղիղ Քանապարհից։

— Ինձ յայտնի չէ, թէ ինչ է լուտերական ուսումը, պատասխանեց Ս.ըդօզօ կոմսը. ես երբէք չեմ աշխատել դիտենալ նրան . . . . բայց եթէ նա իսկապէս այդքան շատ հետևողներ ունի, ինչպէս դուք էք ասում, ուրեմն էդ ուսերը պէտք է մեծ

մարդ լինի։

Այս համարձակ պատասխանի ժամանակը միւս հոգևորականները և աշնուականները, որոնք հրաւիրուած էին հարցմունքին ներկայ լինել, սարսափեցան։ Քանի՞ տեսան, որ մեծ Ինկվիզիցիոնի աչքերումը վայելեցաւ դաժան ուրախութիւն, և հասկացան, որ դատապարտելի վերջին խօսքերը նրա վճիռը կտրեցին։

— Ամբարիշտ, ասաղակեց Ասրբուէսը . . . հայհոյեաց . . . Եւ իրա մտքումը, ասաց՝ ,,ինքը տուաւ իրա մահուան վճիռը ''։

Ինկվիզիցիոնը — խորհրդակիցները իրարու մոտիկ տուին։

— Ուրեմն, շարունակեց Ասրբուէսը, ճշմարիտ են մեղադրումը քեզ, թէ դու թագուն հեռևում ես լուտերական հերետիկութեան, և ընդունում ես Լուտերին՝ Քրիստոսի թշնամոյն, իբրև արժանաւոր մեկնիչ նրա հրամանքներին։

— Ինչպէս կարող եմ հեռևել էն վարդապետութեանը, որ ինձ ոմանելին յայտնի չէ. և ինչի՞ համար ես նրան նախապատիւ կը համարեմ էն դաւանութիւնից, որի մէջ մնում եմ և որը ես պատում եմ բոլորով սրտիւ։ Այդ եթէ ինձ մեղադրա՞ն են հանում էտուրումը, ասացէք ինձ՝ ո՞վ է ինձ մեղադրողը, և ես նրա առաջը կը հաստատեմ։

— Քանի անունը տալ մինք չ'ենք կարող. էդ բանը մեղ արդելում է մեր կանոնադրութիւնը։ Բեզ, որդեակ իմ, մնում է միայն յանձն առնել և զղջալ քո մեղքերը. եթէ ոչ՝ դու անպարտ կը կորցնես քո հոգին . . . . . .

— Ես ոչինչ բան չ'ունիմ յանձն առնելու։ Ես կարող եմ միայն խնդրել Աստծանից, որուն յայտնի է իմ անմեղութիւնը, որ նա կակղեցնէ իմ դատաւորների սիրտը. Եւ ո՞վ ուզում է լինի իմ մատնիչը, ես յայտնում եմ էստեղ մեր Փրկչի պատկերի առջևը, թէ էդ մատնիչը զրպարտող է ինձ և իմ ազգիցն։

Ես խօսքերից յետոյ Ասրգօզ կոմսը ոչ մին հարցմունքին պատասխան չտուաւ. նա նստած էր մեղադրիչների դէպքանի վերայ գլուխը կախ և լուռ։

— Տարաբաղդ, ասաց վերջապէս մեծ Ինկվիզիցիոնը. քո կամակորութիւնը հարկադրում է ինձ կատարել իմ պարտքը։

Ես ասելից յետոյ նա դարձաւ չորս դիմակաւորների կողմը, որոնք խաղական երևոյթներու պէս անշարժ կանգնած էին Ինկվիզիցիոնի աթոռի աջ կողմումը, և մատով ցոյց տուաց մեղադրեալ վրա։

Դահլիճի մեջ տիրեց խորին գերեզմանական լռություն. նրա մեջ չէր լսւում նստողների շունչն էլ, որոնք կարծես թե յանկարծ քարացան։ Իմաստասերները ծանր, առանց ոտքի ձայնի մոտեցան յանցաւորին, բռնեցին նրա ձեռքերից և տարան մի ուրիշ սենեակը։

V.

ԹՈՒՄԱ, ԶԱՐՄԱՐՄԱՆԵՐ։

Դիմակաւորները տարան, կամ աւելի լաւ ասել, քաղաքացին Աբդազ կոմսին բաւական երկար ժամանակ. նրանք անցկացան մին քանի երկայն, մութ կօրիդօրներից (սրահներից). վերջը իջան մի քանի ոլոր մոլոր նեղ սանդուխտներից, որոնց քարէ աստիճանները սրուած էին խոնաւութիւնից, վերջապէս հասան մի դեռնափոր տեղ, որ լուսաւորուած էր միայն երկու սև կերոններով։

Տխուր և զարհուրելի էր էս մթին գեռնափորը. նրա ծուռը և խոնաւութիւնից կոկած պատերի ջուրը վազում էր շատ տեղերից, և տեղ տեղ շարած կամ կախած էին տանջանքի գործիքները — Ֆոնտաինվիլի դժոխային գիւտերը, այսինքն՝ մէջը փուրած դերաններ, երկաթի ոռնամաններ, մեծ մեծ բևեռներ, հատ և բարակ թոկեր, և այլն. բաց յայտնանէ մին անկիւնումը դրած էր կրակարան (մանգալ) լցրած վառվռուն ածուխներով։ Էս գեռնափորի օդը էր խոնաւ, թանձր և դաշտահոտութիւնով լի։ Աբդօզօ կոմսը աչքերը խփած էր մինչև էնտեղ հասնելը. բայց երբոր հասկացաւ թէ իրա ուղեկիցները կանգնեցան, աչքերը բաց արաւ, և անհանգստութեամբ չորս կողմը մտիկ արաւ։ Տեսնելով տանջանքի գործիքները նա հասկացաւ թէ ուր են բերել իրան։

Վէր ժամանակից յետոյ պանջանոց տուն (այս էր էն գեռնափորի անունը) եկաւ Աբդուէսը ընկերութեամբ մին Ինկվիզիթօր — խորհրդական և պատրաստական հօտարի։

Այն բոլոր Աղբօղլօ կոմսը կանգնած էր պանջանոց պան մէջ առջևումը. Ինիվիզիայի ոստիկանները կանգնած էին նրանից փոքր ինչ հեռու։ Երբ որ Աղբուէսը ներս էր մտնում՝ Աղբօղլօ կոմսը հոգւոց հանեց, և աչքերը բարձրացրուց, իբրու թէ հայցելով երկնքից օգնութիւն։

Բայց նրա աչքերը խսկոյն համարեա թէ խոնարհցան, և ինքը ակամայ ստրուկիցու, որովհետև տեսաւ իրա գլխի վերև օձուրը մտած Ճախարակը, որի վրայից քաշ էր արած հատ թոկ։

Աղբուէսը և Ինիվիզիայի կառնադրութեան 18 յօդուածի զօրութեամբ նշանակած ընկերը Ինիվիզիա — խորհրդակիցը և պարպական հօտարը նստեցան նրանց համար պատրաստած աթոռները վրա։

Աղբօղլօ կոմսի վիճակը ընկաւ, թէ կարելի է իրա խեղճ Պօլօլէսի համար էլ պատրաստած էին նոյն տանջանքը, նոյն չարչարանքը . . . . . .

Օ՛, եթէ նա կարողանար չ՛արած յանցանքը վերին առնելով ազատել իրա աղջիկան, մէկ բոլոր էլ չէր ուշացնիլ . . . Բայց նա գիտէր որ էդ խստասիրութիւնը չ՛է վերկիլ, այլ կրկնացնէ նրան, և մարդումը կարակուն արաւ համբերել։

Պէտ Ինիվիզիա՝ նշան տուեց և տանջողները Աղբօղլօ կոմսին մերկացրին մինչև շապիկը։ Յետոյ Աղբուէսը վեր կացաւ իրա տեղից դանը քաշելով մօտեցաւ մեղադրանին և ասաց՝

— Ներմեցուցանեմ գքեզ, որդեակ իմ. գողջա՛ քո մոլորութիւններից, մի՛ հարկադրիր մեզ ակամայ գործածել էն խիստ միջոցները, որ հրամայած է Ինիվիզիայի կանոնները . . . . . .

Կոմս Աղբօղլօն պատասխան չը տուեց, բայց մարդ տուաւ մեծ Ինիվիզիա՝ այնպիսի հանդարտ անշարժ աչքերով, որոնք կարծես թէ ասում էին՝ պանջերդ՝ ինչ, ես չեմ վախենում ձեր պանջոցից։

— Կրկին երդմնեցուցանեմ գքեզ, շարունակեց Աղբուէսը իրա զարհուրեցուցիչ ստիպմամբը, բայց առաջուայ պէս կեղծեալ հեզ ձայնով, խոստովանիր քո մեղքը . . . . լսի՛ վերջապէս էն մարդկանց սրտերանդ խնդիրքը, որոնք քեզ վրա ունեցած քրիստոնէական սիրով ցանկանում են վերկել քո հոգին կորուստից։

— Ինչպէս կարող եմ ես յանձն առնել էն յանցանքը, որ

բոլորովին չ'եմ ասել, պատասխանեց մեղապարտը։

— Բեզանից չէ, որդեակ, այլ էն չարութեան հոգիից, որ քեզ բռնած ունի, ծառ
ում է էդ քո կամակորութիւնը։ Ասենք աղօթէ, եթէ կարաս, աղօթք արա՛ ինձ հետ միասին, որ ողորմի քեզ Աստուած, և լուսաւորէ քեզ գիտութեան և հնազանդութեան հոգւով . . .

Այս առնելից յետոյ մեծ Ինկվիզիցիոնը չոքեցաւ և իրրու թէ 'ի խորոց բեկեալ սրտիւ սկսաւ աղօթք անել, շուտ շուտ խիստ լով կուրծքին։

Մին քանի րոպէ աղօթք անելից յետոյ, նա վեր կացաւ և ասաց մեղապարտին՝

— Լուա՞ւ արդեօք Տէր զՋերմեռանդ աղօթս իմ . . . Հայեցա՞ն նա արդեօք ակամբ քաղցրութեան իւրոյ 'ի քո խոստովանութիւն, և կակղացա՞յ արդեօք զՀոգի քո . . . Մի՛ զուցէ քո մեղքը այնքան ծանր է, որ նա պաժուում է քեզ էս կեանքումն էլ, էն կեանքումն էլ։

— Իմ պատասխանը մի և նոյն է. ես ոչինչ չ'ունիմ յանձնառնելու, էնդուր որ իմ բոլոր կենացս մէջ ես յաջենոյն զօրութենէ հետևել եմ կատարել կաթոլիկական հաւատոյ կանոնները, որոնք մանկութիւնից տպաւորուած են իմ մտքումս։

— Ասենք անպարտ եմ ես, ինչ որ լինելու է՝ ասաց Աստուածը. վկայ է ինձ Աստուած, որ անպարտ եմ։ Ինքնասիրեցէք ձրան, ասաց նա Ինկվիզիցիայի ատաստարանին, Լոհիոլ պոնչանպի։ . . .

Աստուած կոմսի աչքերը ակամայ խոնարհեցան. նրա ակունջները սկսան ճէն տալ, բոլոր մարմինը սկսաւ դողալ, և վրէն տառը քրտինք եկաւ։

— Աստ տանջանքը դուք կը շարունակէք էնքան ժամանակ, մինչև որ մենք բարի համարենք գադարեցնելը, ասաց Աստուածը. և եթէ տանջելու ժամանակը պատահի մեղապարտին մին անդամի ջնասել, նա և մահ, էն ժամանակը մեղաւորը ոչ թէ դուք էք, այլ նա ինքը։

Էնից որ նա ասաց՝ պահիճները ընկան Աստուծոյ կոմսի վրա, կապեցին ձեռները քամակից էն թոկի մին ծայրովը, որ քաշ արած էր նրա գլխի վրա, բռնեցին թոկի միւս ծայրը, յանկարծ քաշեցին և բարձրացրին ողորմելի կոմսին մինչև օճառքը . . . յետոյ նոյնպէս յանկարծ վէր թողին նրան մինչև գետինը։ Աստ սաստիկ ցնցու-

մից Ադրոզո կոմսը ուշաթափ էլաւ։ Նրը որ ուշքի եկաւ և աչքերը բաց արաւ, գահիճները էլի էնպէս բարձրացրին և վէր Թողին։ Այս տանջանքը շարունակուեցաւ մին ամբող ջ ժամ.

Ադրոզո կոմսը ամենևին չըհառաչեց և ոչ ձայն հանեց. Նրա տանջուելը կարելի էր միայն էնդուրից լսանալ, որ նրա կուրծքը երբեմն լէնանում էր, երբեմն հուսկ էր գալի, և էնդուրից, որ նրա շնչառութիւնը նման էր մեռնող մարդոյ խռխռալու։

Նրբոր տանջանքը վերջացաւ և Թոկը յետ արին, նա անկենդան դէրոյ պէս վէր ընկաւ. Նրա աչքերը խաւարած և անկենդան էին, և կարծես Թէ խլուում էին յաւիտենական քնով. Նրա շապիքը արիւնոտ Թաղախ էր և պանջանոցի գեանի ցեխից կեղտոտած. Թոկից կտրտած ձեռների վրա բացուած էին վէրքեր և ասկորները երևում էին։

— Տարէք մեղապարտին իրա բանտը, ասաց Ադրուէսը գահիճներին. ուրիշ տանջանք էս անգամ չէ լինիլ։ Իսկ դուք, եղբայր իմ, ասաց նա Ինկվիզիցիօր — խորհրդականին, յիշեցէք սրան ձեր աղօթքումը։

Յետոյ նա գուս գնաց երկու հոգևորականների հետ. գահիճները տարան ողորմելի և համարեա Թէ անշունչ Ադրոզո կոմսին գեանատիրոջից։



VI.

ԲՆԱՎԱՅԻՆ ԿԱՑԱՐԱՆ ԲԱՆԱՏԵՐԸ։

Լոր կէս գիշեր։

Սեբաստիայի մէջ ամէնքը խորը քնած էին, բայց Ինկվիզիցիայի բանտի մէջ իլած վշտաստանները դեռ մաշուում էին իրանց զարհուրելի վիճակումը։

Ամենայնիւ նրանց հառաչանքները և աղաղակները թաղուած մնում էին նրանց խորը գետնափորներումը. և Ինկվիզիցիայի բանտի տխուր շինուածների չորս կողմը տիրում էր խորին լռութիւն։

Այս ժամանակումը զգուշութիւնը և կամաց կամաց մօտեցան բանտին մէջ Ռոմինիկեան և մէջ կէին։

Գիշերը այնպէս մութն էր, որ լրտեսն էլ չէր կարող տեսնել, թէ ինչպէս էին անց կենում տներու մօտից էս երկու մարդիքը սև շորերումը կօլօլուած։

Երբ որ նրանք մօտեցան բանտի դռներին՝ Ռոմինիկեանը խփեց դրանը մէջ անգամ մեծ բանալիքով, որ ձեռին բռնած ունէր, և դռները նոյն բոպէին բացուեցան հէնց կարծես դիւթական զօրութիւնով։

Դոմինիկեանը և կինը մոտն գանտը և դուռը խփուեցաւ ա-ռանց փոքը ինչ ձայնի. նրանց առաջը ոչ ոք չ'եկաւ, ոչ ոք նրանց լոյս չ'էր անում, թէ և խիստ մութն էր։

— Այս շատ վախենում եմ, Դոն Լյոզէ, ասաց կինը իրա-ղեկցին, շատ վախենում եմ . . .

— Ամենևին մի՛ վախենար, Դոլորէս, ես որ ձեզ հետ եմ, երկիւղ չքկայ։

Այդ էս խօսքերը Աբգօղս կոմսի աղջկանը չը հանդարտ-տեցրին. նրա սիրտը սաստիկ թրթռում էր, և նա բոլոր մարմնովը դողալով յետաւ Դոմինիկեանի կռանը։ Փոքը ինչ յետոյ Լյոզէն և Դոլորէսի մօտ երևեցաւ Ճրագի լոյս, և նրանց մօտեցաւ բան-տապահը զուգի լապտերը (ֆանար) ձեռին։

— Ո՞ւր էք կամենում գնալ, հայր իմ, ասաց նա մեծ Ինկ-վիզիցիայի սիրելոյն։

— Աբգօղս կոմսի բանտը, պատասխանեց Լյոզէն։

Բանտապահը մնաց տարակուսած։

— Ի՞նչ ես մնում, չը լսեցիր, ինչ է, հարցրուց Լյոզէն։

— Հայր իմ . . . Լմփմալով սկսեց խօսել բանտապահը, և յանկարծ դէմ ընկաւ։

Լյոզէն առանց խօսելու հրամայական նշան տուեց։ Այս նը-շանը իսկոյն բանը վերջացրուց, բանտապահը մաս բանտի նեքսեը, Դոմինիկեանը և Դոլորէսը գնացին նրա ետևից։

Բաւական երկար ծուռ ու մուռ Ճոնապարհներից անցկենալից յետոյ նրանք սկսան իջնել ծուռը սանդխաից, որ տանում էր դէպ 'ի գետնափորը, ուր մաշւում էին Ինկվիզիցիայի զոհերը։ Այս եր-կայն սանդխանների ծայրին նրանց երևցին վէց այնքան ծանր գաղ-շահատութիւն, որ Դոլորէսի երեսի գոյնը թռաւ և նա համարեա թէ ուշ թափի ընկաւ Լյոզէի կռան վրայ։

— Օ՛, ասաց նա յուսահատութեամբ, երբ որ փոքը ինչ ուշ-քի եկաւ, ի՞թէ էսպէս դժուար է շունչ քաշելը, ի՞նչ կը լինի էն տեղ, ուր կենում է իմ հայրիկս։

Այնչափէս նրանք իջան սանդխաից և մօտեցան հասան եր-կաթի դրան։

— Դառնիր, հայր իմ, ասաց բանտապահը, բաց անելով դուռը. և՝ երբ դուռը բացուեցաւ՝ նեքսեից դուս փչեց գարշահո-տութեամբ ապականուած օդ այնքան թանձր, որ նմանն էր մութի

— Դամբցէք, հայր իմ, շարունակեց բանտապահը տալով Յիսուսին իրա ձեռի լապտերը. միայն Աստուած կըսիրէք ոչինչ ձայն չըհանէք և երկար չըմնաք.

— Գնա՛ էստեղից և ապատէ տանդ-խտի մօտ մինչև իմ գալս, ասաց Յիսուսն հրամայական ձէնով, իսկ էդ խրատները պահէ ուրիշների համար։

Բանտապահը առանց խօսելու գնաց իրա համար նշանակած տեղը. Յիսուսն և Գողգոթան մոտն բանտը։

Այս նեղ և խեղդանոց բանդի մէջ (1) էնքան մութն էր, և լապտերի լոյսը էնքան նուազ էր, որ նրանք առաջի գումը ոչ ինչ չըկարողացան տեսնել. բայց երբ նրանց աչքերը փոքր ինչ ընտելացան էն լուսին, տեսան բանտի խորը անկիւնումը տախտ և նրա վրա մին մարդ, որ պառկած էր երեսը դէպ 'ի պատը և կարծես թէ քնած էր։ Այս մարդն էր Աբրիսոլ կումը։ Գա մէնակ էր բանտումը. նրա հինգ ընկերները մէկ մէկու ետևից մեռել էին տանջանքի մէջ։

Գողգոթան մօտեցաւ իրա հօրը, որ նրանց գալէց փոքր ինչ առաջ մոռացել իրա տանջանքը բոլէական թմրութեան մէջ, և կանդնեցաւ տախտի առաջը անպատմելի յուսահատութեամբ։ Օրթեցնել իրա հօրը նա չէր վատահանում. Յիսուսն նմանապէս չէր ուզում նրա քունը կոտրել. բայց տախտին մօտենալիս չըպէտեղնալով ոտը խփեց կաւէ փարչին և կոտրեց։ Այս ձայնը զարթեցրուց Կումին և նա շուռ եկաւ։ Գա էնքան դեղնած էր, որ էս բոլէին կարողացաւ Յանաչել նրան միայն իրա աղջիկը։

— Հայրիկ., ասաց նա, և հեկեկալով ընկաւ նրա կուրծքի վրա։

Բայց Աբրիսոլ կումը տընքաց և չըփոխթթուեցաւ իրա աղջկանը։ Գողգոթան փոխթթուելով իրա հօրը, զարթեցրուց նրա ջարդած անդամների հաղիւ հանդարտած ցաւերը։

— Ինչի՞ էք եդպէս, հայրիկ, ի՞նչ է . . . ազատվեց նա աշխատելով վերքաշել հօրը։

— (), ոչինչ . . . ոչինչ . . . իմ սիրելի, իմ անմեղան

---

(1) Այս բանտերի նկարագրութիւնը տես մեր թարգմանած Ինիվէրէ-ցիոյ անուանեալ գրքի մէջ՝ Գլ. Ե. էջեր 60 ֊ 61։

Գոլոլիս, պատասխանեց Ադրոզո կոմը, աշխատելով ժպտել։ Եթէ գիտենայիր, թէ ինչպէս ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ։։

Լսողին բոլորը հասկացաւ։ Նա ունքերը տօթեց և ատելու թեան շարժմամբ ասաց քնթի տակումը՝

— Օ՛, եթէ ես կըգիտենայի, եթէ ես կըգիտենայի էդ բանը, ։ ։ ։ Պատուած իմ ։ ։ ։

Ադրոզո կոմը աշխատում էր նստել, բայց ուժ չունէր։ տանջանքով կտրտած նրա անդամները չէին հնազանդում նրա կամքին։

Լոս բոպէին կոմի վիճակը անտանելի էր։ նրա առաջը կանգնած էր աղջիկը, որին նա աշխարհքումը ամէն բանից աւելի էր սիրում, և որ, հենց գիտնաս հրաշքով, եկել է նրա բանտը, երբոր նա ամենևին յոյս չունէր տեսնել նրան էս կեանքումը։ իսկ ինքը չէր կարողանում սիրով գրկել նրան, չէր կարողանում ասել, ինչ որ ունէր սրտումը, և միայն լաց էր ըլում և տնքում։ Նրա կար ժամանակ մտիկ էր անում աղջկանը առանց խօսելու։ յետոյ յանկարծ իբրու թէ զօրութիւն ստանալով իրա մարքից, ասաց նրան սիրար ձայնով՝

— Ուրեմն դու ազատես, իմ Գոլոլիս։ Փոռը, փոռը Պատուծոյ։ էս ոմ է քեզ հետ, որդեակ իմ։

— Իմ բարերարն է, հայրիկ, պատասխանեց Գոլոլիսը, իմ պահապան հրեշտակն է, որի օգնութեամբ ես յոյս ունիմ ձեզ ազատել։

— Ուշ է ։ ։ ։ ուշ է մոռնել ազատելու համար ։ ։ ։ ասաց Ադրոզո Կոմը հաղիւ լսելու ձէնով։

— Ինչն է ուշ։ Ամենևին յոյսերս պէտք չէ կորենք։

Խեղճ աղջիկը չէր հասկանում Կոմի խօսքերի զարհուրելի նշանակութիւնը։ Նա դեռ չէր հասկանում, թէ իրա հայրը տանջանքներով վշտացած աւելի դի էր, քան թէ կենդանի մարդ։

Լսողին զըզխմացաւ։ Նրա աչքերից ցաթիկեցին երկար ժամանակ բռնած արտասուքները և նա աղեկէզ ձայնիւ աղաղակեց՝

— Մի թէ չեմ տեսնում, խեղճ անխորձ երեխայ, որ սրան եահատակել են։

— Լռեցէք, լռեցէք, շուտով ասաց Ադրոզո Կոմը։

Ադամ, խօսքը թռաւ բերնից։ Գոլոլիսը ոչքը հասկացաւ։ Իրա հօր խօսքերից իբրև կայծակից խփած, նա առանց խօսելու առանց հառաչելու չոքեցաւ տախտի առջևը ։ ։ ։ Յետոյ երբ

Հգնաժամը (կրիզիս) անցկացաւ, նա վեր կացաւ, մօտեցաւ Կոմին և երկար ժամանակ լաց էր իջնում նրա վրա համբուրելով նրա կարտած ձեռները և ջարդած ոտները։ Նա կարծում էր, նա յոյս ունէր, թէ իրա գգուանքը նոր կեանք կըտան իրա հօր տանջած մարմնին. բայց էս գգուանքները մնացին անպտուղ. Կոմը անշարժ էր և լուռ։

Ղօլօրէսը յանկարծ թողեց իրա հօր ձեռը և շուռ գալով դէպ 'ի Ռոմինիկեանը, ասաց բարկութեամբ՝

— Դուք գիտէք էս բանը և ինձ իմաց չ'արէք։

— Եթէ ես գիտենայի, ձեզ էստեղ չ'էի բերել, պատասխանեց Ռոմինիկեանը։ Ձեր հօրը, կարդից դուրս, տանջել են իսկոյն հարցմունքից յետոյ. իսկ ես, ինչպէս դուք գիտէք, Սեւիլիայումը չ'էի։

— Ա՛խ, Աստուած իմ, Աստուած իմ, նրանք սպանել են սրան . . . աղաղակեց Ղօլօրէսը անպատմելի աղէտիւ։

Այս րոպէին Աւրգօզօ Կոմը ձեռքը շարժեց. կարծես թէ աղջկայ. տխրութիւնը նրան մին րոպէ ուժ տուեց։

— Որդեակ իմ, ասաց նա աղջկանը, էդպէս մի՛ յուսահատիր, . . . ես կ'առողջանամ . . . հաստատ գիտեմ . . .,

— Կ'առողջանաք . . . կրկնեց Ղօլօրէսը։ Օ՛, հա՛, անպատճառ կ'առողջանաք . . կ'առողջանաք, էնդուր որ ես կըմնամ էստեղ . . . ձեզ տէրութիւն կ'անեմ . . . և ամ կըհամարձակուի ինձ ձեզանից բաժանել, ասաց նա ջրա կողմը մտիկ տալով աչքիւ վատահութեամբ։

— Այս կըհամարձակուիմ բաժանել, աղաղակեց Լյօզէն, էնդուր համար, որ ապատեմ ձեր հօրն էլ, ձեզ էլ։

— Օ՛, դուք էդ բանը ինձ շատ ժամանակ է, որ խոստանում էք, բայց տեսէք սա ին՛չ վիճակի մէջ է։ . . . Բայց ես հիմի չ'եմ լսիլ և կըմնամ էստեղ։

— Ղօլօրէս, աղաղակեց Լյօզէն, 'ի սէր Աստուծոյ էդ միտքը թող. էստեղ դուք ձեր գլուխը վիշացնելից աւելի ուշինչ չ'էք կարող անել. իսկ դուքսը դուք կարող էք գործակից լինիլ ձեր հօր ապատութեանը։ Սրան դեռ շուտով չ'են կանչիլ հարցմունքի։ Իսկ Յովհան Աւիլեանը և Ղօն Լասէվանը արդէն իրանց հնարքները գործ են ածում . . .

— Պէտք էր որ նրանք ինձ համար վկաներ ճարէին, ասաց Աւրգօզօ Կոմը, ճարեալ են թէ չէ։

Ամէն բառը լսելիս Գոլօրէսը միտքը բերաւ վաղուց իրա մըտքումը դարսած քանը և յանկարծ փոխելով իրա իսկական դիտաւորութիւնը, հարցրուց Գոմինիկեանից՝

— Գոն Խոզէ, երդումով կը հաւատացնէք ինձ, որ Հայրս կ'առողջանայ։

Խոզէն փոքր ինչ քժշկութեան տեղեակ էր. նա իսկոյն տքնաղեց Բրգօզօ Կոմսի ձեռքերը, ոտքերը և կուրծքը, և յետոյ պատասխանեց՝

— Երդնում եմ, որ մին քանի օրից յետոյ, ձեր Հայրը կարող կըլինի մանգալ. սրա ոսկրները ոչ դուրս ընկած են, ոչ կոտրտած։

— Եթէ էդպէս է, պատասխանեց Գոլօրէսը, ես ընդունում եմ ձեր խորհուրդը։

— Գոն Մանուէլ, ասաց էն ժամանակը Խոզէն. ես խընդրում եմ ձեզանից միայն, որ դուք աշխատիք թաքցնել ձեր առողջանալը. էնպէս պէտք է անել, որ ձեզ երկար ժամանակ համարեն դժուար հիւանդ, որ շուտով երկրորդ հարցումի չըկանչեն, մինչև որ ձեր բարեկամները կարողանան խնդրել ձեզ համար։ Եւ հաւատացէք, Կոմս Բրգօզօ, շարունակեց նա մին ներքին զօրութեամբ ոգևորեալ, հաւատացէք որ վրէժխնդրութեան օրը հեռու չէ։

— Օ՛հ, ասաց Բրգօզօ Կոմսը տիար ձէնով. հիմի, երբոր ես դիտեմ, թէ իմ աղջիկս Մոնվիլեցիայի ձեռը չէ, տանջանքի մէջը չէ, ես ամէն քանի կարող եմ համբերել անտրտունջ . . . Իսկ դուք, ասաց նա յետոյ կատաղութեամբ մոխիկ տալով Խոզէին, դուք մեզ չէք մատնիլ։

— Հայրիկ, շուտով պատասխանեց Գոլօրէսը, որ հասկացաւ, թէ էրա հօր էս վերջին խօսքերի պատճառն էր Գոմինիկեանի շարերը. Հայրիկ՝, դուք անեծկեալ կարող էք սրան հաւատալ. սա ինձ ազատեց մահից . . . խայտառակութիւնից, և միայն սա է պատճառը, որ ես հիմի ձեզ տեսնում եմ . . . Իսկ դուք, Գոն Խոզէ, ներեցէք իմ հօր խօսքերին, ներեցէք իմ առաջուայ խօսքերին. ներեցէք դուրս թռան ոգէից և վշտաց ժամանակումը . . .

— Ես ինքս քաշել եմ վիշտ, տխրութեամբ պատասխանեց Խոզէն, և էնդուր համարը է, որ ես էսքան սիրում եմ ձեզ և ձեր հօրը. իսկ ձեր խօսքերը ես արդէն մոռացել եմ։

Հապէ թէ էս խօսքը վերջացրել էր, սանդխատի վրայից

լուեցաւ ոտքի ձայն։ Յոզէն իսկոյն Թարգրուց լապտերը էրա վերարկուի տակը և կամաց ասաց՝

— Ձէն մի՛ հանէք, պէտք է ապասել։

Ոտքի ձայնը քանի գընում էր մօտենում էր։ Պարզ լսեցաւ, որ սանդխատի վրայից եկողները անցկացան Աբրգօզօ կոմսի քանտի դրան մօտից. յետոյ բացուեցաւ և կրկին խփուեցաւ նրա մօտի քանտի դուռը, լսուեցան հառաչանքները և վերջապէս նոյն սանդխատով մին քանի ոքմին եւ դնացին։

— Լաւ մին զոհ, տխրաւթեամբ ասաց Յոզէն։

— Դա պէտք է որ կին լինի, ասաց Հօլօրէսը դողալով. եւ ձայնից ճանաչեցի. . . .

— Դնա՛ էստեղանց, որդեակ, աղաղակեց Աբրգօզօ կոմսը, գընացէք էստեղանց շուտով։ Թեզ կարող են էստեղ վնաս հասնել... Ուրեմն փոխուիր էս զարհուրելի բանտից, ա՛խ իմ Հօլօրէս . . . . մենք յետոյ կըտեսնուինք, փոխուիր, խնդրում եմ քեզ . . . . .

— Ա՛յ, հայրիկ, մենք կըտեսնուինք, ես էլի կըգամ ձեզ մօտ. . . էնպէս չէ՞, դօն Յոզէ, մենք էլի կըգա՞նք էստեղ . . . հա՞...

— Ո՛չ. դու էլ չ'ես գալ էստեղ, իմ դուստը, շուտով ասաց Աբրգօզօ կոմսը. ես քեզ արգելում եմ գալ էս բանտը. ինչ որ կ'ուզես արա՛ իմ ազատութեանս համար, միայն էստեղ մնաստնդամ չըգաս . . . .

— Ձեր հայրը ճշմարիտ է խօսում, ասաց Յոզէն. Ինկվիզիցիայի բանտերումը ո՛չ ոքի համար ապահովութիւն չըկայ. Ֆիմի գնանք էստեղանց։

— Ո՛հ, էլի մին ըսպէ, աղաղակեց Հօլօրէսը լաց ընելով... Յոզէն ուզում էր պատասխան տալ, բայց յանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ բանտապահը։

— Ֆա՛յր սուրը, ասաց նա Յոզէին. 'Ի սէր Աստուծոյ դուրս տարէք էս աղջկանը. կարելի է դան էստեղ։ Եւ եթէ դան՝ ես կըկարչիմ . . . . ինձ կըսպանեն. . . .

Այս խօսքերը շարժեցին Հօլօրէսին։

— Օ՛, եթէ էդպէս է, ասաց նա վատահութեամբ, դնանք, Դօն Յոզէ. ես չեմ ուզում ոքմինի կորուստի պատճառ դառնալ։ Մնաք բարով, հայրիկ, ասաց նա համբուրելով հօրը. թէ և էստեղ էլ չըլնէ, բայց մենք կըտեսնուինք։

Այս դուրս եկաւ բանտից Յոզէի և բանտապահի հետ։

VII.

ՏՕՆԵՄԵՐՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՒԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԸ-ԳԵՄԸ։

Ուրախութեան և հրճուանաց ձայներ էին լսւում Ինդալուզիայի մայրաքաղաքի փողոցներումը։ Այս բնակիչները մին բոպէ մոռացել էին իրանց վիճակը, մոռացել էին Ինկվիզիցիան, մատնողութիւնները, բանտերը և տանջանքները։ Այրանք միայն ներկայն էին մտիկ տալի, երգում էին և պարում էին իրանց կըքիշոտ Ֆոն դանգոն։ Բայց Էսուրախութեան պատճառը զարմանալի էր։ Սեւիլիացիք բաղդաւոր համարելով իրանց միայն էնդով, որ մոռացել էին իրանց վրայ զարհուրելի Իշխանութեամբ ծանրացած դատարանի հալածմունքը, տօն էին կատարում էնպէսի բանի համար, որ պէտք էր լաւ միտքները բերէր նրանց էն հալածմունքները։ Այդ բանն էր մեծ դրօշակիր Երցօղ Մեդինա—Սելլի (1) Սեւիլիայ գալը ոչիտо—դա—ֆէ հանդէսի ներկայ գըտ-

(1) Մեդինա — Սելլի տոհմը էր Իսպանիոյ շատ երևելի գերդաստաններից մին։ Այրա անդամները դեռ և 1820 տարումը ունէին իրաւունք կրել հաստատոյ դրօշակը իսկ Ինկվիզիցիայի ոչիտо—դա—ֆէ և ուրիշ հանդէսներումը։

ճուելու համար։ Այս Հերցողը ժողովրդին մեծարելը էր արել։

Բայց աղնիւ Հերցողը միայն հասարակ ժողովրդին չէր մեծարել, այլ մեծարելի էր հրաւիրել իրա մեծ պալատները մէջ իրա վեհապայ հերցող Մօնդեխարին, բոլոր բարձր ատիճանաւորներին և Սեւիլիոյ երևելի և Ինկվիզիցիայի բարեկամ աղնիւներին։

Վերջապէս հասաւ հանդարտ ատղալից և զմայլեցուցիչ գիշերը։ Ընդալուզիայի մայրաքաղաքի գեղեցիկ քուչաներումը ժողովուրդը սկսաւ ուելի բարձրաձայն զուարճանալ քան ցորեկը, գիթուլեանքը և շնորհօք բարեբեր խմիչքի (պախարետօ), որ աղբիւրի պէս թափուում էր մեծ դրօշակի առատաձեռնութիւնից։ Հերցող Մօնդեխարի լուսաճաճանչ պալատներումը հարուստ ճաշից յետոյ աղնիւները և ատիճանաւորները խօսում էին իրարու հետ ծխելով սիգարներ, որ էն ժամանակը միայն երևելիքն էին քաշում։

— Այ, ասաց յանկարծ մին. քսան տարեկան աղնուականը Դոն Ռոդրիգէզ Վալերոյին, որ արդէն կարդացողներին ծանօթ է, — հա՛ մենք հիմի կարող ենք պարծենալ, որ շնորհիւ նորին մեծութեան մեր թագաւորի իմաստուն պոլիտիկայի՝ կաթոլիկութիւնը հիմի յաղթանակ է կանգնել լուտերականութեան վրա . . .

Դոն Վալերոն պատասխան չտուաւ. նա միայն մտիկ տուաւ երիտասարդին, որի անունն էր Դոն Կարլոս—դե—Լասեր

տով աղաղակեց երիտասարդը։ Ադրգօզը կումը սերտ բարեկամու-թիւն ունէր դօն Լասուելանի հետ։ Իսկ դօն Լասուելանը չէ՞ որ հերձուածօղ է . . . . փիլիսոփայ է . . . .

— Դօն Լասուելանը ազնիւ և պատուական մարդ է, պատասխանեց Վալերօն, բայց թշնամիք ունի. նա երբէք չէ ուզում ընդունել Ինկվիզիցիայի ապաստաւորների կարգը . . . . Իսկ ձեր բանը, դօն Կարլօս, ուրիշ է. դուք շուտով կըստանաք էլ Սոնոյ (1) . . . .

— Օ՛, դեռ շուտ չէ, պատասխանեց երիտասարդը տխրութեամբ. բայց էսօր ես յոյս ունիմ էդուր համար մէկ խօսք ասել Հերցօղ Մեդինայ — Սելլի մեծ դրօշակրին։

— Դու շատ լաւ կ'անէք. էդպիսի պատեհութիւններ շատ չ'են պատահիլ . . . .

— Ի՞նչ, դօն Կարլօս, դուք ուզում էք Ինկվիզիցիայի ապաստաւորը դառնալ, աղաղակեց նրանց մօտենալով Վալերօյի քարեկամ դօն Խիմենեսը։

— Ի՛հ հարկէ, աղաղակեց դօն Կարլոսը, ապա թէ ոչ, ի՞նչպէս կըհամարձակուէի Դոնեայ Իզաբելլայի հետ նշնուիլ։

— Ընդարգ վինճակ Կաստիլիայի ազնուականի համար, ասաց Խիմենէսը։

— Ընդ հակառակը՝ գերազանց վինճակ, աղաղակեց Վալերօն։ Ինկվիզիցիայի ծառայ լինիլ նշանակում է, ձեռնէձեռ բաղդի ճանապարհի վերայ կանգնել։ Ո՛վ է հիմի Իսպանիայումը ամէնից հարուստը։ — Մեդինայ Սելլի և Մոնդեխար հերցօղները։ Ո՛վ է մեղանումը աւելի պատուոյ և շնորհաց մէջ։ — Էլի Մեդինայ Սելլի և Մոնդեխար հերցողները։ Դա ինչից է։ Ընդուրից որ, նրանք մտերիմ են Ինկվիզիցիային։ Դու ինչ էք կարծում, հիմա բանտումը նստած կըլինէր դօն Մանուէլ Ադրգօզն, և թափառական թաքուն մնան կուզար հիմի դօն Լասուելանը, եթէ նրանք հաճոյա-

(1) Էլ Սոնոյ — ցուցակ գաղտնի բառերի և նկարագրութիւն էն նշանների, որոնցով Ինկվիզիցիայի ապաստաւորները կարող էին իրարու ճանաչել, երբոր նրանց ոչ ոք չէր կարող ճանաչել. եթէ զարհուրելի դատարանի մարդկերանոցից չ'էր. այս պաշտօնի մէջ մըտնողները էլ Սոնոյ ստանում էին մեծ Ինկվիզիտորի ձեռից ելեղեցումը ստորագրած — դա — ֆէ հանդէսից քիչ առաջ։

ցած լինելին Ինկվիզիցիային. — Դ հարկէ որ չէ։ Այս Զիտէ՞ք, կարող է մարդ գլխովը գրաւոր գալ, թէ նրանցից ոչ մինին էս քամբաղդութիւնները չէին հասնիլ, եթէ Կոմս Ալբրօզօ գեղեցիկ աղջիկ Դօլօրէսի խոստովանահայրը լինէր Սրբազնութիւն Սեւիլիոյ մեծ Ինկվիզիթօր Զեռը Ալբուէսը . . .։

— Դուք անզգաւշ էք, դօն Ալերօ, քշեցաց Խիմենէսը, ձեր խօսքերը կարօղ են ձեզ վրդովցնել։

Մի՛ հոգաբ, պատասխանեց Ալերօն, լենք էսաեղ գիժ են համարում։

Այս յիրաւի, մեծ դրօշակի հիւրերի ոչ մինը բանի տեղ չընդրեց ձեր Ալերօյի սուր խօսքերը։ Նրանք շարունակեցին իրանց խօսակցութիւնը այնպիսի եղանակաւ, որ շատ հեռամուտ փանատիզմն էլ չէր կարող չընչատագրել։

— Առաջուայ ժամանակներումը, շարունակեց դօն Ալերօն բորբոքելով, առաջուայ ժամանակները մեծ էր համարւում քաջարութիւնը, հոգւոյ ազնուութիւնը և պատերազմական գործերի մէջ փորձ լինելը։ Առաջ թագաւորի հաւատարիմ ծառայ համարւում էր նա, ով որ Մաւրերի դէմ պատերազմում էր աղնիւ պատերազմով. էն ժամանակները թանկ էին համարում միտքը և լաւ անունը . . . իսկ հիմի, պարոններ, ուրիշ բան է։ Հիմի Մաւրերի դէմ չենն պատերազմում, այլ մատնում են նրանց։ Հիմի կեանքերը վտանգի մէջ են դցում միայն էնդուր համար, որ արժանի լինին սիրուն թագուհւոյ ժպիտը վայելել, իսկ տակունց քսութիւն են անում լաւ մարդկերանց վերայ, միայն էնդուր համար, որ արժանի լինին մին հաւատադրուժ Ինկվիզիթօրի բարեհաճութեանը . . . Էն ժամանակներումը, պարոններ, պատերազմից յետոյ ջօրքը շարւում էին կարգաւ և նրանց առջևը երեք անգամ կրկնում էին էն մարդկերանց անունները, որոնք քաջութեամբ պատերազմել էին, և վեց անգամ նրանց անունները, որոնք մեռել էին պատերազմումը։

Հիմի Ինկվիզիցիայի ծառաների անունները ամենևին չենն յիշում. Ինկվիզիցիայի սպասաւորները իրաւունք անգամ չունին հրապարակաւ պարծենալ իրանց խոյսառակութիւնով։

— Դօն Ալերօյ, ասաց Խիմենէսը զարհուրելով, մի՞թէ դլխիցդ ճի՞ռ ես վերը առել։

— Դօն Ալերօն ուրիշ բաղդի տէր է, ասաց դօն Կարլօսը,

նրան ամէն բանը նեղած է։

— Դու էդուր նախանձռոտ ես, դօն Կարլոս, ասաց Վալերօն ծիծաղելով, և յիրաւի նախանձելու է։ Ախր եթէ ես դօն Վալերօ չըլլինէի, այլ մին ուրիշ մարդ, և եթէ դուք էս լսածներից գոնեա կէսը կարայիք հաստնել Նորին Սրբազնութեան Պետրը Ասբուէսին, ձեզ խակոյն կըկարգէին էն մատնիչների կարգումը, որոնց անունն է Ինկվիզիցիայի ապաստարան։ Եւ դուք էն ժամանակը անելիքայ յոյս կ'ունենայիք Դոնեա Իզաբելլայի հետ ամուսնանալ.... բայց ափսոս, շատ ափսոս, որ ինձ վրայ քաւութիւն անելը ոչինչ չ'ուժէ։

Էս ասելից յետոյ Վալերօն շուտով դուրս գնաց դահլիճից։

Դօն Կարլոսը մնաց իրա տեղումը անշարժ, գետնին մտիկ տալով. նրա երեսը ամօթից կարմրեցաւ։

Էն րոպէին դահլիճը մտաւ մեծ Ինկվիզիթօրը մին կարճահասակ, ծերը, դեղնած և հիւանդ մարդու հետ, որ էր մեծ դրոշակիր հերցօղ Մէդինայ Սէլլին։

Ասբուէսը և հերցօղը բարև տուին հիւրերին. յետոյ վերջինը ասաց դօն Կարլոսին՝

— Երիտասարդ, իմ փեսէն ինձ յայտնեց ձեր ցանկութիւնը, որ արդէն յայտնի է նաև և տէր մեծ Ինկվիզիթօրին, և ես յոյս ունիմ, որ Նորին Սրբազնութիւնը ձեզ չ'ի զրկիլ խնդրած ողորմութիւնից։

— Դօն Կարլոս, ասաց յետոյ Ասբուէսը, ձեր ջերմեռանդութիւնը եկեղեցւոյ օգուտի համար արժանի է ամենայն ջատագովութեան։

Դոնեայ Իզաբելլայի նշանածը լուռ էր կացել։

— Դպէս մի՛ վախենար, երիտասարդ, ասաց հերցօղը. Նորին Սրբազնութեան յայտնի են ձեր գովելի մաքերն էլ, ձեր անարատ (1) ծագումն էլ։

(1) Ինկվիզիցիայի ծառայողների կարգ ընդունուում էին միայն էն ազնուականներին, որոնք ծագում էին կաթոլիկութեան ջերմեռանդութեան մէջ եղելի խոպանիացիներից և որոնց տոհմի մէջ չըկար ոչ մեռած ոչ կենդանի Ինկվիզիցիայից դատապարտած։ Էս հիման վրա՝ ոչ Հրէից, ոչ Մաւրերի սերունդները չէին կարող լինել Ինկվիզիցիայի ապաստարան։

Դոն Կարլոսը էլի պատասխան չըտուաց. նա հիմի ամօթ էր համարում ստանալ էն կոչումը, որի ստանալը կէս ժամ առաջ իրա համար վատք էր համարում։

Դոն Կարլոսի էս լռութիւնը զարմանալի թուեցաւ հերցողին. բայց նա չըհասկացաւ խակամն պատճառը և ասաց Ադրուէսին՝

— Սա շատ ամաչկոտ է, ձերդ Սրբազնութիւն. բայց դուք կըտեսնէք, որ սա մեր տուրքը հաւատոյ շատ նախանձայոյզ պաշտպաններից մինը կըլինի։

Ադրուէսը ձեռքը տուեց, որ դոն Կարլոսը համբուրէ և ասաց նրան քաղցրութեամբ՝

— Աղը, դոն Կարլոս, պատարագից յետոյ դուք կըստանաք էլ Սանտոյ աւագ եկեղեցումը։

Դոն Կարլոսը գլուխը խոնարհեցրուց և էլի պատասխան չըտուեց։

Նոյն րոպէին դահլիճի դռնից ներս մտաւ հերցող Մոնդեխարի ծառաներից մինը և բարձր ձէնով ասաց՝

— Դոնեայ Դոլորէս Ադրոզո ի Ցեւալլոս։

Ինկվիզիցիոնը վեր թռաւ և նկատելով, որ մօտի դռներից մինը բաց է, տարաւ էնտեղ իրա հետ հերցող Մեդինայ Սելլին։

Փոքր ժամանակից յետոյ Դոլորէսը մտաւ դահլիճը։

Մեծ դրօշակի բազմաթիւ հիւրերի տեսքը շփոթեց նրան, և նա տարակուսած մնաց աչքերովը փնտրելով տան տիրոջը։

Վերջապէս տեսնելով հերցող Մոնդեխարին, որ թէգուզ իրա հօր հին բարեկամն էր, բայց չէր համարձակւում նրան առաջ դընալ և նրան մոտիկ անել, — աղջիկը մօտեցաւ նրան։

Հերցողի երեսի գոյնը թռաւ. հիւրերը եռ եռ քաշուեցան Դոլորէսից։ Նա անտուլոր ընդունելութիւնը խեղճ աղջկայ սիրտը կոտրեց։

— Ներեցէք իմ. պարո՛ն հերցող, ասաց նա տխրութեամբ, մի՞թէ ձեր հին բարեկամի աղջկայ ներկայութիւնը էնքան ատելի է ձեզ համար, որ դուք մոտիկ տալու անգամ արժանի չէք ասում նրան . . .

Հերցողը առանց խօսելու ցոյց տուաւ նրան աթոռ։ Դոլորէսը աւելի շփոթուեցաւ, կարելի է ասել, թէ նոա աւելի վեր ընկաւ, քան թէ նստեցաւ ցոյց տուած աթոռի վերայ։ Նրա երեսին պատեց մին տեսակ հիւանդութեան կարմրութիւն, աչքերը լցուեցան արտասուքով, պուռշները դողում էին, և թէպէտ շատ աշխատ-

տում էր, բայց չէր կարողանում խօսել։

Ընդօրէս կոմսի աղջկայ այսպիսի վիճակը՝ — էն աղջկայ վիճակը, որ առաջ այնքան բաղդաւոր էր, հիմի ամէնքի աչքից ընկած, անպատատանարան, կոշտ շորերը հագին, — խորը խոցեց Մոնդեխարի սիրտը. բայց նա գիտէր, որ իրա անները և մեծ Ինկվիզիցիզը կարող են ամէն բանը տեսնել և լսել միւս սենեակից։ Նա գիտէր, որ իրա հասարակութեան մէջ ունեցած յարգը և նոյն իսկ կեանքը կախուած է Ինկվիզիցիայից, — և էս գիտենալով մտքումը դրեց գթութիւնը սրտի մէջ թաքցնել։

Նա խսկի չըխօսեցաւ։ Լռութիւնը տևեց բաւական երկար ժամանակ։ Ոչօրէսը հասկացաւ էս կեղծեալ սառնութեան պատճառը. բայց իրա հօր ազատութեան ցանկութիւնը՝ ցանկութիւնը, որ նրան բերել էր հերցողի տունը, այնքան զօրեղ էր, որ նա էլի չըխստահացաւ անկատար թողնուլ իրա վաղուց մտքումը դրած բանը։ Նա յաղթեց իրա ներքին յուզմանցը, վերը կացաւ տեղից և ասաց էնպիսի ձէնով, որ շատ քարտաէրտ մարդու էլ պիտի շարժէր։

— Նա տեսնում եմ, պարոն հերցող, որ իմ ներկայութիւնը ձանձրոյ է ձեզ համար, և չեմ մեղադրում ձեզ էստուր համար. էս գիտեմ, որ կարելի է իմ ներկայութիւնս անվայելուչ էլ չէ ձեզ համար, և էս բոպէիս կըհեռանամ էստեղից։ Միայն հրաման տուէք ինձ մին քանի խօսք ասել... իմ հայրս մաշում է Ինկվիզիցիայի բանտումը....

Նա խօսքից յետոյ նա մին բոպէ լուռ մնաց և յետոյ կարմրելով շարունակեց՝

— Օրս վրայ զրպարտութիւն են արել.... Նրա վրայ զուր մեղադրանք կայ....

Ընդօրէս կոմսի տարաբաղդութեան իսկական պատճառը նա շրջամեցաւ և չէր կարող ասել։

— Բայց, շարունակեց նա, եթէ բարեկամները նրա կողմը չըպահեն, նա կըդատապարտուի, կըդատապարտուի իբրև յանցաւոր. .... Ուրեմն, պարոն հերցող, սիրում էլք հօրս. ձեզ ոչ ոքից աւելի յայտնի է, թէ նա ինչ մտքի վրա էր և ինչպէս անձնանուէր էր մեր դաւանութեանը.... Նրա համար վկայութիւն տուէք.... ձեր մին խօսքը կըքանդէ մատնութիւնը և կըփրկէ իմ հօրս.... աղաչեցէք, ուրեմն նրան, պարո՛ն հերցող...

անուամբ Աստուծոյ խնդրում եմ ձեզանից, աղաւոեցէք նրան։

— Մին վկան հերիք չէ, պատասխանեց հեցողը ակներև շլիւ-թուած. էնդուր համար ... եթէ ես յանձն էլ առնէի ... նշանակում է ... դուք ինքներդ տեսնում էք, որ չեմ կարող օգնել ...

— Պարոնները, ասաց էն ժամանակը Հոլօրէսը աղերսական ձէնով հիւրերին, պարոնները, դուք ամէնքդ կըճանաչէիք հօրս. դուք կարող էք վկայել նրա անմեղութեանը ...

Պատասխան չըկար ... դահլիճումը տիրել էր դերեզմանական լռութիւն։

Հոլօրէսը դողդղալով ճխտեց իրա ձեռները, խաչաձև ծալեց և աչքերը բարձրացրուց դէպ 'ի վեր յուսաբեկեալ։

Նոյն վայրկենին դօն Ռոդրիգէզ Վալերօն, որ փոքր ինչ առաջ վերադարձել էր դահլիճը, մօտեցաւ Հոլօրէսին և քաղաքավար համարձակութեամբ ասաց նրան՝

— Վիճեօրա, (Տիրուհի) ես կամենում եմ վկայ լինել ձեր հօրը։

— Օ՜, շնորհակալ եմ, շնորհակալ եմ, պատասխանեց Հոլօրէսը աչքերը արտասունքով լցուած։

Ինչ ինչպէս նա էս խօսքը ասաց, էն սենեակից, որտեղ էին Ադրուէսը և հեցող Մեդինայ Սելլին, լսուեցաւ բարձր ծիծաղ և յետոյ էն սենեակի դռները բացուեցան և դահլիճը մտաւ մեծ Ինկվիզիցիօրը։

— Դօն Ռոդրիգէզ Վալերո՛, ասաց նա ծաղը անելով, դուք մոռանում էք, որ դժերը ոչինչ բանումը վկայ լինել չ'են կարող։

Հոլօրէսը ծիկայ տուեց և սիրտը գնաց։ Հեցող Մօնդեխարը շատ վրդոված էր. նրա ձեռները դողում էին, երեսը մեռելի գոյն էր բռնել։ Մեծ Ինկվիզիցիօրը մտիկ տուեց նրան մին ջոկ նշանակութեամբ։ Այս մտիկ տալը, կարծես թէ, սիրտ տուեց հեցողին։ Նա շարժեց փոքրիկ զանգակը և խնդրեց նրա մատն երկու ծառաներ։

— Այս Տիրուհին տարէ՛ք իմ կառքով, ասաց նա բարձր ձայնով։

Ծառաները ձեռքի վերայ բռնած դուրս տարան խեղճ Հոլօրէսին, որ դեռ ևս ուշաթափ էր։

Հեցողը դուրս եկաւ դահլիճից ուրիշ դռնով։ Մին քանի րոպէից յետոյ վերադարձաւ ուրախ կերպարանքով։

— Հեցող Մօնդեխարը, կամաց ասաց նրան Ադրուէսը, երբոր ձեր աները կ'երթայ յուխտեանական հանդիսաը՝, մեծ դրօշակի կոչումը ձերը կլինի։

VIII

ՍԻՐՏՐ ԳԵՂԱՐՔԻ ՇԵՏՈՑ·

Սիւլթանի Ինկվիզիցիայի քանդը էն փողոցումն էր, որի անունն է· Հիմի Կէոսքիոյ-ի փողոց, իսկ առաջ ասում էր Ինկիզիցիոյ փողոց։ Առաջուայ ժամանակները Խոպանիայի բոլոր մեծ քաղաքներում կային էս անունով փողոցներ և Ինկիզիցիոյ պալատ ասուած շինուածներ։

Սիւլթանի Ինկվիզիցիայի պալատը էր չորս անկիւնի շինութիւն և իւրաքանչիւր անկիւնում ունէր փոքր բուրգ։ Դրսի կողմից շատ լուսամուտներ ունէր, որոնց ներսից շինած էին այնպիսի վանդակներ, որ մօտիկ տներից շատ սուր աչքն էլ չէր կարող տեսնել, թէ ինչ է անցկենում պալատումը։ Իսկ պալատի մէջի կենցաղները էս լուսամուտներից կարող էին տեսնել միայն երկնքի մին պզտիկ կտորը։ Այս շինուածի մէջ կային ատեան դատարանի, դիւանատուն, տանջանարաններ, ապաշխարաններ և բանտեր։ Տանջանարանները և բանտերը էին ամէնից ներքի յարկերում կամ գետնայիսներում։ Բանտերից վերև կենում էին Ինկվիզիցիայի սպասաւորները և ուրիշ ցածր պաշտօնատարները։

Այն դիշերը երբ Սիւլթայումը կատարում էր մեծ դրօշակի դալատեան հանդէսը, էս տան առջևը կանգնեցան մին քանի մարդիկ, որոնք գնում էին ծածկած կառքի ետևից։ Այրանցից մինը պալատի դուռը ծեծեց, դռները բացուեցան, և դռնապանը դուրս եկաւ։ Դուռը ծեծողը նրա ականջումը մին քանի խօսք ասաց, յե-

ոոյ նրանը երկուսն էլ մնացան կառքին, հանեցին նրա միջից մին ուշաթափ կին, տարան պալատի երկրորդ յարկի սենեակներից մինը, դրին մահճակալի վրա, և գնացին։ Յետոյ եկաւ դռնապանի կինը, խորը մռայլ տուեց անծանօթի երեսին և նստաւ ննջարանի մօտ։ Սենեակը, որի մէջ էին էս երկու կինը, սարքած էր անշուք, բայց մաքուր։ Լնտեղ շարած էին մին քանի հանգիստ նստելու աթոռներ, պզտիկ սեղան ոլորուն ոտներով, գրքերով շարած դարակ, նոր քաղած ծաղկունքով լիքը անօթ, զանազան մանր մժուր էն ժամանակուայ կանանց զարդարանքի համար հարկաւոր խլիներ, և այլն։ Բայց յայտնանէ փոքր ինչ հեռու մահճակալից, որ կիսատ ծածկած էր սպիտակ կտաւեայ վարագուրով, կանգնացրած էր խաչելութիւն։

Անծանօթի ուշաթափութիւնը (էս անծանօթն էր Գոլօրէսը) քիչ քիչ անցկացաւ. նա հոգւոյ հանեց, կամաց կամաց բացարաւ աչքերը և տեղից փոքր ինչ վեր քաշուելով աչքը ման ածեց իրա չորս կողմը։ Բայց տեսած բաները չէր հասկանում, որովհետև միտքը տակաւին պղտոր էր և չէր հասկանում, թէ բոլորովին անծանօթ տեղումն է։

Մէն քանի րոպէից յետոյ Գոլօրէսը ցած և տխուր ձէնով ասաց՝

— Լյուանա . . .

— Իմ անունս Լյուանայ չէ, այլ Տերեզայ է, պատասխանեց դռնապանի կինը։

Գոլօրէսը մռայլ տուաւ Տերեզին և տեսնելով իրա մօտ անծանօթ կին վախից ծիկա տուեց.

— Էս ի՞նչ տեղ եմ ես, ասաց նա սաստիկ վրդովմամբ։

— Բանտումը, հանդարտութեամբ պատասխանեց Տերեզան։

— Բանտումը . . . դուք ասում էք . . . բանտումը . . . Բայց ի՞նչ մեղքի համար ես բանտումը պիտի լինիմ։

— Էս ի՞նչ գիտեմ . . . ի՞նչ իմ բանն է . . .

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած, ի՞նչ պատահեցաւ . . . ի՞նչ յանցանքի համար եմ ես էստեղ . . . Իմ միտքս է՝ ես էս երեկոյին դուս եկայ Լյուանի տունից։ Փողոցներումը երգում էին և պար էին գալիս, ամէնքը ուրախ էին և բաւական . . . միայն իմ սիրտս ծանրացած էր . . . յետոյ ես գնացի իմ հօր բարեկամների մօտ . . . նրանց մօտ, որանց նա իրա բարեկամ էր հա-

մաքում . . . ես նրանցից խնդրեցի նրա համար . . . խնդրեցի արտասուքով . . . իսկ յետոյ . . . ի՞նչ պատահեցաւ . . . Ո՞հ, յանկարծ դուրս եկաւ դա . . . դա ակամայ էր դրել բոլոր խոսաածներիս . . .

Ղօլօրէսը լռեց։ Նրա միտքը կամաց կամաց պարզուեցաւ և նրա յիշողութեան մէջ զարթեցան անցած օրուայ հանդամանքները։

Երկար ժամանակ լռելից յետոյ, Ղօլօրէսը հարցրուց — քանի՞ ժամն է հիմի։

— Քանի ժամն է՝ ես չըգիտեմ, տիրուհի . . . պատասխանեց դռնապանի կինը։ Ես գիտեմ միայն, որ հիմի շատ ուշ է։ Երբոր ձեզ բերին էստեղ, ես շատ խորը քնած էի . . . Ամբողջ օրը, գիտէք, ոտքի վրա էի, էնդուր որ հանդիսաւոր օր էր, և էն պատճառաւ մեզ մօտ շատ հերեթիկոսներ բերին . . . .

— Հանդիսաւոր օր, ասաց Ղօլօրէսը, և էս օրը հրանք պըատակեցին մատնութիւնով . . . Նրանք մատնեցին լինճ մեր կատաղի թշնամին . . . .

Ղօլօրէսը հասկացաւ քանի զօրութիւնը, որովհետև նա յատուկ զոհ էր դառել անարդ մատնութեան։

Կարդացողի մտքին է, որ հերցող Մոնդեխարը հիւրերի մօտ հրամայեց իրա ծառաներին Ղօլօրէսին տանել իրա տուն։ Այս հրամանը տուեց նա միայն հիւրերին խաբելու համար, բայց ինքը դահլիճի միւս դռնից դուս գալով, փոխեց հրամանը և հրամայեց տանել Ղօլօրէսին Ինկվիզիցիայի բանտը։ Ընդիւ հերցողը գիտէր, որ էստրով կարող է հաճոյանալ Երբուէսին . . . .

Ղօլօրէսը լաց էր լինում . Նրան տանջում էր, մաշում էր միտքը, թէ Ինկվիզիցիայի իշխանութեան տակն է։ Երևակայութիւնը զարհուրելի գունեերով նկարագրում էր նրա մտքումը իրա հօր քաշած և իրա համար պատրաստած տանջանքները։

Դռնապանի կինը երկար ժամանակ նստում էր, ամենևին չըհոգալով, թէ ի՞նչ է անց կենում Երբօզօ կոմսի խեղճ աղջկայ սրտումը։ Յետոյ նա յանկարծ քաց արաւ իրա քնաթաթախ աչքերը, անհոգութիւն մտիկ տուեց Ղօլօրէսին և հանդարտ ձենով ասաց՝

— Կարծեմ որ ձեզ, Տիրուհի, ոչինչ հարկաւոր չէ, ուրեմն գիտէք, ես կ՚երթամ և կըպառկեմ քնելու . . .

Այս ասելով նա դուրս գնաց ոռնեակից։ Ղօլօրէսը մնաց մենակ իրա ծանր տրամաբանութեան մէջ։

IX

ԵՐՈՒՍՈ·

Սաստիկ գոռում էին Սեւիլիոյ հին մայր եկեղեցւոյ զանգակները, որոնց հեռու տարածուած ձայնը կանչում էր Սեւիլիոյ բնակիչներին պատարագի, որի ժամանակը ակէտք էր առանցին մեծ ինկվիզիցիոյի ձեռից էլ Սանտո Ինկվիզիցիոյի կարդ մնոց նորընծաները։

Մայր եկեղեցւոյ մէջ, ուր կանգնած էին չորս շարք քարուսի քարի սիւներ, որոնց երկայն շուաքները տարածուած էին մարմարեօնեայ յատակի վերայ, ամենայն ինչ պատրաստած էր առաջիկոյ հանդէսի համար։ Սեղանի բոլորքը աստիճան աստիճան մինչև կամարը շարած հազարաւոր Հրագները վառած ծուխի նմանութիւն էին բերում այնպիսի լուսով, որի առջևը բոլորովին կորչում էր նկարակերտ լուսամուտներից ներս Հառագայթած լոյսը։

Ետագ սեղանի վերայ կանգնեցրած էր մեծ զուտ ոսկի գոհարներով զարդարած տապանակ։ Սեղանի բոլոր միւս անօթները,

ջահերը և քանդակեալ զարդերը նոյնպէս էին զուտ ոսկւոյ։

Եկեղեցւոյ պատի խորշերումը կանգնեցրած էին մեծ մեծ արձաթեայ, ըստ մեծի մասին, Խաչանիոյ սրբոց պատկերներ։ Մէկ խօսքով՝ ամէն տեղ տարածուած էր պայծառ լոյս, Հոխութիւն և առատաձեռնութիւն։

Ինչ քիչ եկեղեցին լքցուեցաւ ժողովրդով և նրա փառաւորութիւնը աւելի հանդիսացաւ։

Սեղանի աջ կողմումը փառաւոր թաւիշեայ դահի վերայ, որ դրած էր տասներկու աստիճան բարձր, թանկագին դորգով ծածկած ամպիոնի վերայ բաղմած էր մեծ Ինկվիզիտորը ծերանի շորերով։

Ինկվիզիտորի գահի երկու կողմումը երկու աստիճան ցածը դրած էին երկու աթոռներ, մինը՝ Սիւիլոյ արքեպիսկոպոսի համար, միւսը՝ Լեոզէի համար։ Ամպիոնի պատուանդանի մօտ պատի առաջը շարուած էին հոգևորականք ապիտակ և դեղին զգեստներով։ Ետ սեղանից փոքր ինչ հեռու ջոկ ջոկ խմբով նստած էին մեծամեծ աստիճանաւորներ, պատուաւորագոյն աղնիւներ և երևելի տիկնայք։ Եկեղեցւոյ առեանումը կանգնած էին ժողովուրդը, դրան մօտ կիսուած էին աղքատներ և խիտաններ։

Պատարագը սկսուեցաւ։ Ուշադրանք կարդալուց յետոյ ժողովուրդը Հանապարհ բաց արին և մեծ Ինկվիզիտորի ամպիոնին մօտեցան Ինկվիզիցիայի ապաստաւորութիւն մտնող նորընծաները. նրանց մէջ կային աղնիւներ էլ, հասարակ մարդիք էլ։ Ինկվիզիցիան, որ այնքան յօժարութեամբ ընտրում էր աղնիւների միջից նրա համար զոհակալներ, հասարակ մարդկերանց էլ չէ՛ չ'էր ասում. նա գիտէր, որ հասարակ ժողովրդի մէջ կըգտնուին աւելի նախանձայոյզ, աւելի Հարազիկ իրա զարհուրելի կամաց կատարողներ, քան թէ աղնուականաց մէջ։

Ես ժամանակումը եկեղեցւոյ դրան մօտ, ուր կանգնած էին աղքատներ և խիտաններ, բաւական զարմանալի խօսակցութիւններ էին ընում։

— Ամենասուրբ կոյս, ասաց մին ծեր խիտան, մոլիկ տուէ՛ք երգարդը, Լեռանիտան էլ եկել է էլ Սանտո ասանալու . . . Նրան Գարդունեայի ընկերութեան մէջ վեր չ'առին, թէ և նա շատ աշխատեցաւ. հիմի նա մանում է նորին սրբազնութեան խշնամութեան տակ . . .

— Գաւդի, մի թէ ուղղիդ Լեռանիտան էլ Սանտո կըլտա-

նայ, Հարցրուց մին շատ թուխ ջահել աղջիկ, որ կերպարանքով էն ծերի հայրենակից էր երևում. Այ՛ որ նա մին մեծ ոքմին չ՛է.

— Օ՛, մեծ բան է, որ երևելի ոքմին չ՛է, ասաց ուրիշ խիտան. Ահա Բանոն Յոկատոն, նա ուշ մարդն երևելի մարդ չ՛է, այլ Մելիլու

(1) էլ լեռ է, բայց հիմի նա էլ Ինկվիզիցիայումը պիտի լինի . . .

— Բանոն Յոկատոն, Հարցրուց մին ուրիշ մարդ, ուր է նա, . . . ես նրան չ՛եմ տեսնում.

— Ա՛յ, Մարկիզ դէ լա Բոնկայի մօտ, էն, որ նարնջագոյն բաճկոն է հագել.

— Բանի՞ հոգի են բոլորը, Հարցրուց թուխ աղջիկը.

— Համրել էլ չ՛է կարելի, պատասխանեց ծերը. Տե՛ս ինչ խումբ է. ասուրբ Մարիամ, ի՞նչ խումբ է.

— Երկիք խօսիք, պառաւնեը, ասաց մին ծերը զօրական. Ձեր լեզուները շատ երկար են. երևի մոռացել է.ք առածը՝ " կրակի հետ մի՛ խաղա, կ՛երուխա ,,

Խօսակցութիւնները դադարեցան. Այս միջոցին հերցող Մոնդեխարի խումբումը անց էր կենում ուրիշ զգալի տեսարան, բայց նրա միջի մարդիքը խօսում էին կամաց և աշխատում էին իրանց երեսումը ցոյց տալ հանդարտութիւն. Այս խումբումը չորս հոգի էին՝ մեծ դրօշակիրը, հերցող Մոնդեխարը, դօնեայ Իզաբելլան և դօն Կարլոս դէ Գուերերան. Վերջինին, ինչպէս կարդացողը կը յիշէ, մեծ Ինկվիզիթորը հրաւիրել էր էլ Սանտո տալու համար. Ամենապէս կարդացողի մտքին է, որ դօն Կարլոսը յաղթուած իրա սէրից առաջ մեծ եռանդեամբ ցանկանում էր մտնել Ինկվիզիցիայի ծառայողների կարգը. բայց յետոյ Խիմենէսի ազնիւ ատելութիւնը և Վալերոյի ազդու խօսքերը յանկարծ փոխեցին նրա միտքը և հարկադրեցին սառնութեամբ ընդունել Ադրուէսի առաջարկութիւնը. Որանից յետոյ սիրոյ ազդեցութեան հետ տիրեց նրա վրա տարակուսութիւն. նա տեսաւ իրա փնտրած կոչման բոլոր անարդութիւնը, բայց էն էլ տեսնում էր, որ առանց էս կոչման նա չ՛է կարող պատկուել Իզաբելլայի հետ և չբգիտենալով, թէ ի՞նչ անէ, յանձն առաւ դոնեա՝ ներկայ գտնուել պատարագին. Ա՛յ դեռ

(1) էն նաւահանգիստն, ուր թիւոյ ծառայութեամբ էին աքսորում։

կանգնած էր խումբի մէջ դեղնած և անշարժ, երբոր միւս նորընծաները արդէն կանգնած էին Ամբրուէսի ամբիոնի պատուանդանի մօտ։

Մեծ Ինկվիզիցիոնը աչքը դցեց բոլոր նորընծաների վերայ և չըտեսնելով նրանց մէջ դոն Կարլոսին, գլուխը ծանր շուռ տուեց դէպ 'ի հերցող Մոնդեխարի խումբը։ Այն րոպէին հերցող Մոնդեխարը կամաց խփեց արմունկով իրա փեսացուին և շտապելով ասաց

— Ա՛յլ ի՞նչ էք մնում, դոն Կարլոս, հենց գիտենաս թէ դուք փոշմանել էք, որ յայտնեցիք ձեր ցանկութիւնը ծառայել մեր սուրբ հաւատոյ օգտին . . . .

— Ա՜ء չըգիտեմ, պարոն հերցող, պատասխանեց երիտասարդը դողալով, եւ աբժանի՞ եմ արդեօք . . . .

— Ա՜ء ի՞նչ նոր խանդարհութիւն է, ասաց հերցողը։ Մի թէ դուք աղնուական չ'էք, մի թէ ձեր նախնեաց մէջ կայ գոնեա մին մաւր։

— Երիտասարդ, ասաց մեծ դրօշակիրը, դուք իմ որդոյ գինը չ'էք տալի ինձ։ ,, Ա՛յլ ինձ համար, կարծես թէ ասում էր Հոնեայ Իզաբելլայի հայեցուածքը, որով նա մտիկ էր տալի դոն Կարլոսին, իսկ ինձ համար, մի՞թէ դուք ոչինչ չ'էք յանձն առնիլ։ ,,

Բայց դոն Կարլոսը տխուր շուարած մնացել էր։

— Ա՜ء ձեզ ասում եմ, — ասաց նրան հերցող Մոնդեխարը ցած ձայնով ամենայն զօրութեամբ ջանալով թաքցնել իրա բարկութիւնը մօտի կանգնողներից, — եթէ դուք էս րոպէիս չ'էք գնալ ուր պէտքն է, իրաւուց յաւիտեան կըկորուէնք։

— Օ՜ գնացէք, գնացէք, դոն Կարլոս, քչփչալով ասաց նրան Հոնեայ Իզաբելլան աղերսական կերպարանքով։

Ա՜ء խօսքը բանը վերջացրուց։ Դոն Կարլոսը հարբածի պէս կլոր կուշտ գնալով դուրս եկաւ խումբի միջից, ծանրաքայլ անց կացաւ ժողովրդի միջից և կանգնեցաւ ամբիոնի պատուանդանի մօտ նորընծաների քամակումը։

Մեծ Ինկվիզիցիոնը բոլորը հասկացաւ. նրա աչքերումը պրպղաց ուրախութեան կայծ։ Այն րոպէին Լեօղէն վերկացաւ իրա տեղից, վերառաւ մին հոգևորականի ձեռից մին կապոց գրած թղթեր և մին փոքրիկ տուփ, որի մէջ շարած էին մետաղեայ նշանները, որոնցով իրարու Ճանաչում էին Ինկվիզիցիայի ծառայողները, և կանգնեցաւ Ամբրուէսի աթոռի մօտ։

Ընդհանրությունը սկսուեցաւ։ Ազնուականները և ռամիկները, որոնք խումբը կանգնած էին ամբիոնի մօտ, մէկ մէկ վերը էին էլնում, ջոքում էին և ասում էին ամէն մէկը մին թերթ թուղթ և մին նշան մեծ Ինկվիզիտորի ձեռից, որ վերը էր առնում Լոյոլէի ձեռից։

Վերջապէս հերթը հասաւ դոն Կարլոսին. նա հաւաքեց իրա վերջին ՀԻԳը, դողդոջուն քայլերով վեր էլաւ ամբիոնի վրա և ջոքեցաւ Աբրուէսի առաջը։ Մեծ Ինկվիզիտորը տուեց նրան էլ Սոռոо և գաղտնի նշանը. բայց տալու ժամանակը նա կամաց հարցրուց՝ — դոն Կարլոս, խղճմտանքդ խօսմ մին բանով քեզ չի տանջում։

Երիտասարդը պատասխան չըտուեց և միայն գլուխը խոնարհեցրուց։ Յետոյ նա վեր եկաւ ամբիոնից և խառնուեցաւ նորընծաների մէջ, որոնք կիսաբոլոր կանգնած էին իրանց առաջուայ տեղումը։

Ժողովրդեան վրա տիրել էր խորին լռութիւն։ Աչքերը մտիկ էին տալի սեղանի էն կողմը, ուր կատարւում էր էս հանդէսը։

Մեծ Ինկվիզիտորը փառաւորապէս վեր կացաւ իրա պՀնազարդ աթոռից, ինչաւ Լոյոլէի հետ ամբիոնից և կանգնեցաւ դոն Կարլոսի դէմուդէմ, որ կիսաբոլորակի աջ կողմի գլխումն էր կանգնած։

Դոն Կարլոսը կարմրեցաւ և սկսաւ գետնին մտիկ տալ. նա չըկարաց դիմանալ Աբրուէսի թափանցիկ աչքերին։

Մեծ Ինկվիզիտորը մին քանի րոպէ լռութիւն կացաւ. յետոյ էլի խորը մտիկ տալով Իզաբելլայի նշանածին, ասաց բարձր և հրամայական ձայնով՝

— Դոն Կարլոս դե Գոերերրայ, երդուի՞ք դուք նուիրել ըզ Հոգի և զմարմին ձեր 'ի ծառայութիւն սրբոյ Հռոմէական Կաթոլիկ Հաւատոյ մերոյ։

— Երդուիմ, հաստատ ձէնով պատասխանեց երիտասարդը, որ էս երդման մէջ ոչինչ խղճմտանքի դէմ քան չ'էր տեսնում։

— Երդուի՞ք, շարունակեց Աբրուէսը, երբէք չըհեռանալ հոգեկորոյս ուսման և երբէք չըլինիլ բարեկամ այնոցիկ հիւսիսային ամբարշտաց, զորս կոչեն փիլիսոփայ և նորոգիչք (ռեֆորմատոր)։

— Երդուիմ, պատասխանեց դոն Կարլոսը։

— Երդուի՞ք դուք, թէ երբէք ոչ տոջիը առ ձեզ տեղի տ-

պատառանի հերետիկոսի ումիք և ոչ միում յայնոցիկ, զորոց զՀեռ սնդէ Ինկվիզիցիոյն էրբև հերետիկոսի։

Դոն Կարլոսը պատասխան չըտալով զարհուրած մոխիկ տուեց Ադրուէսին. Էս պահանջած երդումի կատարումը նրան երևեցաւ անարդ բան։

Մեծ Ինկվիզիտորը բարկութեամբ յօնքերը վեր թողեց և ի՞ բնատարդը մին փոքր ժամանակ լուռ կենալուց յետոյ շատ կամաց ձէնով ասաց՝

— Երդուիր։

— Երդուինք դուք, շարունակեց Ադրուէսը, բանիւ և գործով հալածել զԱռաբս, զՀրէայս, զԹերահաւատ կաթոլիկս և զանկեալս 'ի լուտերական աղանդ։ Երդուինք դուք մատանել պնոսուրը Ինկվիզիցիային և արդար դատաստանի նորա, նա և յայնժամ թէ և իցեն նորա հիւրընկալեալ 'ի ձէնջ, կամ գոնեա՛ իցեն նորա ընդ կապածանոք թերահաւատութեան, ամբարշտութեան և աղանդաւորութեան։

— Ընհնար է. . . . անհնար է . . . կամաց ասաց երիտասարդը անչափ նեղանալով, չի՞ որ էդ անելը նշանակում է լինել մատնիչ և լը . . . .

Մեծ Ինկվիզիտորը ահռելի աչքով մոխիկ տուեց նրան և երիտասարդի խօսքը բերնումը սառեցաւ. բայց նրա պառոշների դողդոջուն շարժուելից երևում էր, թէ նա էլի ուրիշ բաներ էլ ասաց։

Մեծ Ինկվիզիտորը կարծես թէ բաւականացաւ և շարունակեց՝

— Երդուինք դուք, 'ի ժամ հալկաւորութեան յառաջնում իսկ նուադի կոչման խոկոյն ներկայնալ, և թէ յայտպիսի դէպս դուք լքեալ թողջիք նա և զմահիճ մահամերձ մօր ձերոյ . . . .

— Ողորմեցէք, ողորմեցէ՛ք, հայր իմ, ասաց դոն Կարլոսը կոկըտուր և ցած ձէնով։

Էս խօսքերը լսեց միայն Ադրուէսը. նա էնպէս ձևացաւ, իբրու թէ չըհասկացաւ և շարունակեց առաջուայ պէս քարձր, պարզ և հրամայական ձէնով՝

— Երդուինք դուք, թէ վասն պարտուց կոչման ձերոյ հրաժարեսջի՛ք դուք 'ի բարեկամութենէ և յարենակցութենէ . . . . յանմեջն աշխարհային կապակցութեանց . . . թէ դուք յաւիտեան թողջի՛ք զնզբարս և զքոյս, զհայր և զմայր, զկին և զորդիս, և թէ նեկատեսջի՛ք 'ի նոսա զկգացմունս հակառակս սրբոյ կաթոլի-

կանգն հաւատոյ մերոյ։

Այս խօսքերը լսելու ժամանակը երիտասարդի հոգւոյ մէջ բարբաջաւ առելութիւն և նա համարձակ գլուխը բարձրացրուց և ասաց փոքր ինչ բարձր և հաստատ ձեւով՝

— Այն երդումը ես երբէք յանձն չեմ առնիլ . . . ահա շարունակեց նա, հեղնական ժպիտով ես տալով Ս.Բրուէսին իրա էլ Սանդոն և Ինկվիզիցիական նշանը, - ահա էն բաները, որոնք ես ձեզանից ստացայ, յետ առէք և տուէք ինձանից աւելի մաքրիմին . . . իսկ ես . . . . ես իմ գլուխը անարժան եմ համարում Ինկվիզիցիայի սպասաւոր լինելու պատիւին։

Այս ասելով նա ուժով դրեց էլ Սանդոն և նշանը Ս.Բրուէսի ձեռը և շտապաւ առանց յետ մտիկ տալու դուրս գնաց եկեղեցուց։

Մեծ դրօշակիր և հերցող Մանդեխաբի երկիւղը և բարկութիւնը անպատմելի էին։ Յոհնեա Իշաբելլան լաց էր լում։ Ս.Բրուէսի երեսին երևում էր սատանիկ բարկութիւն, իսկ ժողովուրդը տարաւիած սպասում էին, թէ ինչպէս կլուերջանայ էս անցքը։ Միայն խօշէն էր բոլորովին անվրդով. միայն ժամանակ առ ժամանակ նրա երեսին երևում էր հաղիւ նշմարելի ժպիտ։

Սակայն մեծ Ինկվիզիթօրը յաղթեց իրա բարկութեանը և կեղծաւորական ջերմեռանդութեամբ աչքերը բարձրացրուց դէպ 'ի երկինքը և հեղութեամբ ասաց ժողովրդին՝

— Եղբայրք, եկեալն ասի մոլորեալ որդին մեր անկաւ 'ի ծանր մեղս, բայց նա ինքն խոստովանեցաւ զյանցանս իւր . . . Այս ինքն խոստովանեցաւ առաջի ձեր, թէ անարժան համարի զանձն ծառայութեան սուրբ հաւատոյ մերոյ։ . . . Ուրեմն աղօթեացուք վասն նորա, եղբայրք, շարունակեց նա չոքելով։

Բոլոր ժողովուրդը նմանապէս չոքեցան։

Տասը րոպէից յետոյ մեծ Ինկվիզիթօրը վեր կացաւ, նոյն երդումը տուեց բոլոր էլ Սանդո ստացողներին, բայց բոլորին միասին։

Երդումը ուրախութեամբ յանձն առին։ Ջանդէսը վերջացաւ։ Բայց նոյն աւուր երեկոյին Ինկվիզիցիայի բանտերումը տանջաւորների թաւումը մին մարդ էլ աւելացաւ։

X

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Ինչպէս Աբբուէսը վերոյգրեալ հանդէսի կատարելից շատ գաղրած էր, բայց իրա պալատը գալից յետոյ ոչ մին բոլոր չէր կարողանում հանդատանալ, նրա խելքն ու միտքն էր, թէ Հոլօրէսը հիմի իրա ձեռին է։ Այս միտքը համ ուրախացնում էր համ տանջում էր Աբբուէսին։ Այս մեծ մեծ քայլերով մտն էր գալի իրա սենեակի մէջ։ Այն ժամանակը և նոյն սենեակումը նրա սիրական խօսքն ախուր շուռումուռ էր տալի մին դէպի թղթերը։ Ջահիլ Հոմինիկեանին էն բոլոր տանջում էր մին անյայտ և ախուր նախադասութիւն։ Այս դեռ չըգիտէր, թէ Հոլօրէսը փոխել է խուանայի անից. բայց էն ուրախութիւնը, որ երբեմն երբեմն երևում էր մեծ Ինկվիզիթօրի երեսին, մին չար բան էր գուշակում։ Այս երբեմն երբեմն աչքերը գլխից բարձրացնում էր և սուր աչքով մտիկ էր տալի Աբբուէսին։ Այս տեսակ մտիկ տալով կամաց կամաց նա խակապէս հասկացաւ, թէ մեծ Ինկվիզիթօրը մին անտու

գալիք թաքցնել էն քաղաքականությունը, որ կարծես թէ պատրաստէ էր նրա համար։

Ա՛յ առանց խօսելու շարունակում էր մանդալը, թէ և շատ ժամանակ էր անցկացել խրիկուայ հայից յետոյ։ Ա՛ըբուէսը տպաստում էր, որ խօշէն գնայ։ Ա՛ երջապէս նրա համբերութիւնը հատաւ և նա կէսը հանաք կէսը ողորդ ձևով յանկարծ խլեց գիրքը ջահիլ Դոմինիկեանի ձեռից և ասաց՝ — Ուրիշ ժամանակ կարդաս, ձագուկս։ Իմ քունս տանում է, դու էլ բաւական նիրհում ես. համբցէ՛ք գնա՛ քո տաքնոցը։

— Դուք կարծում էք, թէ ես նիրհում եմ, ձերդ սրբազնութիւն. սխալում էք, ես պատրաստ եմ ամբողջ գիշերը նստել . . .

— Դու խօսել մեր հաւատոյ օգտի համար։

— Երամերէ՛ք, ձերդ սրբազնութիւն։

— Հաւատում եմ. ես գիտեմ, որ դու նախանձայոյզ ես նրա օգտին. Ընդուր համար անվարձ չ'ես մնալ։ Ընբոր բոլոր Իսպանիոյ մեծ Ինկվիզիցիօր նորին սրբազնութիւն Ա՛ֆոնս Պանրիկը կրվախճանի և. ես կ'արժանանամ նրա տեղը յաջորդել, էն ժամանակը ես կ'աշխատեմ, որ քեզ կարգեն Սիւիլիոյ մեծ Ինկվիզիցիօր։

— Կ'աշխատէ՛ք, ասաց սիրելին մին սիրուն ժպիտով։ Մինչև ես էդ տեղը չ'եմ վերը առնել . . . չի՞ որ դրա պատճառաւ պէտք է ձեզանից ջոկուիլ։

— Ա՛յ, սիրելը հապէս կըլինի, ասաց Ինկվիզիցիօրը։ Լաւ է, մենք չ'ենք բաժանուիլ. բայց քո բաղդաւորութեան համար ես կըհոգամ, դառնուկս . . . բայց հիմի էլի դու գնա՛ քնելու. քեզ էլ, ինձ էլ ժամանակ է հանգստանալու։

,, Ա՜ յատուկ մին բան ունի մտքումը ,, ինքն իրան ասաց խօշէն և վերը կացաւ տեղից էրթալու թէ գնալու։

— Ա՛ֆսո—դա—ֆէ շուտ կըլինի, շարունակեց Ինկվիզիցիօրը, և մեզ պէտք է անյապաղ աւարտել բոլոր պատրաստութիւնները. . . մենք պէտք է ճշմարտենք նորին բարձրութեան մեր ամենողորմած թագաւորի ակնկալութիւնները . . .

Խօշէն հասկացաւ, թէ էս ըսպէիս աֆսո—դա—ֆէ և թագաւորը շատ հեռու էին Ինկվիզիցիօրի մտքից, և թէ Ա՛ըբուէսը ուրիշ բան էր խօսում և ուրիշ բան էր մտածում։ Սակայն ցոյց չը-

տուեց թէ հասկանում է նրա միտքը, և աչքերը Հմռեելով ասաց՝

— Ինչնակը վոխանցական է, Ձերդ Սրբազնութիւն։ Ինչ կարծես թէ իմ քունս էլ սկսաւ տանել . . .

— Ուրեմն երթաս քարով, որդեակ, պատասխանեց Ինկվիզիցիոնը թօրը էնպիսի շտապմամբ, որ չըկարացաց թաքցնել . գնաս քարով . . . . . էդուց վաղ արի ինձ մօտ . . . տանջանքի սկսելու ժամանակից փոքը առաջ . . .

— Մնաք բարով, Ձերդ Սրբազնութիւն. քարի գիշեր։

Այս ասելից յետոյ Լոյոլէն դուրս գնաց, բայց չըգնաց իրա տուանձնոցը, այլ զգուշութեամբ դուրս գնաց ամրից և թաք կացաւ դրան առջևի ծառի ետևը։

Ինչ էն դրան ետևն էր թաք կենում նա Ռոբերտէի հետքը պահելու համար, որից նա սովորաբար գուրս էր գալի, երբ որ ամրից գիշերով մին տեղ գնալիս, ուզում էր սչով իրան չըտեսնէ։

Ռոյալիսի դէպքերումը շատ անգամ նրա հետ գնում էր Լոյոլէն էլ։ Այս անգամին ջահիլ Ֆոմինիկեանը հատուստ համոզուած էր, թէ Ռոբերտը միտքը գրած է մին տեղ գնալ միա մենակ։

Նա յիրաւի Լոյոլէի գուշակութիւնը կատարուեցաւ. մին քանի րոպէ անցնելից յետոյ, մեծ Ինկվիզիթօրը լայնածիր գդակը գլխին և էն վերարկուն վրէն անց կացաւ վերոյիշեալ ծառի մօտից։

Այս շուտ եկաւ Ինկվիզիցիայի թաղի կողմը։

Լոյոլէն գնաց նրա ետևից փոքը ինչ հեռու։

Ռոբերտը մօտիկացաւ Ինկվիզիցիի քանտին, կանգնեցաւ և գուռը ծեծեց մին ուրիշ ձևով։

Լոյոլէն էլ կանգնեցաւ էնպէս, որ Ինկվիզիթօրը նրան չըտեսաւ։

Բանտապահը գուռը բաց արաւ, Ռոբերտէին ներս թողեց, և կամենում էր կրկին գուռը փակել, բայց Լոյոլէն նշան տուեց նրան և ներս մտաւ բանտը։ Բանտապահը գիտենալով, թէ ջահիլ Ֆոմինիկեանը համարեա թէ միշտ ուղեկից էր մեծ Ինկվիզիթօրին, հարկաւոր չըհամարեց արգելել նրան։ Գուռը փակելից յետոյ, նա իրա բանալիքների կապոցը և լապտերը ձեռին, վազեց հասնելու Ռոբերտէին, որ էն ժամանակը շուտով սանդուխտներից վեր ելելով հասել էր երկրորդ դատիկանը (էտաժ)։

Խոջէն նստեցաւ սրահումը աթոռի վերայ։

Այն քանի ըսպէից յետոյ բանտապահը սանդուխտից վերը իջաւ և ամենևին չըմտածելով թէ ուր մնաց Խոջէն մտաւ իրա սենեակը, պառկեցաւ տեղաշորումը և հանգիստ քնեցաւ, սպասելով, թէ նրան կրկին կըպարթեցնեն երբ կըհարկաւորի։

Այն ժամանակը Խոջէն էլ կամաց պատերը բռնելով ելաւ վերի դատիկանը։ Այս վերնայարկի սենեակների մէկի դրան փակարանի արանքից Հրագի լոյս էր երևում. Խոջէն կանգնեցաւ։ Խսկոյն նրա ականջը հասան երկու ձայներ. նրանցից մէնը Ադրուէսինն էր, իսկ միւսը Հոլօրէսին։

Ջահել Հոմինիկեանը զարմանդեցաւ. նա ամենևին չէր կասկածում, թէ լսում է Հասեվանի նշանածի ձայնը, բայց էն էլ չէր կարողանում հասկանալ, թէ ինչ զօրեղ թշնամի է մատնել նրան մեծ Ինկվիզիցիօնի ձեռը։ Նա սկսաւ մոխիկ տալ էն ծակից, որտեղից լոյս էր երևում, բայց ծակի ներսի կողմից անց կացրած էր բանալի, և սիրելիի հայեցուածքը ներս չըթափանցեց. նա միայն հասկացաւ, թէ լապտերը դրած է դրան դէմուդէմ, և թէ խօսողները ծրանից հեռու են։

Խոջէն սկսաւ ականջ դնել։

Ա՛յ, ինչ էր անցկենում մեր յիշատակած սենեակումը։

Երբ Ադրուէսը էնտեղ մտաւ, Հոլօրէսը նստած էր մահճակալի ծայրին, գլուխը բարձի վերայ դրած։

Ամբողջ դիշերը և ցերեկը անց կացնելով սաստիկ անհանգըստութեան մէջ, նա հենց էն էր որ թեթև քնոյ մոռացութեան էր տուել իրան. բանտը եկած օրից նրա շորերը չէր հանուել. Նրա ուղղադիծ և սիրուն Հակատի սպիտակութիւնը էն ըսպէին բռնել էր սեւագոյն գոյն. նրա քունքերի վրա երևում էին կապտագոյն մանր երակներ. էն շուաքը, որ տարածուած էր խեղճ աղջկայ երեսի վրա նրա թերթերունքներից, ցոյց էր տալիս նրա աղնուական դէմքը խակամանից աւելի տխրամած. երևում էր, որ Հոլօրէսը նոր քուն էր մտել ծանր և տխրագին մտածմունքով։

Այս վիճակումը տեսնելով նրան Ինկվիզիցիօնը շփոթած կանգնեցաւ. կարելի է թէ նրա մէջը էն ըսպէին խղճմտանքը զարթեցաւ։

Ա՛ա մոխիկ տուեց իրա ջորս կողմը զարհուրելով, իբրու թէ ցանկալով համոզուիլ, թէ քանտումը վիրայ չըկայ, որ կարողանայ երեսովը տալ և մեղադրել նրան։ Սենեակումը լսւում էր միայն

Գոլոբէսի հանդարտ և միակերպ շնչառութիւնը։

Յետոյ Ռոբուէսը աչքը տնկեց Գոլոբէսի վրա. մեծ Ինկվիզիթորը երկար ժամանակ մտիկ տուեց նրան և նրա զգացմունքը կամաց կամաց փոխուեցաւ. կատաղի կիրքը յաղթեց էն երկիւղին, որ մին փոքր առաջ տիրել էր նրան. նրա երևակայութիւնը պատառեց ամենայն քողը, հեռացրուց բոլոր խոչ և խոչընդոտ. բայց մին սքանչելի զօրութիւն աղատեց Գոլոբէսին. խղճմտանաց ուժն էր արդեօք, թէ նախապաշարութիւն՝ մենք կորոշեան ասել չենք կարող։

Բայց ինչ որ էր, սակայն սիրահար Ռոբուէսը վստահացաւ միայն կամաց համբուրել քնած սիրուն աղջկայ ձեռը։ Այս համբոյրը զարթնեցրուց Գոլոբէսին. նա վեր թռաւ և աչքերը բաց արաւ. տեսնելով իրա առաջը Ինկվիզիթորի մառախլապատ դէմքը, նա վախենալուց բղաւեց և ձեռներով երեսը ծածկեց։

— Ուրեմն դուք վախենում էք ինձանից, ասաց Ռոբուէսը փաղաքշական ձևով։

— Օ՛, ինչի՛ . . . ինչի՛ դուք այսպէս իմ եռեէս էք ընկել, ասաց Գոլոբէսը կցկտուր ձայնով։

— Ձեր հոգւոյ փրկութիւնը ինձ համար շատ թանկ է, պատասխանեց Ինկվիզիթորը, ես նրա համար հոգս եմ քաշում . . .

Գոլոբէսը, որ արդէն մահՀակալից վեր էր կացել, մտիկ տուեց Ինկվիզիթորին կասկածելով և նրա շրթանց վերայ երևեցաւ կծողական հեգնութիւն։

— Դուք, շարունակեց Ինկվիզիթորը, ընկել էք նորաղանդութեան կորստական հերետիկոսութեան մէջ . . . այս բանը հաստատում է միայն էն, որ դուք տառում էք ինձ,—ինձ՝ որ պահապան եմ մեր հաւատոյ սրբութեանը։

— Իսկ դուք կամենում էք, որ ես օրհնեմ էն մարդուն, որ զբաղարեց իմ հօրս, որ չարչարեց նրան տանջանքով և մոքաւոր դրել է նրան կորցնել։

— Մենք էնդուր ենք չարչարում մարմինը, որ աղատենք հոգին . . . դուք այժմ այնպէս անձնատուր էք ամբարշտաց ուսմանը, որ այս անելիքայ ճշմարտութիւնը վիրդ էլ չէք առնում։

Գոլոբէսը լռեց։

— Ուրեմն իմ, շարունակեց Ինկվիզիթորը կենդանաւորական հեղութեամբ և փաղաքշական ձևով, - դարձիր ճշմարտութեան ճանապարհը։

— Դուք մեղապարտում էք ինձ հէնց էնպէս անիրաւացի, ինչպէս մեղադրեցիք իմ հօրս, պատասխանեց Դոլորէսը։ Դուք աստում էք, թէ ցանկանում էք վերկել իմ հոգիս, այլ ընդհակառակն իմ կորուստս էք ուզում։

— Օ՛, ի՞նչպէս սխալում ես դու իմ զգացմանցս վրայ, աղաղակեց Ռ.ըբուէսը, մօտենալով Դոլորէսին, որ զարհուրելով յետ քաշուեցաւ նրանից։

— Ի՞նչպէս սխալում ես դու, որդեակ։

Դոլորէսը պատասխան չըտուեց։

— Ուրեմն դու շատ ատում ես ինձ ... շատ ... կրկնեց նա մին բոպէ լռելից յետոյ։

— Խնայեցէք ... խնայեցէք ... աղաղակեց ջահիլ աղջիկը զարհուրանօք իրա ձեռները կոտրտելով։ Ռ.ըձակեցէք ինձ էստեղից ... Ռ.ըձակեցէք հօրս բանից ... ողորմեցէք մեզ, երդում եմ տալի քեզ յանուն Ռ.ստուծոյ ...

— Օ՛, եթէ դու կամենայիր ... ասաց Ռ.ըբուէսը բորբոքած մտիի տալով նրան։

Դոլորէսը զարհուրեցաւ և դեղնեցաւ մեռելի պէս. նա միտքը բերեց էն անց.քը, որ մին քանի ամիս առաջ անց կացաւ իրա աղօթարանումը, և միտքը եկաւ, թէ նա այժմ Ինկվիզիցիօնի խշխանութեան տակն է ...

Լուսէն լսեց բոլոր էս խօսակցութիւնները. նա սկսաւ վախենալ խեղճ աղջկայ համար, բայց էս երկիւղը յանկարծ պակսեցաւ ... Լն դուռը, որտեղից մտիկ էր անում նա, յանկարծ փոքր ինչ բացուեցաւ էնդուր, որ նա դիպուածով նրա վերայ պտռկեցաւ։ Լա ցոյց տուեց նրան թէ դուռը կողպած չ՛էր։

Հաւականանալով էստոյ և վախենալով, որ դուռը ժամանակից առաջ բոլորովին չըբացուի, նա մին քայլ յետ քաշուեցաւ։

Լա միջոցումը Ռ.ըբուէսը կարաց յաղթել էն վրդովմանը, որ քիչ մնաց բռնադատում էր նրան մոռանալ իրա դլուխը և կեղծաւորական հեզութեամբ շարունակեց՝

— Ո՛վ աստց ձեզ, որդեակ իմ, թէ դործ ածել ձեր դէմ մին քանի տատիկ միջոցներ ստիպեց ինձ որպիսի և լոյէ չար դիտաւորութիւն ... ես ամենայն ժամ ցանկանում եմ ձեզ բարի, ամէն ժամանակ ես սրտանց սիրել եմ ձեզ ... և ես յոյս ունէի, թէ դուք լաւ կըհասկանաք սկսամոյ խստութեան բոլոր

վերկաւելի ներդործութիւնները, թէ դուք դէն կը գցէք ձեր մոլորութիւնը և կը յարդէք իմ աշխատութիւնը։

Դոլորէսի պատասխանն էր միմիայն պռոշների համարեա թէ անհասկանալի շարժումը։

— Ո՛, շարունակեց Ադրուէսը, դուք չէք կարող հասկանալ, թէ ի՞նչքան ծանր է մեր պարտաւորութիւնը, ի՞նչքան մեծ է մեր պատասխանատուութիւնը։ Մեզ ատում են, մեզանից փախչում են և մեր միայնակ վարձը, մեր միայնակ մխիթարութիւնը էստեղ — է կարեկցութիւն և բարեկամութիւն մին քանի ընտրեալ հոգիների . . . այնպիսիների, զորօրինակ, ինչպէս ձերն է . . . դուք ինքներդդ դատեցէք, ի՞նչպէս վշտանում ենք մենք, երբ էդ տեսակ սրտերից մինը յանկարծ ինքը իւրա գլուխը մատնում է կորստեան . . . ահա՛ էստուր համար է, որ ես էսքան հոգս եմ անում ձեզ համար։ Ահա՛ էստուր համար է, որ ես ցանկանում եմ, որ դուք էս իմ բարեկամութեան փոխարէն . . .

Ինկվիզիցիօրի կեղծաւորական հեզութիւնը և վառվռուն աչքով խօսելը մին բոլորովին խաբեց Դոլորէսին։

,, Ես երևի թէ սխալում եմ, մտածեց նա. ես սրան 'ի զուր եմ մեղադրում . . . այսքան էլ կեղծաւորել անկարելի է ''

— Հայր իմ, ասաց նա յետոյ, մոտիկ տալով Ադրուէսին առանց կասկածանքի. ես հաւատում եմ ձեզ. ես ցանկանում եմ հաւատալ . . . ինչի՞ պէտք է խաբէք դուք տարաբաղդ աղջկանը, որը որ ձեզ ոչինչ վնաս չէ տուել . . . կարելի է որ ես յիրաւի անփորձ լինելով մոլորուել եմ Ճանապարհից, որին պէտք էր հետևել . . . մի՛ խնայէք ինձանից ձեր խրատը . . . ես շնորհակալութեամբ կընդունեմ, ես կը կատարեմ ամէն բանը, որ կը կին դառնամ վերկութեան շաւիղը . . . բայց աղաչում եմ ձեզ, հայր իմ, ազատեցէք իմ հօրս . . .

— Դոլորէս, ազաղակեց Ադրուէսը նոր մեկանց մոռանալով իրա գլուխը. Դոլորէս, ի՞նչպէս սիրուն ես դու հիմի . . . Հա՛, ես կ՚ազատեմ քո հօրը, ես նրան կը տամ քեզ . . . Նա ոչ մին էլն բոլոր աշխարքի միջումը այնպիսի բոցաշունչ տիրոյ չէ հանդիպել, ինչպէսով ես քեզ պիտի սիրեմ . . . ամենայն ինչ, ամենայն ինչ քո ոտքի տակը կը լինի . . .

Ադրուէսը լռեց։ Նրա կուրծքը ցանկութիւնից ուռած ուժգին բարձրանում էր և ցածրանում. Դոլորէսի վրա պշուցեալ

աչքերը վառում էին . . .

Դոլորէսը հասկացաւ իրա սխալանքը. նա մեաց սառած ալէս հազիւ շունչ առնելով. Սրբուէսի ցանկութիւնը քանի գնում էր աւելի բորբոքւում էր. նա բոլորովին մոռացաւ իրա առաջուայ խօսակցութեան ձևերը. աչքերը մթնեցան և թևերը թաց արած ընկաւ Դոլորէսի վրա. Խեղճ աղջիկը սուր և վայրենի ձէնով աղաղակեց.

Նոյն րոպէին դուռը բացուեցաւ և ներս մտաւ Խոզէն.

— Ձերդ սրբազնութիւն, ասաց նա բարձր ձէնով.

Սրբուէսը յետ թռաւ Դոլորէսից, յանկարծ շուռ եկաւ դէպ 'ի Խոզէն և կատաղի աչքերով մոխիկ տալով նրան սաստիկ բարկութեամբ հարցրուց՝

— Ի՞նչ ես ուզում . . . . ինչի՞ ես եկել էստեղ.

— Դա եկայ ձեզ էստեղանց ապահով տանելու համար. Քաղաքումը վատ համբաւներ են լսւում . . . ասում են, թէ դատաճանութիւն է սարքուել . . . . և մին քանի մարդ պատրաստուել են ձեզ սպանել . . . և թէ, ամենայն բանը պատրաստած է . . . .

Դոլորէսը զարմացած և ուրախ մոխիկ էր տալի երիտասարդ Դոմինիկեանին և հենց խօսել էլ ուզում էր նրա հետ. բայց նա նշանացի հասկացրուց լռել, և Դոլորէսը ցոյց էլ չըտուեց թէ ճանաչում է նրան.

— Ողորմ ես ասում, թէ չէ, Խոզէ, հարցրուց Ինկվիզիթորը, որի բարկութեան փոխարէն սկսել էր տիրել վրդովմունքը. յատուկ գիտեմ, որ էդ սուտ չէ . . . .

— Յատուկ գիտեմ, ձերդ Սրբազնութիւն. ես դաշնակ էլ եմ վերբ առել հարկաւորած ժամանակը ձեզ պաշտպանելու համար . . . . Դա շատ պատուական դաշնակ է, — ասաց նա հանելով իրա վերարկուի տակից դաշնակը և ցոյց տալով Ինկվիզիթորին, — խփածը դարդակ չէ անց կենալ . . . Ուրեմն գնանք, ձերդ Սրբազնութիւն, մի՛ վախենաք.

Սրբուէսը բարկացած էր իրա տիրելի վրա, բայց ակամայ հնազանդեցաւ նրա ազդեցութեանը. Նա մօտեցաւ Դոլորէսին և հեզ ձայնով ասաց նրան՝

— Յոյս ունիմ, աղջիկս, որ վաղը ձեզ աւելի հնազանդ կըտեսնեմ . . . .

— Օ՛, ես ատում եմ ձեզ, պատասխանեց նա զզուանքը երեսը շուռ տալով նրանից, ես ատում եմ ձեզ իմ հոգւոյ ամենայն զօրութեամբը և ցանկանում եմ միայն, որ դուք սպանէք ինձ իմ հօրս հետ . . .

Խոշէն հանդիպեց Անկիլիզիթօրին։

— Ինչի՞ համար, աղաղակեց Ադրուէսը կատաղաբար ատամները կրճտելով, ինչի՞ համար չեմ կարողանում ես կտրատել դը-բան . . . ի՞նչ անեմ դրա կամակորութեանը յաղթելու համար։

— Զոցեցէք դրան ապաշխարանաց բանտը, պատասխանեց Խոշէն։



XI

ՏԷՆԼՔՈՆԻ ԼՍՐՈՒ։

Թէ և Աբբուէսը շատ սիրում էր Լսոզէին, այնու ամենայնիւ երկար ժամանակ չէր կարողանում ներել նրան յանկարծ Հռոլսիսի բանտը ներս մտնելու համար։ Սէր Ինկվիզիցիան ամենևին մտքից էլ չէր անց կացնում, թէ իրա սիրելին այնքան մեծ հոգացողութիւն ունի էս աղջկայ համար։ Նա չէր կարծում, թէ Լսոզէն գիտութեամբ եկաւ արգելք լինել նրա դիտաւորութեանը։ Նա ամենևին կասկած չունէր նրա մտերմութիւնից. բայց էլի քիչ նեղացած էր նրա վրա։ Սակայն էս բարկութիւնը չբկտրեց նրանց իրարուց. Լսոզէն անշուշտ հարկաւոր էր Աբբուէսին. Լսոզէն նրան մարդահաճութիւն էր անում, կատարում էր նրա բոլոր հաճոյքը, գովում էր նրա բոլոր անդրդութիւնները, խրախոյս էր տալիս նոր անդրդութիւններ անելու, մխիթարում էր նրան, երբ որ նրա հոգին երբեմն ճնշում էր նրա վրա լեռնացած մեղքերի տակ,—և Աբբուէսը Լսոզէին սիրում էր Հռոլսիսից աւելի, որի վրա ունէր նա վավաշ ցանկութիւն . . .

Սերոյ յիշատակներով անց.քերի միւս օրը երիտասարդ Հռոմինիկեանը առաւօտը վաղ մտաւ Ինկվիզիցիոյի ննջարանը։

Աբբուէսը գիշերը անքնութեամբ տանջուած լինելով դեռ

անկողնի մէջն էր։ Լեոզէին տեսնելու նա բարկութեամբ ունքերը վեր թողեց. բայց սիրելին ամենևին չընկճուեցաւ էս բարկութեան նշանից և մօտենալով նրա անկողնոյ դահաւորակի պատուանդանին, ասաց հեզ և խոնարհ ձէնով՝

— Իբրեն հրամայելու բան խօսք չունիք, ձերդ Սրբազնութիւն։

— Ձեր յանդգնութիւնը ինձ զարմացնում է, պատասխանեց Ինկվիզիթօրը։ Երեկուայ անցքից յետոյ ի՞նչպէս համարձակուեցաք իմ աչքս երևիլ։

— Դուք հրամայեցիք ինձ, որ ես գամ փաշնչանոցից առաջ, ասաց սիրելին հեզութեամբ։

— Ես կարծում էի, թէ Լեոզէն ինձ մտերիմ է. բայց երևում է, որ ես սխալուել եմ, ասաց Ինկվիզիթօրը, որի բարկութիւնը կորաւ ջահիլ, գեղեցիկ սիրելիի ժպիտի ազդեցութիւնից։

— Լեոզէն վստահացաւ ձեր Սրբազնութեան բարկութեան տակ ընկնիլ, միայն ձեզ սիրելից . . . Լեոզէն խմացաւ, որ նրա բարերարի համար վառանգ է պատրաստած և պարտաւորութիւն համարեց փութալ նրան պաշտպանելու համար . . . Ես է խնդիր Լեոզէի բոլոր յանցանքը։

— Բայց, ովթէ մենք հասել ենք էն առաջանին, որ պէտք է դողանք մին չնչին հրէաների և Մարքանոանների ժողովրդից, — ասաց Ինկվիզիթօրը հպարտ դէմքով։

— Ոչ էլ նրա բոլոր կենաց մէջ ողում է երկրի վրա, բայց երբեմն խայթում է առիւծին.—չէ՞ որ առիւծը թագաւոր է անասունների։ Ինչքան էլ որ թշնամին չնչին լինի, բայց էլի վտանգաւոր է, և նրան առանց վտանգի ոտնակոխ անելու համար պէտք է նրա գաւերի առաջքը առնել։ Ողջուրիւնը միշտ օգտակար է և անշուշտ հարկաւոր։ Ուրեմն զգուշ լինենք, ձերդ Սրբազնութիւն, արթուն կենանք. թշնամին մօտիկ է . . .

Ամոզուած դէմքը և եղանակը, որով նա ասաց էս վերջի խօսքերը, նոյն ազդեցութիւնը արին Ինկվիզիթօրի վրա, ինչպէս յոյս ունէր Լեոզէն։ Նրա ազդեցութեամբ Սրբուէսի հոգին մամից աւելի էր կակղում։ Նա լսեց։ Նրա միտքը կրկին դիմեց էն առարկայի վրա, որ այնքան տանջում էր նրան ամբողջ առաւօտը,— այսինքն Սրգօզօ կամի աղջկայ վերայ։

— Օ՛, ասաց նա յետոյ, էս Դօլօրէսը ստեղծած է ինձ տանջելու համար, խառամանքներս, երդումներս, ապառնալիքս բո-

լորը անպատուղ են . . . ես դեռ էսպէս աղջիկ չ'եմ տեսել . . .

— Հոլոբէս Աբդոզան յիրուսի նման չ'է ուրիշ աղջկերանց, պատասխանեց սիրելին անսովոր ձէնով։ Նա գիտէ որ իրա գլուխը գոհ տալով չ'ի փրկիլ նրանց, որոնց սիրում է, այլ թէ աւելի լաւ է մեռնել սրտի սիրեկանների հետ, քան թէ նրանցից յետո ապրիլ։

Ինկվիզիցիոնը վեր թռաւ, իբրու թէ միտքը քերելով իրա անցկացած կեանքի մէջ մին խղճահար դէպք։ Նրա երեսը առաջուանից աւելի դեղնեցաւ, պռօշները հուսկ եկան, և աչքերումը երևեցաւ աղէկիղութիւն . . . Իսկ սիրելին նոյն բոպէին անբթիթ աչքով մտիկ էր անում և կարծես թէ ուրախանում էր Աբդուէսի տանջուելովը։

— Կարծեմ որ, ժամանակ է. դահիճները վաղուց սպասում են,— յանկարծ ասաց Ինկվիզիցիոնը, իբրու թէ ուզելով խօսակցութիւնը փոխել։

Մին քանի բոպէից յետոյ Ինկվիզիցիոնը շորերը հագած դուրս եկաւ ննջարանից Լեօղէի հետ։

Ինկվիզիցիայի քանտումը նրանք հանդիպեցան տեսարանի, որ Աբդուէսի համար նոր բան չէր։ Մին սրահի միջումը նրանք տեսան վեց դատապարտեալներ՝ երեք կին և երեք մարդ, որոնց երկու դահիճ վազեցնում էին կաշեայ մտրակներով խփելով նրանց մերկ ուսերին։ Այս ողորմելիների ուսերը նեղկուած էին կարմիր զօլերով. բայց չէին լսուում ոչ աղաղակ և ոչ հառաչանք (1)։

Ինկվիզիցիոնը առանց զուրթ շարժելու կանգնեցաւ։ Երբոր ողորմելիները մօտեցան նրան՝ կնանիքից մինը բարձրահասակ, ջահել, սիրուն, բայց նիհար երեսով, բերանը կապած, մտիկ տուեց նրան սարսափելի մեղադրական հայեցուածքով, որ կարծես թէ, ասում էր՝

---

(1) Էս տեսակ պատիժի ենթարկում էին քանտարկեալներին հառաչանքի և գանգատների համար և իբարու հետ կռուելու և շփոթ հանելու համար։ Շփոթի համար պատժում էին բոլոր տարաբաղդներին, որոնք էին մին սենեակի մէջ՝ կանայք և մարդիկ, ծերք և երիտասարդք, առողջք և աղնուականք։ Դատ և քննութիւն չկար։ Ամենքին մերկացնում էին մինչև մէջքը և պատժում էին միօրինակ անդթութեամբ։

— Ո՞ւմնաչեցիր ինձ։

— Ֆրանցիսկա, կամաց ասաց Ինկվիզիթորը, ակամայ աչքերը վեր թողնելով էս զարհուրելի հայեցուածքի դէմ։

Ա.յս բանը կէս րոպէից աւելի չըքաշեց. դահիճները քշեցին ողորմելիներին։ Ա.ըբուէսը և Խոզէն գնացին սրահից։ Ցրանք մը-տան տանջահարանը։

Խոյն սքիռները բերին մին ջահիլ (մէկ անգամ գեղեցիկ իլած) կին։ Ցա շատ դեղնած էր և տկար, նրա ոտքերը դողում և ծալւում էին, աչքերը պղտոր էին և մեռած։ Խոյն երևում էր, որ նա քաշել է երկար և ծանր հիւանդութիւն։ Ինկվիզիթորին տեսնելիս նա անպատմելի աղէտիւ ձեռները տարածեց դէպի նրան և աղերսելով և շատ նուազ ձէնով ասաց՝

Իմ մանկիկս։

— Ուստար իմ, պատասխանեց Ա.ըբուէսը, էն կեղծեալ հեզութեան ձէնով, որ նա մեծ Հարտարութեամբ գիտէր գործ ածել հարկաւոր ժամանակը. ձեր քոյրը հետևում է լուտերական վարդապետութեան և ձեզ մեղադրում են, թէ դուք քաջալերում էք նրա ուրացութիւնը։

— Սուտ է, պատասխանեց կինը 'ի խորոց սրտէ, էբրու թէ յանկարծ հաւաքելով իրա բոլոր մնացած ուժը,—սուտ է։

— Ինչով կարող էք հաստատել թէ սուտ է։

— Իմ մանկիկս . . . տուէք ինձ իմ մանկիկս . . . ասաց ողորմելին աղէկեզ ձէնով։

Ցս մանուկը, որն որ ծնել էր էն կինը բանտումը, խոյն խլել էին նրանից։ Ցս քիչ է. ողորմելի մօրը՝ մանկի չըտալով նրա ծննդականութեան տկարութեանը՝ տանջել էին, ինչպէս երևում էր թոկերով կտրտած ձեռներից . . . Ոչ նրա արտասուքը, ոչ աղաչանքը գութ չը շարժեցին ոչ Ա.ըբուէսին և ոչ սրիներին։ Ամէն Խոզէն իրա արտաքին սառնութեան պատրուակի տակը ծածկած ունէր խորին գթութիւն։ Ցրա սիրտը սատանի խիտում էր և միայն կեղծաւորելու բազմամեայ սովորութիւնը պահեց նրան դառն արտասուքը թափելից . . .

Ա.ըբուէսը նշան տուեց և երկու դահիճներ ընկան զոհի վրա։ Ուրիշ երկու դահիճներ բերին և դրին տանջանարանի մէջտեղումը մին փայտեայ դապաղաձև արկղ, որի մէջ մարդ կարող էր պառկել և որի մէջտեղումը գցած էր հատ բոլորակ գլան։ Ցդ գլա-

նի վրա տանջուողի մարմինը երկու տակ էր լինում, էնպէս, որ խեղճ նահատակի դլուխը ոտքերից ցածը էր մնում։ Դահիճները հատ թոկերով կապեցին խեղճ կնիկան էն արկղի վրա։ Յետոյ մօտեցաւ նրան Ինկվիզիթօրը և կրկին հարցրուց՝ վերջն առնում է արդեօք իրա վրա բարդած յանցանքը։ Ողորմելին էլի սկսեց հաւատացնել, թէ ոչինչ մեղ չունի։

— Կամակորուն է անում, ասաց Ընրբուէսը կեղծեալ տխրութեան դէմքով, - կամակորութիւն է անում իրա մոլորութեան մէջ։

Այս ասելու ժամանակը դահիճները աւելի պինդ քաշեցին թոկերը։

Նա սուր ճէնով աղաղակեց. թոկերի կապած տեղերից արիւնները սկսեցին վազել։ Դահիճներից մինը իրա լայն թեւքով անդթաբար սրբեց արիւնը։ Ընրբուէսը կրկին մօտեցաւ և հեզ ճէնով ասաց՝

— Օ՜ղջա՛, դուստր իմ։

— Նահատակը բացատութեան նշան տուեց գլխով. խօսիլ չէր կարողանում . . .

— Կամակորութիւն է անում, կրկնեց Ընրբուէսը։ Այս նշանակում էր նոր տանջանք տալ։ Դահիճները փռեցին նրա երեսին թաց արած բարակ կտաւ էնպէս, որ նրա մին մասը մտաւ քնթի ծակերի և կոկորդի մէջ։ Յետոյ նրանք սկսան կամաց կամաց ջուր ածել նրա քնթի և բերնի մէջ։ Ջուրը անց էր կենում թաց շորից կաթ կաթ . . . . Նահատակը արդէն շատ դժուար էր շընչում. հաւաքելով իրա յետին ճիգը նա աշխատում էր երբեմն կուլ տալ ջուրը, որ յետոյ փոքր ինչ շունչ քաշէ. բայց ամէն մին նրա էդ նպատակին հասնել ջանալու ժամանակը դահիճները ուժգին քաշում էին թոկերը, որանք քանի գնում էին աւելի խոր էին մտնում մարմնոյ մէջ։

Խօզէն գլուխը կռացրուց, ձեռերով երեսը ծածկեց և սկսաւ լալ։

Ողբալանքը մին քանի անդամ ընդմիջելով քաշեց մին ամբող ջ ժամ։ Նահատակի հառաչանքը, որ դահիճների թոկը քաշելիս կրկնուում էր, քիչ քիչ նուազեցաւ և վերջապէս այնքան նուազեցաւ, որ Ինկվիզիցիայի բժիշկը մօտեցաւ և երակը շօշափելով ասաց մեծ Ինկվիզիթօրին՝

— Այս կինը կըմեռնի, ձերդ. Սրբազնութիւն, եթէ տանջանքը շարունակուի։

— Ընձակեցէք, ասաց Ռոբերտը։ Տանջանքը առ ժամանակ մնաց (1)։

Դահիճները վեր առին թիջած շորը նահատակի երեսից և հետ արին թոկերը։ Ղոբմելիի ձեռները և ոտները կտրտած էին մինչև ոսկորատանքը։ Լուսոյն մօտեցաւ նրան և. երեսին մտիկ տալով զարհուրելով. աղաղակեց՝

— Սա մեռած է, ձերդ Սրբազնութիւն։

— Ողորդ, — սառնութեամբ ասաց Ինկվիզիթորը։

Այս խօսելու ժամանակը Դահիճները բարձրացրին նահատակին։ Նրբորը նրան վեր կացրին, նա սկսաւ սաստիկ զկրտալ և քերնից աղբիւրի պէս վազեց արիւնը. յետոյ առանց աչքերը բաց անելու նա կամաց ասաց՝

— Իմ մանկիկը։

Այս ասելիս նրա գլուխը թեքուեցաւ դահիճների մէկի ձեռի վրա. շունչը կըտրուեցաւ. պռօշները հուի եկան . . .

Ա՜ սա մեռաւ . . .

— Թողցէն մեղք տրա . . . ասաց Ռոբերտը։

Մեռելին դուրս տարին, և նորին սրբազնութեան առջևը կանգնեցաւ նոր զոհ։

Սա էն աղքատների բարերարն էր, որին աղքատները կոչում էին իրանց մայր և որին ազատելը մին քանի օր առաջ պահանջում էին Անրիկէզից Սեւիլիոյ ռամիկները։ Ա՜ սա արդէն իննտուն տարեկան էր և էստուր (2) մտիկ չըտալով նրան երկու անգամ

---

(1) Ինկվիզիթորների անգթութիւնը այնքան մեծ էր, որ Ռոբերտանեան Ֆերդինանդից կարգած բարձրագոյն խորհրդարանը ստիպուեցաւ կանոն դնել, որ միևնոյն մեղապարտին երբէք չ'ենթարկեն տանջանքի մին անգամից աւելի։ Բայց Ինկվիզիթորները հընարք գտան չըկատարել էդ կանոնադրութիւնը։ Ենթարկելով մեղապարտին երկար տանջանքի, նրանք յայտնում էին, թէ տանջանքի շարունակութիւնը հոսամ է ուրիշ ժամանակի։

(2) Նոյն խորհրդարանի կանոնադրութեամբ արգելած էր ենթարկել տանջանքի տասը տարեկանից պակասներին և վեթասուն տարեկանից աւելի ծերերին։

տանջել էին—թոկով և ջրով։ Ա՛յս գիմացաւ էին տանջանքներին, հենց գիտենաս, մին գերբնական զօրութեամբ սնդռանալով։ Ի հարկէ, կարդացողների մտքին է որ սրան մեղապարտում էին իբրու թէ թաքուն դարձել է Հրէից հաւատ։

Ա. Յժմ սրա համար պատրաստել էին նոր տանջանք։

— Վերջապէս կամին դու, սիրելի քոյր իմ՝ Ի Տէր, զղջալ քո մոլորութեան վերայ,— կեղծաւոր հեզութեամբ ասաց Ինկվիզիթորը։

— Ա՛յս զղջալու բան չունիմ, հաստատութեամբ ասաց մեղապարտը. ես ոչինչ յանցանք չունիմ։

— Ինչպէս վրկութեան մարդկան տրվեցնում է քեզ էդ խօսքերը և մենք պարտական ենք յաղթել քո կամակորութեանը։ Ակսեցէք, ասաց նա դահիճներին, ցոյց տալով մեծ կրակարանը վառած ածուխով լիքը։

— Ինչպէս կըլինի քո պատիժը, բռնաւո՛ր,— աղաղակեց մեղապարտը։

— Հրէա՛յ . . Հրէա՛յ . . քշտիշալով ասացին դահիճները, և սկսեցին նրա շորերը հանել։

Վերկացնելից յետոյ նրանք ուզում էին գրկել նրան և տանել. բայց նա դէնը հրեց նրանց և աներկիւղ ասաց՝ — Ա՛յս ինքս կ'երթամ. ո՞ւր էք ուզում ինձ տանել։

Դահիճները ցոյց տուին նրան կրակարանը։ Մեղապարտը իսկոյն գնաց էն զարհուրելի տանջանքի գործիքի մօտ և առանց վախենալու մտիկ տուաւ վառած ածուխին։ Դահիճները նստեցրին նրան աթոռի վերայ և այնքան պինդ կապեցին թոկերով, որ ողորմելի կինը չէր կարողանում շարժել և ո՛չ մին անդամը։ Մեղապարտը չէր հակառակում և ոչինչ չէր խօսում։ Վերջապէս դահիճները շուռ տուին աթոռը դէպի վառարանը էնպէս, որ ողորմելի ոտքերը համարեա թէ դիպչում էին ածուխներին։

Տանջանքը սկսաւ . . . բայց մեղապարտը, ո՛չ աղաղակեց և ո՛չ էլ հառաչեց . . . այնքան մեծ էր էս կնկայ քաջասրտութիւնը։

— Խուզը մոռացել ենք, ասաց յանկարծ դահիճներից մինը նկատելով, որ տարաբաղդի ոտները առաջ սատանի կարմրեցան, յետոյ սկսան կամաց կամաց ապիտակիլ։

— Ողորդ, պատասխանեց միւսը և իսկոյն վերտառաւ մին վոլբրիկ խուզի խեցատ, թրջեց նրա մէջ վոյտի ծերին կապած ապունգը

և քսեց խեղճի ոտներին։ Այս իւղը աւելի սաստկացրուց կրակի զօրութիւնը. ոտքերի կաշին շատ տեղ ճղճղուեցաւ և միսը սկսաւ ջոկուիլ ոսկորներից։ Այսպիսի զարհուրելի տանջանքին մեղապարտը դիմացաւ արիական համբերութեամբ։ Նա մին ըսպէ էլ չբխախտեց իրա հաստատութիւնը և միայն մին կամ երկու անգամ կցկըտուր ձէնով աղաղակեց՝

— Տէր, թող դոցա . . .

Վերջապէս տանջանքը աւարտուեցաւ. մեղապարտին արձակեցին ամբոխից և դուրս տարան տանջանարանից։ Երբոր նրան դուրս էին տանում, նա ասաց Ինկվիզիթորին՝

— Երեսցէ Տէր Աստուած արդարութեան ձերում, որպէս ես ներում։

Խոզէն հազիւ էր շունչ քաշում. նա մեռելի պէս դեղնած էր։ Այս տանջանքների տեսարանը նրա սիրտը կտոր կտոր արաւ։

— Ես տեսնում եմ, որ շատ հիւանդ եմ, կամաց ասաց նա Ալբուէսին. իմ դլուխս պտուտ է գալիս ճենճի հոտից։

— Բայց պէտք է ամէն բանին սովորել, պատասխանեց Ալբուէսը։ Մին տանջանք պակաս է. էն էլ տեսնես ամէն բանի կըսովորես. Սակայն մենք կարող ենք դուրս գնալ էստեղից . . . . Էսօր էսքանա բաւական է։

Երանք դուրս գնացին Ինկվիզիցիայի պալատից։

— Ո՛հ, ասաց Խոզէն ադահութեամբ ծծելով մաքուր օդը. հիմի ես լաւ եմ։

Յիրաւի դու ինչ արմատի նման ես, վիրաբշանօք ասաց Ինկվիզիթորը։

— Կարելի է, պատասխանեց Խոզէն առանց ծիծաղելու, ես ունիմ կնիկ արմատի նմանութիւն. բայց հաւատացնում ձեզ, որ ես քաջ եմ ինչպէս կըվայելէ տղամարդուն։

— Մենք էդ բանը տեղը ընկած ժամանակը կըտեսնենք։

— Կըտեսնէք, ձերդ Արքայնութիւն, Աստուած վկայ, կըտեսնէք երբոր կըհարկաւորի։



XII

ՊԱՐԱՐԱՆ

Լեսոզէի տեւած խորհուրդը 'ի զուր չ'անց կացաւ. էն խրատը տալից մին շաբաթ յետոյ Հոլորէսը գլուխը ծնկանը վրա կռացրած տրտմագին նստած էր Ինկվիզիցիոյի պալատի դղեակներից մէկի միջումը։

Էն քանտը, ուր բռնած էր Հոլորէսը, տասը ոտնաչափ տարածութիւն ունէր և բոլորակ էր։ Էրա թաղով ծածկած օձուքը և պատերը ոսկորի գոյն սպիտակ և հաւասար էին։ Էս քանտը բաւական մութն էր, էնդուր որ լոյսը ծագում էր էնտեղ օձուքումը բացարած մին փոքր ծակից։

Հոլորէսը սիրտը կոտրած և թախծեալ ծունկ չոքեցաւ։ Էս կարծում էր, թէ էրա արտաքին վիճակը փոփոխելով, կը յաղթէ էն մառախլապատ յուսահատութեանը, որի մէջ ընկղմել էր նրան քանտի մշտնջենական միակերպութիւնը։ Խեղճ աղջկայ վերհանմունութիւնը այժմ բռնած ունէր միայն սէրը — հոգւոյ աւրը կերակուրը։ Հոլորէսը դեռ չըգիտէր սիրոյ բոլոր անապատ քաղցրութիւնները։ Էս միայն գուշակում էր նրանց. բայց սէրը ազդեց

նրան ապրելու ցանկութիւն. սէրը բերկրալի եղանակաւ խոստանում էր նրան բարեբաղդութեան յոյս։

Ով որ աստիկ է սիրում, նա երբէք չ'է կորցնում յոյսը. էս պատճառաւ նա էլ կարծում էր, թէ քանի որ Լատէվանը կենդանի է, դեռ ամէն բանը չի կորցրել։

Նկաւ գիշերը. բանտը այնպէս մ'թնեցաւ, որ Հոլօրէսը էլ չ'էր կարողանում տեսնել քոլոլքի բանտերը։

— Վերջապէս, աղաղակեց նա ոտի կանգնելով, վերջապէս ես էլ չ'եմ տեսնում էս սպիտակ միշտ սպիտակ պատերը, չ'եմ տեսնում նրանց սրտամաշ միապերպութիւնը...

Ինչ որ նա էս խօսքերս ասաց, յանկարծ բանտը լուսաւորուեցաւ և խեղճ աղջկայ աչքերը ակամայ ծածկուեցան։

— Ես եմ, մի՛ վախենաք, ասաց մին ծանօթ ձայն։ Հոլօրէսը աչքերը բաց արաւ, նրա առջևը կանգնած էր Լյոշէն։

— Օ՜, շնորհակալ եմ ձեզանից, ասաց աղջիկը, և լաց ընելով ընկաւ Հոմինիկեանի կուրծքին. շնորհակալ եմ, որ դուք եկաք ինձ մօտ, իմ բարի՛ Լյոշէ։

— Ես աւելի վաղ կըգայի, բայց չըկարացի՝ ասաց Լյոշէն. ես վախենում էի Անկիլիզիթօրի կասկածը զարթեցնել։

— Դուք, զարհուրելով աղաղակեց Հոլօրէսը, դուք կորզանում էք նրան ծառայել։

— Ես պէտք է ծառայեմ, պատասխանեց Լյոշէն հաստատ և անվրդով։

— Դա, ես հասկանում եմ, մին վրդը լռելից յետոյ ասաց Հոլօրէսը։ Մին դաղանի, մին ուրիշներին անիմանալի բան կապում է ձեզ Ռըքուէսի հետ։ Պա թէ ոչ, դուք ինչի՞ յանձնվըդ կ'առնէք այդ ազնիւ և բարի սրտով լինել, թէ և երեսանց, դորձակից այնպիսի հրէշի։

— Դուք աներկրաչ հաւատում էք էտուր, հարցրուց Լյոշէն դառն ժպիտով։

— Օ՜, հա. պէտք է որ էտուր համար մեծ պատճառներ ունենաք... դուք, երևի թէ, ձեր կեանց մէջ մին մեծ տարբերութիւն էք դրել։ Ես էտուր համար ամենևին կասկած չ'ունիմ։ Ես երբ ես մտածում եմ ձեզ համար, դօն Լյոշէ, երբ մտածում եմ, թէ ինչ հաստատութեամբ տանում էք դուք էդ ձեր ծանր խաչը, ես ակում եմ ամաչել իմ վրդրդութեան հա-

մաղ . . . Էնդուր որ, խոսասովանում եմ ձեզ մօտ, երբեմն իմ տարաբաղդութիւնս գերազանցում է իմ ուժից և էն ժամանակը ես կարծում եմ, թէ խելքս կորցնում եմ։ Այս բանտը ապա-հում է ինձ. բայց առաջ ես յոյս ունէի, թէ աշխարքումը ամէն բանի կարող եմ համբերել . . .

— Խեղճ, ասաց Խոզէն, նեղացած մարիկ տալով շուրս կողմը։

— Դատեղ էնպէս նեղուացք է, դօն Խոզէ՛, էստեղի օդը էնպէս ծանր է . . . ես հաղիւ եմ շունչ քաշում, և ամենևին ման գալ չ'եմ կարողանում . . . իսկ աչքերիս առջևը միշտ էս բո-լորակ սպիտակ պատերն են . . . Երբեմն գլուխս պտուտ է գալիս, երբև թէ ես կանգնած եմ մին անսահման բարձր տեղումը մա-ռախլապատ և. անյատակ անդունդի վերայ . . . ծածկում եմ աչ-քերս, որ ոչինչ չտեսանեմ, և երևակայութիւնս պտուտ եմ գալիս, պտուտ եմ գալիս, և կարծում եմ, երբեմն, ինչպէս շատ անգամ քնումը պատահում է, թէ նրա յատակը ոտիս տակումը կործան-ում է, և ես յանկարծ ընկնում եմ մին անդունդի մէջ և չ'եմ կարողանում ձեռքով մին բան բռնել . . . Ուզում եմ քնել, բայց քունը չ'ի ծածկում աչքերս . . . սպասում եմ դիշերուան, ինչպէս ուրիշները սպասում են ցերեկին, և գողում եմ միայն մը-տածելով, թէ էլի կըծագի արեգակը և կրկին կըսկսի իմ աղէտս . . . (), Էստեղ դժուիլը շատ հեշտ է, դօն Խոզէ։ Դու ի՞նչ էք կարծում, շարունակեց նա շուտով. նրանք կարծում են, թէ դեռ ես բաւական չ'եմ չարչարուում, թէ չըզրկելը ինձ ամբողջ օրը անքուն մնալով էս տեսակ տանջուելի միջոցից նշանակում է շատ զթով վարուիլ ինձ հետ, — նրանք ամենայն առատօտ գողնիս դուրս են տանում . . .

Գոլցրէսի դէմքը և նրա սաստիկ ներքին վրդովումը վախաց-ուց Ջահիլ Գոմինիկեանին։ Խորհուրդ տալով Անկվիզիցիոյին տե-ղափոխել նրան "քաւարանը", նա մտքումը ունէր, թէ բոլոր "քա-ւարանները", իրանց դրութեամբը աւելի յարմար էին Գոլցրէսին ա-ղատելու համար, քան թէ Անկվիզիցիայի պալատի բոլոր միւս բան-տերը. և 'ի հարկէ, ամենևին չ'էր կարծում, թէ բարի հպատա-կաւ քնտրած բանտը, կըկարողանար էնքան սաստիկ ներգործութիւն անել Գոլցրէսի վրա։

Այս ըսալէին Խոզէն թէ և հնարք չ'ունէր նրան օգնելու, ջա-նաց գոնէ, արիացնել խեղճ աղջկանը մխիթարական խոսքերով։

— Այս շուտ շուտ կըզամ ձեզ տեսնելու, ասաց նա, և հաւատացէք որ ձեր ներողութեանը վերջ կըլինի։ Ուրեմն մի՛ յուսահատէք։ Պատուած ձեզ չէ թողնիլ։

— Ո՞հ, էս զարհուրելի բանտի մէջ ես որդէն, համարեա՛ թէ, յոյս ունենալից յետ եմ ստիպել և ես միշտ կարծում եմ, թէ լինձ համար պատրաստ է չարչարանք և մահ . . .

— Ո՛չ երբէք, շուտով ասաց Յոզէն, էդ անկարելի բան է։

— Ո՞հ, ես արդէն ընտելացել եմ էդ մտածման հետ, պատասխանեց Հոլօրէսը, ես պատրաստ եմ արիութեամբ տանել բոլոր չարչարանքները . . . բայց մեռնելից առաջ ես էն արիւնարբու Ինկվիզիտորին երեսովը կըտամ բոլոր Ճշմարտութիւնը, երեսովը կըտամ հրապարակաւ իրա դատաստանի առջև։ Դա կորուստս կարելի է անօգուտ չըլինի Իսպանիոյ համար։

— Բարի և ազնիւ հոգի, ասաց Ջահիլ Հոմինիկեանը, ձեզ ամենևին չի յաջողուիլ էդ բանը անել։ Ձեզ հրապարակաւ չեն դատիլ։ Ձեզ նրանք ամենևին դուրս չեն թողնիլ Ինկվիզիցիայի բանտից, ինչպէս չեն թողնում Ֆրանցիսկա Լերմին, որին բերին էն զարհուրելի գետնափորը էն գիշերը, երբ առաւաք դուք ձեր հօրը։

— Անկարելի է, զարհուրելով աղաղակեց Հոլօրէսը, անկարելի է՝ . . . լինձ կըդատեն . . . նրանք պատրաստ են լինձ դատել։ Ուրիշ ի՞նչ կերպով կարող են նրանք արդարացնել իրանց գործքը աշխարքի առջև։

— Ֆրանցիսկա Լերմը Աբրուէսի սիրեկանն էր, ասաց պատասխանեց Հոմինիկեանը, բայց Աբրուէսը նրան բանտը դցեց և երբէք արձակելու չէ։

— Կարելիութեան վանքի մայրապետին . . . ինչպէս են մեղադրում նրան։

— Օ՛, Ինկվիզիցիայի մօտ մեղադրութիւնը ամէն ժամանակ պատրաստ է, էդ մասին նա չի դժուարանալ։ Բայց որովհետև հրապարակական քննութիւնը միշտ կարող է Աբրուէսին վնասել, էնդուր համար Ֆրանցիսկին դատելու չեն և նա կըմեռնի իրա բանտումը։

— Բայց էդ զարհուրելի բան է, դոն Յոզէ, և մեր թագաւորը, որի համար շատ լաւ բաներ էն պատմում, ի՞նչպէս է համբերում էս տեսակ չարչարդործութեանց։

— Ա՛յ տեղեակ չէ էդ բաներին։

— Այդ ամենքը, պատասխանեց Հոլոլիէսը անպատմելի աղէտիւ, էդ ամենքը հաստատում են իմ կարծիքս, որ ինձ համար պատրաստ է մահուան պատիժ . . .

— Դուք սխալւում էք, Հոլոլիէս, շուտով պատասխանեց Լսողէն։ Ես ձեզ բանտից կ'ազատեմ, թէ և էտուր համար դլուխս էլ վեր դնելու հարկաւորի. միայն հիմի չ'է, էնդուր որ դեռ ժամանակը չ'է հասել։ Մէկ էլ որ Այոսէվանը և Յովհան Ռուիլեանը այժմ Մադրիտումը կըլինին։

— Այդ բանը ինձ յայտնի է, դօն Լսօղէ. ինձ յայտնի է ամէն բանը, ինչ որ արել են նրանք ինձ համար։

— Կարելի է նրանք կըխնդրեն և կընդունին թագաւորից ձեր հօր համար ներողութիւն։

Երանց տեսութեան էս բոլոր ժամանակը Հոլոլիէսը ուշի ուշով մտիկ էր տալի Ռուբէսի սիրելոյն. նրան զարմացնում էր էն սրութեան և շուտապդացութեան, սառնութեան և մտերմութեան անսովոր խառնուածքը, որ նրան շինել էր մին ամենևին ջոկ մարդ։ Լսօղէի հոգին էլ, ինչպէս նրա դրսի կերպարանքը, ներկայացնում էր ձգողական խառնուած հակակայ յատկութեանց։ Երան տեսնելով և նրա խօսքերը լսելով, չէր կարելի չըմոռանալ, թէ նա Հոմինիկեան է և ծառայում է Ինկվիզիցիային. . . անկարելի էր չըսիրել նրան, չ'ուզիլ նրա դեղնած և սիրուն դէմքի վերայ, ուր գրուած էր էն խորը աղէտը, էն զօրեղ բարձր և կըքով լցուած հոգւոյ վսեմութիւնը։

Ուրաղ, կարելի է որ կերպարանաց փոխխակութիւնը, շարժմանց բնականութիւնը և հեշտութեամբ իրա միտքը և դրաւիչ աղէտը յայտնելու ընդունակութիւնը, ոմանք էնքան ախորժ են մեզ համար տեսնելու ուրիշների մէջ, ունի միայն նա, ով որ երկար ժամանակ և համարձակ պատերազմել է տարաբաղդութեան հետ. կարելի է, որ էս դիւթող զօրութիւնը, որ էս քիչ մարդկանց դրաւիչ վիճակը՝ է դաղտնիք մարդակազմութեան մտաց անհասկանալի։ Երա համար, յիրաւի, գտել են «Հոգնեպիպ» անունը։ Բայց հարցնենք. ի՞նչ է «Հոգնեպիպը», ում է հասկացել նրան։

Ասենք ամենայնիւ, էս անցքերը պատմած ժամանակը, Հոգնեպիպ բառը դեռ չըկար։ Էն ժամանակը ինչ որ չ'էին հասկանում, անուանում էին մի ոգի բանիւ՝ հիպոքրոնիան, հոգոնիան։

Էս զգացողութեան մէջ, որ Հոլոլիէսին կապում էր Լսօղէի

հետ, կար մին կաթոգին բան, նման բարեկամութեան երկու կանանց իրարու հետ։

Ղօլօրէսը մոռանում էր նրա սեռը, նրա տարիքը, նրա կոչումը և վարւում էր նրա հետ էնպէս, ինչպէս կարելի էր վարուիլ իրա սիրական ընկեր աղջկայ հետ։

— Իմ բարի Յոզէ, ասաց նա Ղոմինիկեանի խօսելից յետոյ, ինձ դուր չ'ի գալի երբոր դուք խօսում էք ձեզ համար։ Ձեզ համար էդ բանը ծանր է, և էդ տեսակ խօսակցութիւնից յետոյ դուք սովորականից աւելի տխրում էք։

— Դուք սխալւում էք, Ղօլօրէս. ես ամենևին չեմ տրխրում այժմ։ Դու ընդհանրապէս ինչի՞ համար պէտք է ինձ ծանր լինի ինձ վրա խօսելս . . . չէ՞ որ ես ձեզ արդէն ասել եմ, թէ ես կենացս մէջ ունիմ սահմանեալ նպատակ, և ես անպատճառ կը հասնեմ նրան։

— Յոզէ, ես սարսափում եմ էդ խօսքերը լսելիս, ես վախում եմ ձեզ համար։

— Ուրեմն խօսակցութիւնը փոխենք, սկսենք խօսել ձեզ համար։ Ղօլօրէս, տեսնում էք, ես համոզուած եմ թէ բաղդը նշանակել է, որ ես ձեր փրկութեան գործիք լինիմ, — և ես կ'աշխատեմ, ինչ կ'ուզէ նատի։ Երբոր ես էս բանը կ'անեմ, էն ժամանակը կեանքից ջոկուիլը ինձ համար զարհուրելի չ'ի լինի, էն ժամանակը ինձ ուղեկից կըլինին դէպ'ի դերեզմանը օրհնութիւնք և աղօթք. չէ՞ որ էս երկուսը շատ մեղքեր են ջնջում։

Յոզէի դեղեցիկ դէմքը ոգևորեցաւ էս խօսքերը ասելիս։ Ղօլօրէսը ականջ էր դնում առանց ձայն հանելու։ Նրա դեղնած թշերի վրայից սառն ոլոռն արտասուքները վեր էին գալի։

Երբոր Ջահիլ Ղոմինիկեանը լռեց, նա առաւ նրա ձեռքը, ապին հուսի տուեց իրա ձեռի մէջ և վերդարձնելով ասաց նրան՝

— Յոզէ՛, իմ բարի Յոզէ, ի՞նչ պատահեցաւ ձեզ։

— Ոչինչ, պատասխանեց Յոզէն, համարեա՛ թէ նրա խօսելից յանկարծ ուշքի գալով։ Ես միտք եմ անում, թէ ինչի համար եմ ես աշխարքումը։ Ինձ նրանց, որոնք նեղացած են — աւելի ոչինչ։

— Ասուած իմ, արդեօք շո՞ւտ ես կըդառնայ Դատեվանը, հարցրուց Ղօլօրէսը, ուզելով խօսակցութիւնը փոխել։

— Յուսալի է, վեց օրից կամ մին շաբաթից յետոյ, պա-

առասխանեց Լյոշէն։ Ա. յետու ամենայնիւ ես իմաց կըտամ ձեզ ետրա դառնալը, հենց որ ես կ'իմանամ. էն ժամանակը ես յոյս ունիմ ձեզ համարբարի համբաւ բերել։ Այս շատ մեծ յոյս ունիմ Յովհան Ա. Էլիեանի Թագաւորի մօտ միջնորդութիւնից։

Հիմի մենք պէտք է յայտնենք, թէ ինչպէս իմացաւ Լյոշէն, որ Լասուելանը և "վարժապետը" գնացել են Պոդլիստ։ Կարգացողը անպատճառ կը յիշէ, որ Լյոշէն Ֆրանչիսկեանի հետ վերջին տեսութիւնը անելից յետոյ յանձնեց Կոկօին Լասուելանի հետքը պահել և իրան իմաց տալ, ինչ բանի որ ձեռը կ'ըտայ Հոլորէսի նշանածը։ Յանձնարարութիւնը խոկութեամբ կատարուեցաւ, և Կոկօն իմաց տուեց Լյոշէին Լասուելանի և Յովհան Ա. Էլիեանի Ճանապարհ գնալը հենց էն օրը, երբ որ ինքը իմացաւ։

— Ինչ և իցէ ժամանակ է մեզ իրարից բաժանուելու, վերջապէս ասաց Լյոշէն, տեսնելով, թէ Հոլորէսը փոքր ինչ հանգարտեցաւ. լեր խոհեմ, որդեակ իմ, պահպանէ քո զօրութիւնը։

— Օ՜, մի՛ գնար, աղաղակեց աղջիկը բռնելով նրա շորերից, էսպէս շուտով մի՛ գնար, իմ բաբի Լյոշէ։ Ինձ համար էլի զարհուրելի կըլինի։ Այս էլի կըսկսեմ վախենալ գժուելուց։

"Մեզ արդէն բաժանուելու ժամանակ է", բառը՝ կրկին ասաւ աղջկայ միտքը բերեց իրա վիճակի բոլոր սարսափը։

— Լյոշէ, Լյոշէ, ինձ մէնակ մի՛ թողնիր, շարունակեց նա կցկտուր ձէնով։ Դուք տեսնում էք, որ ես էստեղ կըմնռնեմ։ Դուրս հանեցէք ինձ էստեղից, տարէք ինձ ձեզ հետ, ինձ կըլինի ուրիշ բանտումը դրէք, եթէ անշուշտ հարկաւոր է, միայն մի՛ թողնէք ինձ էստեղ, 'ի վաղ Աստուծոյ մի՛ թողնէք։

Լա խօսքերը ասելով նա գրկել էր Լյոշէի ծնկները և երկիւղից դողում էր։ Ամէն մարդ կարող է երևակայել՝, թէ որքան տաժանելի էր "քաւարանի", բանտը, երբոր նա այսքան սաստիկ զարհուրեցրել էր նա և այնպիսի աղջկանը, որպիսի էր Հոլորէսը։

Լյոշէն կամաց վեր կացրուց նրան և թրջելով նրա գլուխը սառը ջրով, ձեռով մին քանի անգամ քսեց Ճակատին մին քունքից մինչև միւսը, և սրա օգուտը բաբի երևեցաւ. խեղճ աղջիկը— երևի թէ մագնիսական զօրութիւնից — փոքր ինչ հանգստացաւ։

— Ա. յժմ գնացէք, ասաց նա, ջանալով իրա ջորս կողմը մութ չըտալ։ Այս այժմ կարող եմ մենակ մնալ։

Այն լոպէին ոքմին "քաւարանի", դուռը ծեցեց։

— Ես ամբողջ արքը, ասաց Դոմինիկեանը, կերպարանքը բարկացած շինելով։

Ես մտաւ բանտապահը. նա թերեց ծալովն մահճակալ, որը ոչ սովորաբար երեկոները թերուած էին Դոլորէսի համար։

— Ամենևին դուրս չբերանէք էստեղից մահճակալը, ասաց Դոմինիկեանը։ Ամբաստանեալը արժանի է էս ողորմութեանը մեր խրատներին հնազանդելուվը։

— Ձեր հրամանը կըկատարուի, հայր իմ, պատասխանեց բանդապահը։

— Մնաք բարով, քոյր իմ, ասաց Լյոզէն, կռանալով դէպի Դոլորէսը և կամաց ասելով, էս էլի շուտով կըդամ ձեզ տեսնելու։

Նա դուրս գնաց։

Դոլորէսը ծունկ չոքած խոնարհեցրուց գլուխը կուրծքին վրա։

Ամիսներ անցնելով կարդացողին Մադրիտ Կարոլոս Վի պալատը

XIII.

ՄԱԴՐԻՏ.

Այս ամսոյ մէն սիրուն առաւօտը՝ երկու Հանապարհորդներ անցնում էին Մանչէ Հանապարհից դէպի Մադրիտ. նրանց առջև արդէն երևում էին սուրբ Խիդորի և սուրբ Ֆրանցիսկի եկեղեցեաց զանգակատուններըը և բարձր կաթողիկէներըը։ Նրանք արդէն անց էին կացել Տօլէդեան կարմունջը, որ շինած է տխուր Մանսաւարէսի վրայ, որ վազում է աւելի տխուր Հուլիտի միջից։ Մէկ խօսքով նրանք Իսպանիոյ մայրաքաղաքին շատ մօտ էին, բայց նրանց ջորս բոլորքը չլսկային էն քաղաքականութեան և աշխատանաց օրհնեալ պտուղները, որոնց սովորաբար իմաց է տալիս մեծ քաղաքի մօտիկութիւնը։ Նրանց բոլորքումը տարածուած էին տխուր աւերակներ մանր քարերով լցուած։

Այս Հանապարհորդները էին (՝ի հարկէ հասկացաւ կարդացողը) Յուլիան Ս. Ուիլեանը և Լաստէվանը։

— Պատուած եմ, ի՞նչ անապատ է էստեղ, ասաց զվարժա-

պետը». էս դաշտը նման չէ՞ ոսկիներով լքցուած գերեզմանատան։ (1)

— Այ՛, պատասխանեց Հոլոքէոլ նշանածը, հէնց Մադրիտի մէջն էլ ամէն կողմը թախծութիւն, ամէն կողմը զարհուրելի լռութիւն, ամէն կողմը անձայն յուսահատութիւն է պատած։ Ուրիշ տեղանք միւնոյնը։ Այսպէս արդեօք, Աստուած իմ, պէտք է լինի ժողովրդեան վիճակը, էն էլ մեծ ժողովրդեան։

— Իսկէվա՛ն, ասաց «վարժապետը»՝ ձմեռն ժամանակ ծառերը անտերև և գրեթէ մեռած են լինում. բայց նրանց կեղևի տակը պահուած է կենդանարար հիւթ, և գարունքին՝ արեգակն Ճառագայթների բարերար ներգործութեամբը նրանք կենդանանում են կանանչով։ Մի՛ և նոյն կրկնի Իսպանիային էլ։ Կըգայ նրա համար կենդանութեան ժամանակը և էն կեանքը, որ այժմ թաք կացած է, կը զարթի նրա մէջ զարմանալի ուժով։

— Օ՛, ուղարկի նրա համար էդ ամէնքը՝ Ամենակարող Տէրը, ասաց Իսկէվանը։

Այսպէս խօսելով մեր Հանապարհորդները հասան Տօլէդի դուռը, որ Մադրիտի մուտքն է։ Այն ժամանակը սա էր անշուք, մեծ, վայրենայ դուռն և ներքևից ունէր հասարակ։

Հանապարհորդները անցկացան էստեղից Տօլէդեան թաղը։

Այս թաղը էն ժամանակը Մադրիտի ամէն թաղերից լաւն էր։ Բայց Տօլէդեան դռնից մինչև Սերգեդեան հրապարակը (2) էին համարեա թէ պանդոկները, ուր վեր էին դալիս ըստ մեծի մասին Ջրեպանները։

Այն ժամանակը, երբ Իսկէվանը և Ֆրանչիսկեանը հասան Սերգեդեան հրապարակը, էնտեղ հաւաքուած էին շատ մարդիք. Մին քանի տեղերի նեղուացքը զարհուրելի էր. բայց, ինչպէս խառնիճաղանճ բաղմութեան մէջ հասարակեալ է, շփոթ և կապ չունեցող հրապարակի մէջ ամենևին։ Աւելի էր միայն մին խօրին շշունչ, որ իբրև թէ ցոյց էր տալիս զարհուրանք և դժուութիւն։

---

(1) Էս նմանութեան խիստութիւնը իմանալու համար պէտք է տեսնել Մադրիտի շրջակայքը՝ էն անպտուղ, չոր և գրեթէ ամենևին կանանչ չընուած տարածութիւնը, ուր համարեա՛ թէ ամէն տեղ քարեր են ուռած։

(2) Հայի շուկայ և տեղի կառաւիման։

— Այս լիճը է, ինչի՞ համար է էստեղ էսքան բաղմութիւն, զարմանալով հարցրուց Յասէվանը։

— Նրանք թէ, էստեղ ոքմինի պատժում են, ասաց Ֆրանչէսկեանը։

Նա յիրաւի. հենց վարժապետի խօսքը վերջացաւ, մեր Հանապարհորդների աչքին երևեցաւ մին նորասքանչ և զարհուրելի տեսարան։

Բրապարակի մէջ մտաւ ականջները կտրած էշի վրա նստած (1) մին մարդ ապիտակ վերարկուով և կանանչ գդակով, որի վրա երևում էր ապիտակ խաչ։ Նրա հետ գնում էին շատ հոգևորականք և զինուորներ, և էս Հանդէսի ամենից առաջ գնում էին քանտանոցի խոստովանահայրը և եկեղեցական սպասաւորը խաչը բռնած։

Հոգևորականներից երկուսը ձեռներին բռնած ունէին փոքրիկ զանգակներ և երբեմն խփում էին. մուսները երգում էին տխուր և միաձայն եղանակով թաղման շարականներ։

Ամարեա՜ թէ, էս Հանդէսի ժողովրդեան ներկայանալիս, մես կողմից հրապարակի մէջ մտան մին ուրիշ բաղմամբոխ Հանդէս, բաղկացեալ "եղբայրութեան մերձաւորութիւնից", և միացան էն հոգևորականաց հետ, որոնք ուղիղից էին ապիտակ շորաւոր մարդուն։

Յս վերջինները առաւօտուանից մեն էին դալի քաղաքումը

(1) Խաչանումը կախաղանի դատապարտելը պարտաւոր է գնալ պատիժի տեղը դահիճի էշի վերայ նստած։ Ուրաջօրայ ժամանակներումը Խաչանոյ դահիճները սովորաբար ծախում էին իրանց էշերը լեկոյն վճիռը կատարելից յետոյ, և նրանց փոխարէն ուրիշ էշ էին գնում ոքմին պատժելուց մին օր առաջ։ Շատ անգամ պատահում էր, որ էս տեսակ ծախուած էշերին ճանաչում էին նոր տէրերի մօտ։ Յն ժամանակը էս էշ գնողները հատարակութեան նախատանաց տակ էին ընկնում։ Այս և պատահում էր որ շատ աղջկերք անմարդ էին մնում, էնդուր որ, նրանց աղգականներից մինը ունեցել է դահիճներին պատկանեալ էշերից։ Յս ամէնի համար Խաչանոյ կառավարութիւնը օրէնք հանեց, որ դահիճները իրանց էշերի ականջը կտրեն և թէ էս էնդանինները գընելու և դարմանելու ծախքը տրուի աբքաւնուատ։

իրանց ծառայով, որ անդադար զանդատ ածելով, կանչում էր խըղճալի ձէնով՝ «եղբայրք, ողորմութիւն տուէք մահու դատապարտած հողին յիշելու համար։»

Այս ողորմութիւն հաւաքելը լինում էր ամէնքաքար այնպիսի անկեղծ Աստուածպաշտութեամբ, և նոյն իսկ «եղբայրութիւն մեծ ճասիրութեանը», որ բաղկացեալ էր Մադրիտի երևելի ընտանիներից, ապրած էր այնպիսի վսեմ և չնրմեռանդ նպատակաւ, որ եղբայրութեան անդամներին տեսնելիս ամենայն մարդ ակամայ կանգնում էր խորին յարգանքաւ։

— Հաւատիկ մարդիկ, կամաց ասաց Յոհան Աստ։ իլեանը, ցոյց տալով Լատեվանին էն ընկերութիւնը։ Հա՛ մարդիք, որոնք ախտել են իրանց անձը խիստ սուրբ և վսեմ մեծ գործութեան։

— Սրանք էլ վանականաց կարգիցն են, Հարցրուց Լատեվանը։

— Օ՛ֆ, որդեակ իմ. սրանք պարզ քրիստոնեայք են զօրացեալ աւետարանի հոգւով։ Սրանք օգնում են էնպիսիներին, որոնց ամէնքը թողել են։ Սրանք մխիթարում են զղջացողներին։ Սրանց հեզութիւնը, սրանց գթութիւնը և բարեպաշտական խրատը շարժում են նա՛ և քարացեալ մեղաւորների սրտերը յապաշխարութիւն, և թաղումից յետոյ թաղութեան յոյս են ազդում էն յանցաւորի հոգւոյ մէջ, որին մարդկային արդարադատութիւնը մահու է մատնել։ Մէկ խօսքով՝ սրանք հեռանում են՝ կրա սուրբ պատուխրանին, Որ երբեմն ներեց մեղաւոր կնկայ մեղքը։

— Սրանք չե՞ն սարսափեալ որպիսի և իցէ առանձին կոնոնների, Հարցրուց Լատեվանը, որի մէջ վարժապետի խօսքերը ազդեցին կենդանի կարեկցութիւն։

— Ամարեա՛ թէ, չէ. քոյր էս եղբայրութեան մէջ կարող է մտնել միայն նա, որի անունը ոչինչ բանով կեղտոտած չէ, և ով որ ամենևին չէ խառնուած դատաստանական գործերում. էնդուր որ այս եղբայրութիւնը հենց ամենայն ֆանատիզմից և շահասիրութիւնից, ունի նպատակ միայն օգնելու մերձաւորին և աշխատում է պահպանել իրա վսեմ նպատակը իրա բոլոր սրբութեամբը։ Լատուր համար Խարանից առաջին մեծամեծները պատիւ են համարում նրա անդամ գրուիլ։ Ընկերութեան մէջ մտնելիս իւրաքանչիւր նոր անդամ տալիս է նրա գանձարանին 500 ֆրանկ և սրանից ջոկ վճիռն է առնում մատակցիլ բոլոր ծախուց, ինչքան որ հարկաւորի տա-

բաբաղդներին օգնելու։

— Ճանապարհ ... լսուեցաւ յանկարծ Ֆրանչիսկեանի և Դաստեվանի ետևից, Ճանապարհ տուէք ինձ, պարոնայք, մօտ գնալ։

Վարժապետը և Դաստեվանը յետ մղիկ տուին։ Նրանց կողքումը կանգնած էր մին պառաւ կին գաւազանի վերայ յեցեալ։

— Ինձ Ճիլում են, շարունակեց նա. օհ, ինչ նեղութիւն է։

— Ի՞նչ ես ուզում, հարցրուց Դաստեվանը։

— Ես եմ ուզում, որ ձեզանից առաջ կանգնեմ. թոյլ տուէք ինձ, պարոնայք, շնորհ արէք, թոյլ տուէք։

Նրա ցանկութիւնը կատարուեցաւ։

— Ա՛յ, էստեղ, ասաց պառաւը, էստեղից լաւ կ'երևայ, Ա՛խ, շարունակեց նա անտուլոր շտապաւ, ո՞րքան քաղմութիւն կայ պաշտօնեաների վրա, հաւաքը չըկայ։

Դրապարակի չորս բոլորքի տների պաշտօնեաներումը, յիրաւէ, կային հետաքրքիրների քաղմութիւն։ Նրանց մէջ կային ջահիլ սիրուն կնանիք, նա և մանկունք էլ։ Ամէնքն էլ անհամբեր մղիկ էին տալիս կախաղանին, որի վերայ պէտք էր մեռնէր յանցաւորը, որ գալիս էր ականջները կտրած իշի վրա նստած։

— Եղբայրութիւնը ի՞նչ բանի է պէտք ածում իրա մնդուկը մտած վողը, հարցրուց Դաստեվանը, որի համար շատ հաճոյական էր Ֆրանչիսկեանի հետ խօսած վերոյ գրեալ խօսքերը, քանի թէ մահու պատիժի պատրաստութիւնները։

— Իսկ բարի գործի համար, պատասխանեց վարժապետը. առաջին՝ եղբայրութիւնը աշխատում է մահուան պատիժի դատապարտեալների վիճակը թեթևացնել, կատարելով նրա ուզածները վերջի երեք օրը վճիռը կատարելից առաջ։ Յետոյ վճիռը կատարելու առաւօտը Պադրիտի բոլոր եկեղեցիներումը դատապարտեալի հոգու համար հանգստեան կարգ են կատարում։ Երջապէս ամենից մեծը էն է որ եթէ յանցաւորը ունի որդիք, մայր, կամ կին՝ նա հաստատ գիտէ որ իրա մեռնելից յետոյ "եղբայրութիւնը", նրանց հոգը կըքաշէ և կ'ապահովացնէ նրանց վիճակը։ Եղբայրութիւնը նա և հոգս է քաշում նրանց որդւոց կրթութեան համար, և նրանց բարեբարոյութեան համար։

Դաս խօսելիս քաղմութիւնը օրօրուեցաւ... ամէնքը կանգնեցան ոտի մատների վրա։ Յանցաւորը արդէն դահիճի ձեռին էր, որ

Թրևում էր նրան կախաղանի մոտ դրած սանդուխքի վրա և էն ժամանակը լսում էին՝ Հայր մեր, Ողջույն քեզ Մարիամ և Աղաղմոններ, որոնք երգում էին աղքատները և կուրերը։ Ամենքը զարհուրանքով ապառում էին։

— Ամենասուրբ Աստված, աղաղակեց մին ջահիլ աղջիկ, ահա՛ Թոկը անցկացրին նրա վիզը . . . Ստուած իմ, դահիճը կանգնեցաւ նրա ուսերքի վերայ։

— Տէր, ասաց նրանցից յետոյ մին ծեր մարդ՝ ահա՛ հոտոտոմֆն են ասում։

Ժողովուրդը սարսափեցաւ իբրև մին մարդ և լռեց . կախաղանի մոտ կանգնած Ռոմինիկեանը աղօթք էր կարդում տխուր և ցած ձէնով։

Վերջին խօսքերը ասելիս՝ յանցաւորի ուսերքին նստած դահիճը ոտի կանգնեցաւ, պինդ վէր ձգեց ոտներով և Թոկից բռնելով կախածի հետ միասին օրօրւում էր օդի մէջ. նոյն րոպէին լսուեցաւ մօտիկ եկեղեցիից մեռելի զանգակի ձայն։

Դահիճը և յանցաւորը ձօռում էին օդի մէջ երեք կամ չորս րոպէ . իսկ Ռոմինիկեանը շարունակում էր հոտոտոմֆը։

Յանկարծ Թոկը, որի վրա ձօռում էին դահիճը և յանցաւորը, կտրուեցաւ և նրանք երկուան էլ վէր ընկան . իսկոյն եղբայրութեան մերձաւորների մեծաւորը գաւազանի ծայրը կպցրուց յանցաւորին։

Ազատուեցա՛ւ, ազատուեցա՛՝ աղաղակեց բազմութիւնը։

Եղբայրութեան մերձաւորութեան անդամները վեր առան և տարան յանցաւորին, որ դեռ շունչ էր քաշում։

Ես ժամանակումը վարժապետի և Աստեվանի մոտ կանգնած մին ջահիլ կին հինդ տարեկան երեխան գրկին հանեց նրա բաձկունը և սկսաւ ծեծել։

— Ինչ է արել էս խեղճ երեխան, հարցրուց Աստեվանը, սիրտը չբռնելով երեխի արտասուքին և ճչալուն։

— Ոչինչ, պատասխանեց. ես էնդուր եմ ծեծում սրան, որ նա յիշէ էս օրը և երբ մեծանայ դողութիւն անել չըդնէ մտքումը։ Ախըր Թոկը, պարո՛ն, ամէն անգամ չ՚ի կտրուիլ։

— Հիմի ի՞նչ կ՚անեն յանցաւորին, որ այսպիսի հրաշքով մեռնելից պրծաւ, ասաց Աստեվանը։

— Ա՛ յժմ եղբայրութեանն է, պատասխանեց Յովհան Ա-

ելլեանը. այսպիսի դիպուածումը յանցաւորին կեանքը կը շնորհեն, միայն երբոր «եղբայրութեան մերձաւորութեան» աւագ անդամը կը գիպցնէ նրան իրա գաւազանը. «եղբայրութիւնը» ունի էս արտօնութիւնը, որ տրուած է նրան Ամրագոնեան Ֆերդինանդից և հաստատուած է Կարոլոս V թագաւորից։

— Իմի նրա համար ի՞նչ վիճակ է պատրաստուում։

— Նրա հոգին կը քաշէ «եղբայրութիւնը» և եթէ նա մարդ չի դառնալ, էն ժամանակը իրա մեղքը իրա վիզը. իսկ եթէ նա կը մեռնէր այժմ, «եղբայրութիւնը» եօթը ժամից յետոյ վերը կ'առնէր նրա մարմինը և կարդալ կը թաղէր իրա ծախսով։

Էս ժամանակումը մին ուսմնկ մարդ, որ երեսանց խիստանի նման էր և գիտնչ էր դնում վարժապետի և Աստուծոյ խօսակցութեանը, ծիծաղեցաւ և ասաց բաւական բարձր ձէնով՝

— Կը թաղէր, շատ մեծ բան է՞. . նրանց թաղելը մեծ միջոցութիւն է մեզ համար . . . չէ՞ եղբայրը, եսպէս ասենք շատ կը ինարեն . . .

Մեր Ճանապարհորդները էս խօսքից հասկացան, թէ թոկից վերը ընկած յանցաւորը Գարդունեան եղբայրութիւնից է իլել։

— Ստուած իմ, ասաց Աստուածը մին բոպէ լռելից յետոյ, յանցաւորը Գարդունեան Եղբայրութեան անդամներից է և երևի թէ չի ուզուի . . .

— Կարելի է, պատասխանեց վարժապետը . . սակայն, շարունակեց նա թախծագին, դեռ չէ հասել էն ժամանակը, որ բարին չարի վերայ յաղթօղ հանդիսանայ և բարութեան Ճանապարհը, որ լքցուած է փշերով և քարերով, այնքան դժուարակոխ է, որ չարչարանաց դիմանալու բաւական զօրութիւն չունեցողները յուսահատութեան մէջ կընկնեն։

Էս խօսակցութեան ժամանակը, հրապարակումը հաւաքուած բազմութիւնը քիչ քիչ ցրուեցաւ. Ֆրանչիսկեանը տեսաւ և ասաց իրա ընկերին՝

— Գնանք, որդեակ իմ, այժմ մենք կարող ենք անցկենալ դէպի պալատը։

Եւ նրանք գնացին Տօլէդեան քուչով։

XIV

ԹԱՂԱՒՈՐԻ ՕՐՕՐԱՆՆԵՐԸ

Տօլէդեան և յետոյ դէ լաս Պլատէրիաս քուչաներից Հանապարհորդները անցկացան պալատի հրապարակը։

Լատեղ նրանք կանգնեցան։

Լրանց ձախ կողմումը տարածուած էր Մօրցի դաշտը, որ բաժանում է Մանռանարէսը Մադրիտից և որի տարածութիւնն է տուրը Վինցենատի դռնից մինչև Սեգովիան դուռը։ Աջ կողմումն էր բաւական բարձր բլուր էլ Պրէսիլ, որի տորոտից երևում էր էն շինութիւնը, ուր կենում էին պալատական պահակները։ Վերջապէս նրանց առջևն էր նոյն իսկ պալատը — ահագին և մեծակառոյց շինուած դեղեցիկ պաշտպամբներով և երեք դռներով, որոնց առջևից կախուած էին Կոլնթեան կարգի յաւերժահարանց տրձանները։

— Վերջապէս մենք մեր նպատակի մօտն ենք, ասաց Լատեվանը, մոխիկ տալով պալատին. էս է մեր ուղևորութեան տահմանապլուխը, էստեղ է մեր վերջին յոյսը։

— Պատրաստ լինենք ամէն բանի, որդեակ իմ, ամէն բանի,

ինչ կուզէ պատահի, և մօտ դնանք ասաց Յովհան Ամիլեանը։

Այս ասելով նրանք մօտեցան պալատի գլխաւոր դռանը։ Այս դռան մօտ մատուռի կողքումը և շքեղ սանդուխտի աստիճանների վրա կանգնած էին շատ ժողովուրդներ՝ մարդիկ, կնանիք և մանկունք։ Նրանք ամէնքը շարուած էին երկու կարգ. և ամէնքը մնում էին անհամբերութեամբ։

— Դադաւորը մտադիր է զբօսնուլ, ասաց Պարժապետը. բայց նա դեռ շուտով չ'ի դուրս գալ, ինքուր որ դեռ զօրքը չ'է հաւաքուած. դնանք, առ այժմ մտիկ տանք պալատի բակին. մտիկ տալն աժէ։

Զօրքը էն ժամանակը յիրաւի դեռ հաւաքւում էին պալատի հրապարակումը։ Ֆրանչիսկեանի վերջի խօսքը ասելու նուազարանաց հնչմամբ եկաւ էնտեղ մին գունդ և կանգնեցաւ կարգով։

Այստեղանը և Յովհան Ամիլեանը մտան պալատի բակը։ Այս բակն էր մեծ և շատ ուղիղ քառակուսի հրապարակ, որի յատակը ծածկած էր լայն վիայլուն քարերով (գրանիտ) և նրանց վերայ էին երկար երկար քանդակներ, ինքուր համար, որ ձիերի ոտները չըսայքուէին խիստ ողորկութիւնից։ Այս չորս բոլորքումը պատած էին քարեայ կամարներ գեղեցիկ սիւների վերայ կառուցած, որոնց մէջ ամէն մին չորս ներքին փորագրուածների մէջ կանգնած էին պատուանդանների վերայ երկու երկու վիթխարի արձանները Հռովմայեցւոց կայսրներից երևելիների։

Մէկ խօսքով էս բակի տեսքը իսկ յարմար էր փառաւոր բնակութեան Կարոլոս Ե-ի։

Բանի որ մեր Հռոմապարհորդները մտիկ էին տալի պալատի գեղեցիկ բակին, հրապարակումը և պալատումը աղաղակը բարձրանում էր։ Լսւում էին թմբուկները, նուազարանները ածում էին թագաւորական մարշ։ Գլխաւոր դռան մօտ կանգնած էին մին քանի արքունի էկիպաժները, որոնց ամէն մէկին լծուած էին վեց վեց ձիերը թանկագին սարքերով։ Բաղմութիւնը պաշտօնամբի վերայ քանի գնում էր շատանում էր։ Այստեղանը և Յովհան Ամիլեանը դժուարութեամբ հասան մինչև սանդուխտի առաջի աստիճանը։ Ամենքի աչքերը սրուած էին դէպի վերի յարկի սրահակը։ Դատերը եղել էին սիւնազարդ մուհաջառների վերայ, և մին քանիսն էլ առանց նաղ անելու նստած էին երկու մեծ մարմարեայ առիւծների քամակների և գլխների վերայ, որոնք էրանց

հպարտ և հանդարտ գրութեամբը նման էին թագաւորական մեծութեան անդադար հսկող երկու անեղկիւղ պահապաններէ։ Թագաւորի դուռս գալուն անհամբեր ոգաւորներն ամէնի երեսին կենդանագրեալ էր յոյս։ Յանկարծ ամէնքը վեր թռան։ Բազմաքանակի կողմի քանդակեալ մեծ դռնները բացուեցան և դռնապանը երեք անգամ ծափ տուաւ։

Այս էր թագաւորի դուռս գալու նշանը և իսկոյն Կարլ Ե դուրս եկաւ իրա թիկնապահներով շրջապատուած։

Նա հագած ունէր էն ժամանակուայ գեղեցիկ շորերը. թէ և նա շատ բարձրահասակ չէր, բայց նրա քայլերի և բոլոր շարժմանց մէջ երևում էր շատ աղնուութիւն։

Նրա ջահել և հպարտ դէմքը ունէր էն առանձին և կարող գեղեցկութիւնը, որ տալիս է մարդու կերպարանքին վայելուն հայեցուածքը հոգւոյ ճառագայթներով ճոճանչեալ և եթէ բարութիւնը միշտ չէր նրա կերպարանաց գլխաւոր ցոյցը, գոնեա բարութեան փոխանակ միշտ կար հոգաւորուած քաղցր հայեցուածք։

Թագաւորը գնում էր կամաց, և Ֆրանչիսկեանը ուշադրութեամբ մոտիկ էր տալի նրան փորձող աչքերով. էս առաջին անգամն էր, որ նա Կարլոսին տեսնում էր այսքան մօտից։

— Թագաւորը շատ բարի դէմք ունի, կամաց ասաց Նատէվանը, որ նմանապէս մոտիկ էր տալի ուշադրութեամբ։

Յուսահատը պատասխան չըտուաց։ Նա Նատէվանից աւելի լաւ գիտէր դէմք ճանաչել։

Կարլ Ե, ինչպէս և ամենայն մեծ մարդիկ, ունէր սրտի բարի ձկտումն. բայց այսպիսի ձկտումնց և մշտակուն ճշմարիտ բարութեան մէջ կար անչափ զանազանութիւն։

Թագաւորը, ինչպէս ասացինք, գնում էր կամաց. նա ամէն քայլումը կանգնում էր, հնդուր որ ինքն էր առնում ամէնքից խնդիրները, և յետոյ տալիս էր իրա քաջակից գնացող կապիտան Թիկնապահին։

Իսկ նրանց, որոնք խնդիրք չ'ունէին տալու, նա աղնիւ դէմքով, հայրական գգուանօք ձեռք տալիս էր համբուրելու։ Ընդհանրապէս նրա ամենայն շարժմանց մէջ երևում էր իսկ թագաւորի վայելուչ մեծութիւն։

Նրա ամենայն գործոց մէջ երևում էր մեծ հանճար։ Նա միակերպ էր վարում գՀլուած շորերով աղքատներին և փառաւոր

զարգարուած հարուստների հետ։ Նա խնդրատուներից ոմանց հետ խօսում էր ենպէս, իբրու թէ ճանաչում էր նրանց, և ոմանց խնդիրը խիստն կատարում էր։

Այս վերհանձն նուաճողը շատ անգամ յետ էր գցում զօսանքը և տուն էր դառնում էն խնդրատուների հետ, որոնց գործը պահանջում էր շատ վճիռ։

Եւ այնպէս Կարլ Ե. վեր եկաւ սանդուխից. իսկ զինուորական նուագարանները ածում էին արքունի մարշ, և կառքերի լծած ջորիները, հակառակ իրանց առելի հեղութեան, անհամբերութիւնից ոտներով գետինն էին դոփում։

Օրը տաք և պայծառ էր, համարեա թէ արեգակն էլ ուզում էր ոսկեփել տարաբաղդներին իրա ուրախ ճառագայթներով։

Թագաւորը մեր ճանապարհորդներից շատ հեռու չէր, և վարժապետը յոյս ունէր, թէ վերջապէս նրանք էլ կարող են մօտենալ թագաւորին, բայց դէպի Կարլ Ե. էլի տարածուեցան շատ ձեռեր խնդիրքներ բռնած և ակաւ ընդունել նրանց առաջուց բարութեամբը և առանց փոքր ինչ անհամբերութեան կամ նեղանալու։ Միայն երբեմն նրա դէմքի վերայ երևում էր մին առաւակ հոգս և նրա աչքերը փայլում էին էն անխանջ հոգուց բացով, որի կործանիչ զօրութիւնը ապանեց սուրբ Լուտոսի վանքի ճգնաւորին, որ հրաժարեցաւ թագաւորական խշխանութիւնից։ (1)

---

(1) Կարլ Ե. Կայսեր գահից հրաժարիլը և սուրբ Լուտոսի վանքը մանիլը ամէնքին յայտնի է։ Բայց կործեմ շատերը չեն գիտում, թէ նրա մեռնելից յետոյ Կոստիլիոյ Ինկվիզիցիան նրա յիշատակի դէմ ոսի կանգնեցաւ։ Դէ Տու, դ'Օրինիէ և Լաբուրբերի խօսքերին մանիկ տալով Կարլ Ե. մեռնելից յետոյ մեղադրեցաւ դատուեցաւ էնդուրով, որ իրա թագաւորութեան ժամանակուցը միշտ յարակցութիւն ունէր Պեռմանիոյ բողոքականաց հետ, և թէ նա հրաժարեցաւ վանքը էնդուր հաւար միայն, որ էնտեղ ազատ աղաղումը վարուի կրօնական գործոց մէջ իրա թաքուն հակամիտութեանց համաձայն և որքի իրա ապաշխարութեամբ էն ջարիքը, որ նա հացրուց պրոտեստանդութեան կողմի թագաւորներին։ Այս ամբաստանութեանը հաստատութիւն բերում էին, թէ նա ընտրեց իրա խոստովանահայրը Սալամանկ կանոնիկ

Վերջապէս նա հասաւ մինչև սանդուխտի վերջի աստիճանը։ Նրա ուղեկից պահապանները բազմութեան միջից Ճանապարհ բացարին, բայց Յովհան Բ. Լիլեանը էլի չբկարաց թագաւորին մօտենալ։ Տեսնելով, թէ նա չէ հասնում նպատակին և ցանկալով մինչ կերպիւ և ելցէ Կարլ Ն-ի մատդրութիւնը առ ինքը գարձնել, նա բարձրացրուց ձեռները մաղթողական ձևով և տարածեց դէպի թագաւորը։

Ժողովուրդը մոլի տալով Ֆրանչիսկեանի կերպարանքին և շրջելին, և ակամայ պատուելով նրան, տեսան էս շարժմունքը և հան-

---

Կազալէսին, և իրա խոստովանահայր Կոստանդին Պօնսի եպիսկոպոսին, որանք հերետիկոսութեան մէջ կասկածաւոր էին։ Արանցից ջոկ Մոնվիզելեան պնդում էր իրա խօսքը հատով, որ բաղրքական աւանդ մոռք շատ կրօնական գրուածներ գտնուեցան նրա խցի պատերի վրա, որանք Կարլ Ն իրա կենդանութեան ժամանակը գրել էր։ Պերջապէս, նոյն իսկ Կարլի անդարձք (կտակը) գործածեց Մոնվիզելեան նրան մեղադրելու համար։ Բ. յս կտակի մէջ, համարեա թէ, եկեղեցեաց համար ոչինչ բաժին չէր հանած, և ընդհանրապէս հակառակ այնպիսի հոգւոյ էր գրած, որով գրում էին իրանց անդարձները Կարլ Ն-ի ժամանակակից նախանձայոյզ կաթոլիկները, մինչև որ Մոնվիզելեան համարեցաւ նրան մեծ ապացոյց մեղադրութեան։ Բ. յս գործի մէջ նրա առաջին զոհերը դառան Տօլեդեոյ արքեպիսկոպոսը, արքունի քարոզիչը և Կոստանդին Պօնսին։ Փիլիպը թոյլ տուաց նրանց բանտը դցել և նրանք երկքին էլ գատապարտուեցան այրուելու համար։ Կոյսեր անդարձի հետ։ Փիլիպ Բ առաջի գամը ուրախացաւ իրա հօր փոռքը աղօտացնելու դէպքով։ Բայց յետոյ զարհուրեցաւ էս ահարկու խորհրդածութեան պատուղներից և խնդրեց Մոնվիզելեանից Կարլ Ն-ի անունը հանել դատապարտեալների տակից, որ արդէն Իսպանիոյ մէջ սկսել էր ազատակ հանել։ Մոնվիզելեան չբկարաց թագաւորին չէ ասել։ Բայց որովհետև զոհերը նրան հակառակ էին ուստի 1559 թուականը նա այլոց Կազալէսին և մին քանի օր առաջ բանտի մէջ մեռած Կոստանդին Պօնսի պատկերը։ Բայց Տօլեդեոյ արքեպիսկոպոսը դրանց և բարեկամաց օգնականութեամբ դուրս եկաւ հերետիկոսութիւնից անմատ։

կացան, թէ վարժապետը ցանկանում է խօսել թագաւորի հետ, իրանք իրանց յետ քաշուեցան։ Թէոֆիլոսպահնելի գլխաւորը, որի համար վերը յիշեցինք, հրամայեց Ֆրանչիսկեանին մօտ գնալ և Յովհանը ընկաւ թագաւորի առջև ծնկան վերայ։

Կարլ Ը զարմանալով վերկացրուց նրան հեղութեամբ։

— Ի՞նչ կարող եմ ես անել ձեզ համար, հայրս իմ, հարցրուց նա։

— Ողորմիլ, ձերդ մեծութիւն, ձեր ամենահաւատարիմ հպատակներից մինին, պատասխանեց վարժապետը. բայց, շարունակեց նա, մարիկ տալով չորս բոլորը պատած բազմութեանը, էստեղ ես չեմ կարող յայտնել իմ խնդիրս . . . Ինձ հարկաւոր է խօսել ձեզ հետ, աղքայ, առանց վկայից։

— Վաղը եկէք, ասաց Կարլ Ը, թող տալով էն ժամանակը Ֆատէլանին համբուրել իրա ձեռքը։

— Ա՛յս երիտասարդն էլ նմանապէս ունի խնդիր ձեր մեծութեան մօտ, ասաց Ա. Էլիեանը ցոյց տալով իրա ուղեկցին։

— Թո՛ղ էդուց դա էլ գայ ձեզ հետ, հայրս իմ, մենք ձեզ կըլսենք։

— Պարձատրեացէ զձեզ Տէր վասն ողորմութեան ձերոյ, աղքայ, հանդարտ պատասխանեց Ա. Էլիեանը։

— Մինչև վաղը, կրկնեց թագաւորը քաղցրութեամբ։

Որանից յետոյ պալատական ծառայն բաց արաւ թագաւորական կառքի դուռը. Կարլ Ը նստաւ նորա մէջ և նոա հեռացաւ աչքից միւս պալատական կառքերի հետ։ Որանց մէջ նստած էին թագաւորի պալատականները։ Ժողովուրդը սկսաւ կամաց կամաց ցրուել։



XV

ԿԱՐԼ, Ե.

Խապանիոյ Թագաւորներուն աուդիենցիաները (1) ընաւ հնգէս չէին, ինչպէս, կարծես թէ, պէտք էր լինելիս էն երկրումը, ուր պալատական ծէսերը ընդհանրապէս պահպանուում էին ամենայն խստութեամբ։ Բայց էս ծէսը՝ պտուղ որդիական յարգանաց Խապանիացւոց դէպ՚ի իրանց Թագաւորը, ամենևին չէր հեռացնում ժողովրդին իրանց իշխաններից։ Երանք մօտիկացնում էլ էին հպատակներին իրանց ախոռներին մինչև էն աստիճան, որ ամէն օր, մինչքանի ժամ, ամէնքը կարող էին մտնել պալատը և խնդրել աուդիենցիա։

Թագաւորը սովորաբար ընդունում էր առաւօտուայ տասը ժամից մինչև կէս օրուայ երկու ժամը։

Ընդհակառակ զլխումը դրած անց.քի միւս օրը Ֆրանչիսկիանը և Հասեվանը վեր էին ելլում արդէն պալատի սանդուխտից։

Ընդունելութեան սենեակների դռների երեսն էր դէպի երկրորդ սրահակի կողմը։ Երանք մտան էն սենեակը առանց պահպանների արգելքի։

Ընդունելութեան սենեակումը դեռ ոչով չքկար։ Ռոնպանը՝ տուեց մեր ուղևորներին մին տոմսակ, որի վերայ գրած էր

---

(1) ունկնդրութիւն կամ ընդունելութիւն Թագաւորաց։

№ 1 (*) և նրանք նստեցան աթոռների վերայ, որոնք դրուած էին հնաոճ պատերի առաջը ծածկած կարմիր հագուստով։

Սրահակի վրա բացուելու դռներից զատ, ընդունելութեան սենեակումը կային էլի երեք դռներ, թաւիշեայ վարագուրով ծածկած։ Այն դռներից մինը, որ շինուած էր ուղղակի դրսի դռների դիմաց, էր գահի գահլիճի դուռը։ Միւս երկուսը, որ էս դռան աջ ու ձախ էին, բացւում էին — մինը Թագաւորի և միւսը Թագաւորազանց բնակարանների կողմը։

Պատերով Թագաւորին, վարժապետը և իրա ուղեկիցը սկսան մոտիկ տալ Ֆրանդի և Իտալիոյ ուսումնարանաց պատկերներին, որոնցով զարդարուած էր ընդունարանը Կարլ Եի յաղթութեանց շնորհիւ։

Բոլոր ժամանակից յեռայ կամաց կամաց սկսան հաւաքուիլ ուրիշ խնդրատուներ։ ընդունարանի մէջ սիրում էր խոսին լուռ թիւն, բայց գահի գահլիճից ժամանակ ժամանակ գալիս էր մարդկերանց ձայն, որոնք մին բանի վրա խոսում էին տաք տաք։

Այս խոսողներն էին Թագաւորը և Տունիսի դեսպանը։ Ուղղենցիան քաշեց կէս ժամի չափ, և էս բոլոր ժամանակումը աւելի լսւում էր Կարլ Եի ձայնը երբեմն համոզիչ երբեմն սրտահաճ, երբեմն սուր, հրամայական և համարեա թէ կամքի զօրութեամբ տպաւորեալ, որ էս Թագաւորի բնութեան գլխաւոր յատկութիւնն էր։

Բայց Թագաւորի ձայնը զանազան տեսակ փոփոխելից, անկարելի էր գուշակել նրա ներկայ զգացմունքը։ Այս փոփոխումները ցոյց էին տալի նոյն իսկ բնութիւնը, ինչպէս նրա խօսքերը, սովորական, երկդիմի, կշռեալ մեծ զգուշութեամբ և արտայայտեալ այնպէս, որ Թագաւորը միշտ պատրաստի ունէր միջից ցրելոյ իրա հակառակորդների բանը, ինչ տեսակ մեկնութիւն կ'ուզէ տային նրանք իրա գործքերին, խօսքերին և գրերին։ Ընդհանրապէս կա-

(*) էս նշանակում էր, որ Թագաւորի դուրս գալիս, առաջ նրանք ունէին իրաւունք խօսելու նրա հետ։ Այս կարգը Ֆրանսիայումը պահպանւում էր, որ ամենայն Թագաւորին տեսութեան ցանկացողը կարդաւ կ'ընդունէր տոմսակ Թագաւորի սուրդիենցիից առաջ և էն տոմսակների կարգով ներկայանում էին Թագաւորին։

ղոլոս Նի խելքը նման էր Հաբատաբահիւս որոգայթի, որի մէջ ընկնում էր ամենայն ոք։

Վերջապէս Տունիսի դեսպանը գնաց, միջին դրան վարագոյրը քաշուեցաւ, և մեր ուղևորները, որոնք ունէին տոմսակ № 1 ներս մտան դահի դահլիճը։

Նոյն դահլիճի շքեղութիւնը զարմանալի էր։ Դրան աջ ու ձախ կողմերում, մինը մեւսից հաւասարաչափ հեռու կային չորս դրներ կարմիր թաւիշից վարագոյրներով ծածկած։ Նոյն դռները քացուում էին դէպի թագաւորի և արքայազնից բնակարանները։

Դրանց միջերքի քանդակազարդ պատերի առջևը ոսկեզօծ պատուանդանների վերայ կանգնեցրած էին մեծ արծաթի աշտանակներ, արձաններ և շքեղ ծաղկամաններ։

Յատակը (պարկէ) որ շինած էր զանազան կարծր փայտերից և էնպէս ողորկած որ փայլում էր առանց մամ քսելու, մարդու աչքերին դուր էր գալիս իրա գեղեցիկ նկարներով։

Օձուքի վրա, որ փոքր ինչ զմբեթաձև էր և ոսկեզօծ նկարներով զարդարած, կախուած էին մեծ ջահեր արևելեան յախճապակից, դռներից փոքր ինչ բարձր շրջապատած ունէր բոլոր դահլիճը ոսկեզօծ լայն շրջանակ, որից փոքր բարձր և օձուքի գծից փոքր ցած բաւական մեծ տարածութեան մէջ կային գեղեցիկ դբրուագներ, որոնց ամէն մէկը ցոյց էին տալիս բոլոր էն ժամանակուայ ազգերից երկու կամ երեք անձինք։ Որոնք ցոյց էին տալիս աշխարքի չորս կողմերում Խապանիոյ արած յաղթութիւնները։

Դահլիճի գլխումը շքեղ ամպհովանիի տակ, որ զարդարած էր Խապանիոյ դրօշիւ և զանազան էմբլեմներով (դրօշուած), որոնցից ամէնից երևելին էր իրա ճաղերին կերպակրող հաւալուն, դրած էր դահ թաւիշապատ և ոսկի զարդերով պատղուն։ Նոյն դահի պատուանդանի վրա իրարև անխոսխոս թիկնապահներ կանգնած էին երկու կուռած առիւծներ։

Նոյն սենեակը ունէր շատ մեծ մեծ պատուհաններ, որոնք քացարած էին դէպի հրապարակը։

Երբոր մեր ուղևորները մտան դահլիճը, էնտեղ էին թագաւորը և մին քանի մեծամեծներ (գրանդներ)

Թագաւորը խորը մտածմամբ մտն էր գալիս դահի մօտումը, միւսները նրանից փոքր ինչ հեռու կանգնած կամաց կամաց խօսում էին իրարու հետ։

Թագաւորը խնդոյն Հանուչից Ֆրանչիսկեանին. նա մօտեցաւ Յովհան Ս. Իլեանին, անքթիթ մատիկ առաց նրան և հարցրուց մարդասիրաբար՝

— Ի՞նչ ես ուզում դու։

— Արդարադատութիւն, ձերդ մեծութիւն, պատասխանեց Յովհանը, չոքելով մին ծնկան վրա և համբուրելով Թագաւորի ձեռը,— արդարադատութիւն Ինկվիզիցիայի դեմ, որ իրա իրաւունքը առ չարն է գործածում և դործում է չըլսուած չարչարծութիւններ։

Ինկվիզիցիայ բառը լսելիս Կարլ Գը մատիկ չըսալով էրա ատելանին բաւական շփոթուեցաւ, և տեսնելով թէ աւդինցիան պիտի լինի վսեմ, քան ինչպէս կարծում էր առաջ, հրամայեց էրա մարդիերանցը հեռանալ։

Գրը հրամանը կատարուեցաւ, Թագաւորը վեհ կերպարանքով ասաց Ֆրանչիսկեանին՝

— Դուք գիտէք, հայր իմ, որ շատ վատահութիւն պէտք է ունենայ Ինկվիզիցիայի վերայ յոյժանի գանդատաւորը։

— Ա՛յ, ա՛ղբայ, պատասխանեց վարժապետը, պէտք է ունենայ մեծ սէր առ արդարութիւնը։

— Այս ժամանակումը էդ սէրը հազուագիւտ է և եբկիւղալի, ասաց Թագաւորը։

— Այնդուր հաճար է, ձերդ մեծութիւն, որ ես եկել եմ դանել նրան դահլի մօտ։

— Բայց ի՞նչ է քո խնդիրը, ասա՛ բացայայտ։ Վեր ի՞նչ են արել։

— Ինձ, ձերդ մեծութիւն, ոչինչ չ'են արել, բայց դուք ուզենէք հաւատարիմ ծառայ, Մանուել Ս. Լգոզո . . . .

— Սեւիլիոյ նահանգապետը, շուտով ասաց Թագաւորը։

— Ա՛յո, ա՛ղբայ։ Զեր մեծութիւնը ինքնին արժանացրիք նրան այն կոչմանը, և ոչ մին ժամանակ ի՛ և ոչով չ'է կատարել էրա պարտաւորութիւնը նրանից լաւ։ Բայց Ինկվիզիցիօր Ս. Իրուէնը, կամելով վարձատրել էրա մտերիմներից մինին, բարդեց Կոմս Ս. Լգոզոյ վերայ ամբաստանութիւն և Սեւիլիոյ նախկին կառավարիչը հիմի մաշւում է Ինկվիզիցիայի բանտի մէջ, իսկ նրա տեղը բռնեց Ս. Իրուէնի անարգ կրքերի ցածհոգի կամակատարը, որին ձեր մեծութեան մօտ շատ պիտանի է ցոյց տուել։

— Այ, հզոյհս է, միտս գալիս է, ասաց Թագաւորը, որ Սեւիլիոյ այժմեան նահանգապետի նշանակելու համար խնդրել էր Էնտեղի Գեներալ Ինկվիզիթորը։ Բայց Այդ Գերտոսը հաւատացնում էր, թէ նա հաւատոյ հաւատարիմ, բարեյոյս և ընդունակ է . . . . Բայց, շարունակեց Թագաւորը, վաղը լինչ լուելից յետոյ. գիտէք դուք, հայր իմ, ձեր ամբաստանութեան բոլոր վերմութիւնը։ Կոմս Էրգոզոյին մեղադրում են մեծ յանցանքով. թէ նա դաւանում է Լութերեան հերետիկական վարդապետութիւնը . . . Յանցաւորութեան ճշմարտութիւնը հաստատուած է խիստ շատ վկաներով, և ես չեմ կարող արդելել Ինկվիզիցիայի սկսած դատը։ Ասուած վկայ, շարունակեց նա, ես չբկարացի ազատել իմ խեղճ Ռենեդիկտեան Սէրուեսին, որի քարոզները ինձ խիստ զմայլեցնում էին (1)։

— Շատ վկաներով . . . . կրկնեց Յուվհանը ախրագին. բայց միթէ ձեր մեծութեանը յայտնի չէ՞, թէ Ինկվիզիցիայի կորստական իրաւունքը չը յայտնելով մատնիչների անունները ասելիք չարագործութեանց Համբայ է բաց անում, թէ ամէն մարդ միայն մին թշնամութեան պատճառաւ, կարող է առանց պատիժի ամբաստանել Ինկվիզիցիայի մօտ իրա չը սիրածին և էս հերիք է նրան վիշացնելու համար։

— Ուրեմն Էրգոզո Կոմը ունէր թշնամիներ։

— Ընդհակառակը, Թագաւոր, Էրգոզո Կոմը ամէնին ոչ ընկալ էր։ Միայն մին մարդ, կարելի է, պատճառ ունէր . . . .

— Ո՞վ էր էն մարդը.

---

(1) Ռենեդիկտեան Էլֆոնս Սէրուէս էր քաջագէտ արևելեան լեզուների, հեղինակ շատ շարադրութեանց և շնորհալի քարոզիչ։ Կարել Է այնքան յարգում էր նրա քարոզները, որ Գերմանիայ վերայ պատերազմի գնալիս նրան հետը տանում էր։ Մտիկ չըտալով Թագաւորի այսպիսի բարեհաճութեանը Սէրուէսին հերետիկոս դուս բերին և Ինկվիզիցիի տնօրէնութեամբ բանտը գցեցին 1534 տարումը։ Կայսրը խիստ հրամայեց արձակել նրան, բայց նրա հրամանը ճաց անկատար և Սէրուէսը ճաց Ինկվիզիցիայի բանտումը չորս տարի։

— Պետքից մեծ Ինկվիզիցիոն օրը, ձեր ոտ մեծ ուրախութիւն։

— Այո՛ր իմ, խոստա դիմաց ասաց Կարլ Գ., մառանիլ եկէ, թէ չէ, ուր հը փոստահանում ամրատանել մեր առջևը. դիտէք, թէ ինչ յարգանաց արժանաւոր է էն մարդը ու առաքինութիւնը, որ անուանը տալիք ունի։

— Աստուծոյ, պատասխանեց Ֆրանչիսկեանը ազնուութեամբ. ինձ յայտնի է, որ օրուան պաշտօնեանները արդէն պէտք է լինին, աւելի ինդրով, որ ես ինքս էլ նրանց կարդիցն եմ. ես գովում եմ և օրհնում եմ էն ամէնին, ինչոր հաստատում է Ինաւ Ինքնատոսի սուրբ հաւատը։ Այդ զինուորում եմ էն անարժանների անիրաւութեանց և կեղծաւորութեանց դէմ, որոնք ոչ տակ են առնում սուրբ վարդապետութիւնը, շինել են նրան իրենց կիրքերի գործիք և ծածկում են նրանով իրենց ստութիւնը, իրենց անօրէնութիւնը, իրենց զղուելի գործը։

Կարլ Գ. համարձակութիւնը սիրում էր. ինչ բանումը որ բարձր ապաւորութիւն կար, գանում էր նրա մէջ կարեկցութիւն, և մոխիկ չբաղում էն ահին, որ նրա մէջ ազդել էր Ինկվիզիցիան, նա ինքն էր գնում խորին յարգանօք էն մարդուն, որ վստահանում էր իրա մօտ այնպէս անեղկիւղ զինուվարել այնպիսի հզօր դատարանի դէմ։

— Այո՛ր իմ, ասաց նա փոքր ինչ լռելից յետոյ, ինչմով կարող էք դուք հաստատել, թէ Սուրբ Ինկվիզիցիան աներ թշնամութիւն Աստուծոյ կամքի հետ և թէ նա վարուեցաւ նրա հետ անիրաւաբար։

— Թագաւոր, պատասխանեց Յոմհանը։ Կան գաղտնիք, որոնք կարելի է ասել միայն խոստովանութեան մէջ և նրանց յայտնելու իրաւունք չունինք մենք։ Բայց, ես չեմ համարձակում ասել ձեզ բոլորը, ինչ որ գիտեմ։ Այլ ես կարում, նա և, պարտաւոր եմ ներկայ դիպուածումս, յայտնել զանազան էն, ինչ որ յայտնել չէ արգելում իմ պարտաւորութիւնը։ Ես հաստատում եմ և երդւում եմ ձեր մեծութեան առաջը, թէ Սուրբ Ինկվիզիցիան ունի անձնական ատելութիւն Աստուծոյ Կամքի վերայ, թէ նա մեղապարտեց նրան հերետիկոսութեան մէջ ասա, և . . . .

— Ո՛վ կ՛ապացուցանէ, թէ ասա է, շտապով վրա բերեց Կարլոս Գ.։ Հերետիկոսութիւն, ահա Խապանիոյ խստիկան ժանտախտը։ Ասելի վարդապետութիւնը տարածուել է ամէն տեղ։

Ես յանդուգն ուրախան ամէն տեղ ցանեց կռուի և կրքոտեան սերմերը։ Ազատ հերետիկոսութիւնը զարհուրելի է, և ես չեմ կարող չ բդռմել ջերմեռանդութիւնը, որով Ինկվիզիցիոնները ջնջում են նրան։ Ա. յեռ ամենայնիւ, շարունակեց նա մինչ ըռալի մռաածելից յետոյ։ Պարզը միշտ և ամէն տեղ մէկ և նոյն է։ Ազատ գերում է ամենայն նորութիւն, ամենայն բարձր ձայն։ Ա. յժմ նա երեխէ պէս կամենում է իրա վրայից իշխանութիւնը դէն գցել, և չէ ուզում հասկանալ, թէ նրա բաղդաւորութիւնը հնազանդութեան մէջն է, թէ ազատութեան անդորրութիւնը և բարօրութիւնը կախուած է միայն հանձայնութիւնից իշխանաց և իշխեցելոց։ Ա. յժմ նա միտքը դարձնում է էն բաներին վերայ, որոնց հասկանում էլ չէ, և էս դատողութիւններից առաջ են գալի զարմը ամենարդութիւններ։ Նա դուք, հայր իմ, ուչ թէ պէտք է պաշտպանէք ոռաերի կրքոտական ուսմանց հետևողներին, այլ պէտք է, ասէք ինչպէս ես ասում եմ։

Ֆրանչիսկեանը լռութեամբ լսեց Կարլ Ն-ի այս դարձակ երիտասարդութիւնը։ Նա ժամանակ առաց նրան ասել բոլոր իրա ասելութիւնը պրոտեստանտաների վերայ. յետոյ, երբ թագաւորը միտքը ինչ հանդարտուեցաւ, Ֆրանչիսկը ասաց բոլորովին հանդարտ եղանակաւ՝

— Ձեր մեծութեան խօսքերի պատասխան ես համարձակվում յայտնել, որ ձեզ պէս, տէրս, ես ինքս էլ հերքում եմ էն ամէնը, ինչ որ խանդարում է մեր միակ Ազատարարի կրօնը, և եթէ ես գնում եմ Ինկվիզիցիոնների հակառակ, էս միայն էնդուր համար է, որ նրանք, նրան պաշտպանելու պատրուակաւ, նրա թշնամիները աւելցնում են։ Բայց թոյլ տուէք ինձ, տէրս, դարձնել ձեր ուշադրութիւնը իմ ուղեկցի վրա, շարունակեց նա, ցոյց տալով Ֆլորիսի նշանածին։ Այս անունն է Լատեվան դէ Վարգաս։ Այս հայրը արժանացել է Փիլիպ Ա-ի հաւատարմութեանը, և միշտ էր բարեպաշտ քրիստոնեայ, նախանձայոյզ պաշտօնեայ օրինաւոր իշխանութեան։ Իմ ուղեկիցս ամէն բանով իրա հօր օրինակին է հետևում։ Ա. ի՞նչ... էս բանը չ'ազատեց նրան Ինկվիզիցիայի հալածանքից, միայն յայտնի հալածանքից չէ, այլ թաքուն։ . . . . Սեւիլիոյ մեծ Ինկվիզիցիոնը այս կեանքը բառնալու միտք միտքեց . . . .

— Ի՞նչ էք ասում, հայր իմ, ահարկութեամբ ասաց Կա-

ղոլոսը։

— Ես իմ խօսքերիս Հշմարտութեանը ապացոյց ունիմ, պատասխանեց Ֆրանչիսկեանը և կարող եմ ներկայացնել ձերդ մեծութեան։

— Բայց դուք ճիվ էք, շուտով հարցրուց Թագաւորը, ասացէք մեզ ձեր անունը, հայր իմ։

— Իմ անունս է Յովհան Ադիլեան, հեզութեամբ պատասխանեց Ֆրանչիսկեանը։

Կարլ Ե մոիկ տուեց Յովհանին ակամայ յարգանաց ըզգացմամբ։

— Ադյժմ, ասաց նա, գիտելով ձեր անունը, հայր իմ, էլ չեմ զարմանում ձեր անվկիւղութեան վերայ, և հաւատում եմ, ինչ որ ասացիք Ինկվիզիցիայի չարագործութեանց մասին։

Կարլ Ե կարող էր էն էլ ասել «հաւատում եմ թէ էդ հէր կարող եմ խօսել բայայայտ»,,

Սակայն նա էնպէս էլ արաւ, կատարելապէս հաւատալով, որ ո՛չ Ֆրանչիսկեանը և ո՛չ Լասուելանը նրա հաւատարմութիւնը ուրիշին չեն ասիլ։ Ըրա երեսանց կարթոլիկութեան և Ինկվիզիցիայի վերայ ունեցած յարգանքը անկեղծ չէր, և նա յօժարութեամբ գերադանց կը դասէր Լուսերի վարդապետութիւնը, եթէ էս բանը նրա քաղաքականութեան կանոններին հակառակ չըլինէր։

— Ա՜ա, հայր իմ, շարունակեց նա, դառնալով դէպ 'ի Յովհանը, մեզ յայտնի է Ինկվիզիցիայի բոլոր չարագործութիւնները և մենք կամենում ենք ջնջել նրանց. բայց դուք ինքներդ գիտէք, էդ զարհուրելի դատաստանը, որ սահմանուած է բարի և օգտակար նպատակաւ, այժմ Հռոմից էլ հզօր է . . . Ներ սուրբ հոյր, պապը, այժմ չէ վստահանում մոնել իրա կարողութիւնից վեր կրուի մէջ (1) և դուք իմանում էք ինչքան մեծ է նրա իշխանութիւնը։

— Պապի իշխանութիւնը մեծ է, ձերդ մեծութիւն։ Բայց Կարլ Ե կայսրը վստահացաւ նրա հետ վէճ բաց անել, — ա-

---

(1) Ժղ դարումը Ինկվիզիցիան այնքան չէր վախենում պապի իշխանութիւնից, որ գցեց քանդեց և դատապարտեց մին քանի Կարդինալներին։

ասց վարժապետը, էստրոյ միտը բերելով Կարոլոսի պատասխանը Ալեմէնտ՝ պապին մին քանի տարի առաջ տուած հրովարտակի դէմ։ Ան Ուտուածապահ կայսրը վերնական նախախնամութեամբ Ինկվիզիցիայի հետ էլ վէճ մտաւ։ Ինդուր որ էս են պահանջում արդարութիւնը և մարդկութեան իրաւունքները . . .

Թագաւորի պրօշների վերայ փայլակի նման անցկացաւ բաւականութեան ժպիտ։ Ա՜ա միշտ հպարտութեամբ միտքն էր բերում էն վատահ հրովարտակը, որ հրատարակեց Ռերմանիումը և որ յետ դարձրուց դէպի ինքը էն ամէնքին, որոնց հեռացրել էին նրանից Լուտերի ուսման վերաբերեալ հրովարտակները։ Յովհանը Թագաւորի միտը բերելով էս հրովարտակը դիպաւ նրա ինքնասիրութեանը։

Ու էստուր համար Թագաւորը մտիկ տուեց նրան քաղցրութեամբ և ասաց՝

— Ա՛յժմ, հայր իմ, խօսեցէք նոյն իսկ գործի համար։ Ինչով կարող եմ ես օգնել ձեզ։ Բայց անկարելի բան մի՛ խնդրէք։ Մտքերումդ պահեցէք, որ արդարութիւն պահպանելով ես պարտական եմ տերութեան օգուտն էլ պահպանել։ Եթէ աշխատելով հեռացնել Ինկվիզիցիայի չարագործութիւնները, ես պարտական եմ չընդարձակացնել նրան։

— Ես արդէն յայտնեցի ձեր մեծութեանը, պատասխանեց Ֆրանչիսկեանը, թէ Ա՛ռնուէլ Ա՛րդօզ կոմսը անմեղ տեղը ամբաստանուած է։ Նրան չարչարանաց տակն էլ դցեցին։ Բրամայեցէք ուրեմն ազատել նրան։

— Ես այդ բանը չ'եմ կարող անել, ասաց Թագաւորը մտմտուքով։

— Թագաւո՛ր, աղաղակեց Յովհան Ա՛ռիլեանը. մի՞ թէ ձեր հպատակները 'ի զուր այնպիսի խնդութեամբ ընդունեցին ձեր գահը ամբառնալու համբաւը։ Մի՞ թէ դուք 'ի զուր խոստացաք հրապարակաւ, թէ Խալանիումը չ'ի լինիլ ո՛չ ներողութիւն և ո՛չ հալածանք, թէ նրա մէջ յաւիտեան կը հանդչին փայտակոյտերը։ (1) Ո՛չ, 'ի զուր չէ, Թագաւոր . . . 'ի զուր չէ, ես լաւ դի-

(1) Կարլ Ա Խալանիա դալից յետոյ հետաքրքրելով երա Ա՛ռիհելմ Կլօի դատաբանի և մեծ կանցլերը (Ռախարատը) Մելվաջիօ խոր-

տեմ։ Դուք կընպատակեք ձեր ժողովուրդի յոյսը։ Ես հիմա էլ ես դարձակ չեմ դիմել ձեզ մօտ։ Պատուել Աստծոյ Կոմսը ան-մեզ է, դուք չէք ընկել նրան ձեր պաշտպանութիւնից։ Դուք կ'ազատեք ձեր ամենահաւատարիմ հպատակներից մինի կեանքը։

Ֆրանչեսքոն ամենևին պատասխան չտուաւ։ Մին քանի րոպէ դեռ եկաւ դահլիճի մէջ։ Յետոյ յանկարծ կանգնեցաւ և հարցրաւ Լատեվանից՝

— Դուք Պատուել Աստծոյ ազգականն էք։

— Ես յոյս ունէի նրա որդի դառնալ, պատասխանեց Լատեվանը։

— Լաւ է, Աստծոյ կոմսը աղջիկ ունի, հարցրաւ Ֆրանչեսքոն։

— Ունի, ձերդ մեծութիւն, պատասխանեց Ֆրանչեսկոնը և ամօթխած գլուխը կախեց մէջը . . . և էս է պատճառը, որի համար Աստծոյ կոմսը մեզ պարտաւորած է հերետիկոսութեան մէջ։

Կարծես նա գնդնեցաւ։ Ես տեսակ գանգատանք նրա մօտ շատ էին հասել։

Ես շուտով մատեցաւ գրասեղանին, որի վրայ դրած էին գրքեր բոլոր հարիւրաւոր բաները, և դառնալով դէպ'ի Լատեվանը, ասաց՝

— Ես գործումը օտար ոչով չէ այնքան խառնուի։ Կարիք եմ դու, այս անդամ, իմ առնադրի պաշտօնը կատարել։

Լատեվանը բռնութեամբ գլուխը խոնարհեցրաւ։

— Դրէ։

Հուրդներին, համաձայն էր Ինկվիզիցիան բառնալու դիտաւորութեան, իսամ գոնէ, կարճացնելու նրա իրաւունքները։ Սելուաջիօ պատրաստել էր, վոխանորդների հետ, նոր կարգադրութիւն էն զարհուրելի դատարանի համար և թագաւորը խոստացաւ վոխանորդներին, թէ կբաւական Ինկվիզիցիօնների նոյնը ընդունել։ Բայց շուտով կանցնէր Սելուաջիօ մեռաւ։ Նրա մահը բանի ձևը բոլորովին փոխեց։ Խապանիոյ գլխաւոր Ինկվիզիցիօր Աբրահամ Ֆլորենտինոն հնարը դատ. Կարլի խելքը հաճեցնել և կանգնել իրա մտադրութիւնից և կամաց կամաց նախանձայոյզ պաշտպան էլ դառնալ Ինկվիզիցիայի։

Դասեվանը նստեցաւ դրասեղանի առաջը։ Կարլ Ե սկսաւ ասել այսպէս՝

„ Ձեր դրաղնութիւն։

„ Հօր Սանուէլ Ալբրօզօ, որ այժմ Սեւիլիոյ բանտումն է, միշտ ելել է մեր Հաւատարիմ ծառայ, և նախանձայոյզ կատարող մեր սուրբ Կաթոլիկական կրօնի օրէնքներին։ Երբ վրայ հասած հերետիկոսութեան ամբաստանութիւնը մեզ տուաւ նրան։ Դեռ էլ կարելի է, որ էդ բանը արած է անձնական թշնամութիւնից։ Ուստի մենք յոյս ունինք, որ ձեր արքայական թագաւորութիւնը կը բարեհաճի դադարել ձեր ձեռքից եկած բոլոր հնարքները Հրամարութիւնը դանելու և մեր Հաւատարիմ հպատակին արդարացնելու համար։ Մենք էն էլ յոյս ունինք, որ ձեր արքայական թագաւորութիւնը նրա դատաստանը կը վերջացնէ շատ շուտ, արդարութեան և քրիստոնէական մերձաւորութեան համաձայն։

Տուեալ եղև 'ի մերում պալատան 'ի Մադրիտ, 20 մայիսի 1534 ամի։ Կարլ։ „ (1).

---

(1) Կարլ Ե էս տեսակ շատ նամակներ է գրել, բայց շատ անգամ պատահել է, որ դատապարտածի պաշտպանութեան համար գրած գրի ետևից, նա զրկում էր ուրիշ գիր բոլորովին հակառակ մտօք։ Ինչպես ամենայնիւ Կարլ Ե-ի երկու երեսանութիւնը յայտնի է։ Ո՞վ չըգիտէ, զ՞ի, նրա գործքը Ֆրանցիսկ Ա. հետ, երբոր էս թագաւորը Ս՝ադրիտումը գերի էր։ Ես ժամանակումը Ֆրանցիսկ սատանի հիւանդացաւ իրա ազատութիւնը կորցնելու տրտմութիւնից։ Կարլ Ե, իմանալով նրա հիւանդութիւնը, գնաց նրան տեսութիւն։ „ Դուք ինձ տես էք եկել, երևի թէ, էնդուր համար, որ իմանաք, թէ մահը շուտով արդեօք կ'ազատէ ձեզ գերից,, հարցրուց նրան Ֆրանցուզի թագաւորը ,,։—Դուք իմ գերին չ'է.ք,—պատասխանեց Կարլը — այլ եղբայր և բարեկամ։ Ես ձեզ տես գալուց մէջումն ունէի միայն մին բան՝ տալ ձեզ ազատութիւն, և կատարել ինչ, որ պահանջէք ինձանից.—և էս ասելով գրկախառն համբուրեց Ֆրանցիսկին։ Ես խօսքերը փրկարար ներդործութիւն արին։ Ֆրանցիսկը առողջացաւ, բայց նրա յոյսը անպարտուղ մնաց. Կարլ Ե իմանալով նրա առողջութիւնը, կրկին սկսեց նրա հետ սառնութեամբ վարուել. և Ֆրանցիսկ Ա. 'ի զուր

Այս թուղթը դրել տալուց յետոյ թագաւորը կնքեց և տուեց Յովհաննէս ասելով՝

— Մենք շատ գոհ ենք, հայր իմ, որ տեսանք իրա արժանաւորութեամբը պատուեալ մեր թագաւորութեան մէջ քարոզիչ։ Իսկ դու, երիտասարդ, շարունակեց նա, դառնալով դէպի Լատեվանը. Աղրգոզ կոմսի աղջկայ հետ պսակուելից յետոյ, ներկայացիր մեր դուռը։ Մենք քեզ կը բաղդաւորենք։

Այս խօսքերից յետոյ խակոյն թագաւորը մնաւ իրա սենեակը։

Հենց էն օրը Լատեվանը և Յովհան Ալիլեանը Պադրիտից գուրս գնացին։

նրա միտն էր բերում իրա հիւանդութեան ժամանակը տուած խոստումը։ Կարել Ն կատարեց իրա խոստումը էն ժամանակ, երբոր 1520 տարուայ Յունվարի 15ին կապեց դաշն, որով Ֆրանցուզի թագաւորի աղատութիւնը շատ թանկ նստաւ նրա համար։

XVI

Դօն Բօդրիգէզ եւ Սալիէրօ։

Ընդկացաւ երկու շաբաթ մեր վերոգրեալ առուգենցէից յետոյ։ Սեւիլիայ վերադառնալից յետոյ ամէն բանից առաջ ուզում էր Դատեվանը Դօլօրէսի հաւատարմութիւն ստանալ։ Բայց թ՚ինչպէս ստանայ։ Ընդհակառակ սիրելին պահանջում էր, որ Դատեվանը առանց նրան ամենեւին Լուսանայի մօտ չըգնայ։ Այսպէս՞ համար Ինկվիզիցիի պալատումը հարցնել անկարելի էր։ Մնում էր միայն մին թերայոյս հնարը՝ հարցնել Բոնֆոա Սէնտուրիօ պանդուկումը, եւ Դատեվանը վստահացաւ էդ անելու։

"Նա գնաց հնարեղ հենց էն իրիկունը երբ վերադարձան Սեւիլիայ։

Երբ նա մտաւ պանդոկը հնարեց միայն Ղասպան էր։ Պատուելով նրա ամէնօրուայ հիւրերին, նա պատրաստում էր իրիկնահացի համար կերակուրները։

Դատեվանը մանկ տալով ջոջ կողմը, նստաւ էն երկար սեղաններից մինի առջեւը, որոնց արդէն ծանօթ են մեր կարդացողները ինչպէս որ եւ Կոկոյի պանդոկին էլ։

— Իսկի՞ն խօսք չէ՞ կամենում, հարցրուց ջահիլ աղջիկը հետաքրքրութեամբ մանկ տալով նրան։

— Ո՞ւր մնաց սկսահակ շաբաթ, պատասխանեց Դատեվանը, վեր առնելով դդակը եւ դնելով մօտի աթոռի վերայ։

"Նրա հրամանը կատարուեցաւ։

— Ղաստը մօտս, սիրելի, խօսենք՝ ասաց Յատեվանը քաղցր ձեւով. դուք կարէք ինձ մեծ լաւութիւն անել։

— Ո՞ւ, զարմանալով հարցրուց Ջահիլ աղջիկը։

— Այ, դու, նազելի Ղարպա։ Ես քեզ դու Հանաչում ես էս տեղի առաջուայ նահանգապետի աղջիկ տիրուհի Ղոլօրէսին։

Կօկոյի քոյրը մոլիկ տուեց Յատեվանին կատակածանքով.

— Ես ձեր խօսքերը չեմ հասկանում, որովհետեւ նա, ես չունիմ պատիւ Հանաչելու էն անձը, որի համար դուք խօսում էք։

— Դու Հանաչում ես նրան էլ, վարժապետին էլ, ապաց Յատեվանը, տեսնելով, թէ էս պատասխանը իրա վերայ կատակի ղցեց Ջահիլ աղջկանը։ Մի վախենար, Ղարպա, ինձ էստեղ ղրկեց վարժապետը։ Ասկամնում է իմանալ թէ էլի էնտեղ է այժմ Ղոլօրէսը, ուր որ թաքցրուց նրան դօն Լյօղէն։ Ասա՛ շուտով, ապաց Յատեվանը տեսնելով, թէ Ղարպայի թուխ թշերը յանկարծ մեռելի գոյն ընդունեցին։

Կօկոյի քոյրը ամենևին պատասխան չըտուեց Յատեվանի հարցումին, շուտով վերկացաւ իրա տեղից և փախաւ խոհանոցը, ըզզաւելով՝

— Էհ, Տէր Աստուած, պղինձս եկել է դալի, ես էս ըռպէին կըգամ ձեզ մօտ, սպասեցէք։

Այս ժամանակումը դրսի դուռը բաց իլաւ և ներս մտաւ Կօկօն իրա Աղդուաղիլի շորերը հագին։ Յատեվանին տեսնելիս խսկոյն Հանաչեց և դէմքը լքցուեցաւ թախծութեամբ։

Ղոլօրէսի նշանածն էլ խսկոյն Հանաչեց նրան։

— Այ, աղաղակեց նա, ես հիմի կ'իմանամ, ինչ որ պէտք է ինձ . . . . . քու քրոջից ես չըկարացի մին կտրական բան իմանալ. նատիր իմ կողքիս, բարեկամ Կօկո, և պատմի՛ իմ Սեւիլիոյ հարանալից յեռոյ ինչ որ անց է կացել։

Ղարպան հետաքրքրութեամբ եկաւ իրա խոհանոցի դուռը։

Կօկօն մօտեցաւ Յատեվանին, բայց չընստեցաւ. նա լուռ մոլիկ էր տալի երիտասարդին շփոթեալ դէմքով։

— Ասա՛, 'ի փառս Աստուծոյ, ապաց Յատեվանը, հիւանդ իսամ չէ իմ նշանածս։

— Պարոն, ապաց Աղդուաղիլը վրդովմամբ, ես, յիրաւի, չեմ հասարձակում . . . . .

— Ես համարձակվում , աղաղակեց երիտասարդը , սրբին մին դժբաղդութիւն է պատահել . . . .

Կոկոն գլուխը քաշ արաւ և ամենևին պատասխան չըտուեց։

Լասելանը վեր թռաւ աթոռից և յուսահատութեամբ վազեց Կոկոյի քուէը մօտ, բռնեց նրա ձեռից և հուսկ տալով ասաց մաղթական ձէնով՝

— Դանեա՛ դու պատասխանն տուր, Զապա՛ . Ասա՛ մէկ անունը կըսիրես, պատասխանն տուր ինձ, ասա՛ ինձ, ի՞նչ է պատահել դօն Մանուէլ Աղգօլօի աղջկանը։

Զապան մոռիկ տուեց իրա եղբօրը , իբրու թէ նրանից խորհուրդ հարցնելով։

— Պատասխանն տուր նորին ողորմածութեանը , ասաց Նըրան Կոկոն, հասկանալով , ինչ որ ուզում էր նա ասել նշանով . իսկ ես, ես . . . ես չեմ կարող . . . . . ես պատասխանելու զօրութիւն չունիմ։

Այն ժամանակը ասաց Զապան՝ պարոն , խոստացէք ինձ գոնէ չափից աւելի չընեղանալ . . . .

— Օ՛հ, Տէր Աստուած, ի՞նչ բան է պատահել , աղաչակեց Լասելանը անպատմելի յուսահատութեամբ։

— Պարո՛ն , ձեր նշանածը . . . .

— Հետո՞ . . . . . .

— Ա՛ա . . . . .

— Ա՛ա, ի՞նչ . . . . .

— Ա՛ա Անկվիղէցուհին է , պատասխանեց Զապան ցած և զողդողալով։

— Օ՛, աղաղակեց Լասելանը , ես սկէսրը էր սպասէլ էտուը . . . չէ՞ որ նա Հռոմինիկեան է . . . .

— Պարո՛ն, ասաց Կոկոն, մի՛ մեղադրէք դօն Լոզէին. նա էդ բանումը ամենևին մեղաւոր չէ . . . .

— Ուրեմն դուք տեսել էք իմ նշանածին, հարցրուց երիտասարդը։ Ինչը դուք շուտ շուտ էք գնում էն զարհուրելի բանտը։

— Չէ՞, պարո՛ն, պատասխանեց Աղգվաղէլը, ես ինքս չեմ տեսել ձեր նշանածին, բայց մին քանի անգամ նրան տես գնաց դօն Լոզէն։ Այս ես հաւատի եմ , որ նա այժմ աշխատում է նրա ազատութեան համար։

— Ա՛խ . . . . . ասաց Լասելանը դառն ժպիտով։

Խնդչ Երիտասարդի սրտումը թորբոքեցաւ զարհուրելի կռուած։ Եւ էն ըսալէին Գոլօրէսի մահուան լուրը էնքան չէր նեղացնէլ նրան, ոլքան էս կարծիքը։

Ինպատմելի թախծութեամբ նա կրկին նստեցաւ աթոռի վերայ և ձեռերով երեսը ծածկեց։

Երկար ժամանակ լռութիւն տիրեց։

Յանկարծ դրսի դռնից մարդկերանց ձայն լսուեցաւ, որոնք իրար հետ խօսում էին մին բանի վրա, և իսկոյն պանդոկը մտան երկու տղամարդ։ Նրանցից մինը հագին ունէր էն ժամանակուայ զուրսի շորեր, իսկ միւսը հագած էր անկարգ։

Նրանք այնպիսի աղաղակով մտան, որ Դաստելանը ակամայ բարձրացրուց գլուխը և նրանց մռիկ տուեց։

Գորաեինները էլ նմանապէս մռիկ տուին նրան, և նրանցից մինը, որ հագին ունէր անշնորք և անկարգ շորեր, զարմանալով ա-զաղակեց՝

— Դէս ինչ է, միթէ էս դուք էք, դօն Դաստելան։

— Այս էմ, դօն Բօդրիգէզ, պատասխանեց երիտասարդը։

— Տէր Աստուած, էս քանի՛ ժամանակ է ես ձեզ չ՚եմ տե-սել, շարունակեց դօն Ալբերօ, որ արդէն կարդացողին ծանօթ է, — ի՞նչպէս ուրախ եմ, որ ձեզ հետ էստեղ պատահեցայ . . . Լաւ հանդիպեցաւ, դուք ծանօթ չէք, շարունակեց նա, ցոյց տա-լով իրա ընկերին, իմ բարեկամ դօն Խիմենէս դէ Ալբերոյի հետ։

Դաստելանը և դօն Խիմենէսը, որին մենք տեսանք Ալ՝ոնդե-խաբ կոմսի տանը, քաղաքավարութեամբ գլուխ տուին իրարու։

— Բայց դուք, վոնց որ է, դեղնած էք, դօն Դաստելան, յան-կարծ ասաց Ալբերօն և ձեր աչքերը խիստ սառամիկ պսպղում են . . . . Հիւանդ խօմ չէք։

— Ո՛չ, դօն Բոդրիգէզ, թախծագին պատասխանեց Դաստելանը։

— Դուք չ՚էք ուզում ինձ Աշմարիան ասել, շարունակեց Ալ՝ա-լերօն, բայց ձեզ չ՚ի վայելել, որ ինձանից բան թաքցնէք։

— Այս չ՚եմ էլ թաքցնում, ասաց Դաստելանը, հենց ես էլ ուզում էի, շարունակեց ցած ձայնով, խօսել ձեզ հետ մին շատ վսեմ բանի համար, եթէ դուք միայն լինէք . . . .

— Դօն Խիմենէսի մօտ դուք կարող էք խօսել ինձ հետ ա-մէն բանի համար, պատասխանեց Ալ՝ալերօն նմանապէս ցած ձէնով։ Այս երաշխաւոր եմ նրա համար . . . ուրեմն, ասաց բարձր, դուք

մին վնիշտ ունիք . . . .

— Այ, դոն Պոդրիգէզ, ասաց Լասելանը, հանդարտելով Պաղերոյի խօսքերով, ծանր վնշտ . . . . Մենք ապրում ենք զարհուրելի դարու մէջ։ Այժմ երկրի վրայ արդարութիւն չկայ . . . .

— Եթէ կ'ուզես, արդարութիւն կայ, պատասխանեց Պաղերօն, բայց նրան տիրել է Ինկվիզիցիան և, ինչպէս դիտէք, նա չէ՛ սիրում ազատել նրան, ով որ միանդամ նրա ձանկն է ընկնում։

— Այուսամիտ էք դուք, պա՛րոննեը, շարունակեց Լասելանը. Ադրուէսը չըբաւականացաւ Ադրոզօ Կոմսի կորստեամբը։ Նա մտքումը դրել է նրա աղջկան էլ վշացնել . . . նա էլ այժմ բանտում է։

— Նրա աղջի՞կն էլ, կրկնեց դոն Խիմենեսը, մտիկ տալով Պալերօին։

— Օ՛, շուտով ասաց Պալերօն, ախը՝ ես ձեզ ասում էի, դոն Խիմենէս, թէ էն օրը առանց փորձանքի չէ՛ր անցկենալ . . .

— Ասեմն դուք ամէն բանը գիտէք, ինչ որ պատահել է, հարցրուց Լասելանը աւելի հոգեորեալ։

— Այ, պատասխանեց դոն Պոդրիգէզը, և ձեզ կըպատմեմ բոլորը, ինչ որ գիտեմ։ Պիայն խնդրում եմ ձեզանից լսել ինձ հանդարտութեամբ։

Եւ խսկոյն պատմեց Լասելանին կարճ խօսքով ինչ որ պատահեցաւ Պոնդեխաը Կոմսի տանը։ Դոն Պոդրիկէզը չըգիտէր միայն Կոմսի մատնութիւնը։ Ն բանը ամէնից թաքուն մնաց, բաց՝ի մեծ Ինկվիզիթօրից։

Լասելանը լսեց բոլորը շատ զարմանալով Դոլորէսի վրայ։

— Ադրոզօ Կոմսին, ես կ'ազատեմ, ասաց նա մին րոպէ լռելից յետոյ։ Դանե յոյս ունիմ ազատելու . . . . իսկ Դոլորէսին . . .

— Ի՞նչ հնարքով յոյս ունիք դուք ազատել նրան, հարցրուց դոն Պալերօն։

— Օ՛, ասաց Լասելանը վստահութեամբ։ Ոչ՞ որ Խապանիում Ինկվիզիցիից հզօր և կարող իշխանութիւն կայ։

— Ո՞ւր տեղ, եթէ կարելի է հարցնել ձեզ, դուք գտել էք էդ իշխանութիւնը։

— Մադրիտումը, դոն Պալերօ, և Թագաւորը . . .

— Կարոլոս Դ Ինկվիզիցիի դէմ ո՛չինչ չէ՛ գործել, սառը պատասխանեց դոն Պոդրիգէզը։ Այուսամիտ էք ինձ, յոյս մի՛ ունե-

նաք նրա պաշտպանութիւնից։

— Այո։ ասաց դօն Խուիանները, ես կարծում եմ, թէ թագաւորի իշխանութիւնը ամէն ժամանակ քարձր է մին անպիտան Ռոմինիկեանի իշխանութիւնից, և թէ . . . .

— Ուրեմն դուք Մադրիտ էիք, հարցրուց Ռօն Ալբերտ։

— Այ, պատասխանեց Դատելանը, ես հէնց էս է, որ էն տեղից յետ դառայ . . . Ինչ մեծութիւնը արժանացրուց յանձնել ինձ նամակ էստեղի մեծ Ինկվիզիցիայի վրա։

— Շատ լաւ, հեգնարար ասաց դօն Ալբերտն. միայն ափսոս, որ էդ նամակի ետևից անպատճառ ղրկած կրլինի ուրիշ թաղթ, և թէ էն թաղթը, նամանաւորապէս ըստ ամենայն հաւատութեան, արդէն ասացել է Ինկվիզիցիայը, այսինքն նա ձեր գրից առաջ է հասել։

— Անկարելի՛ է, աղաղակեց Դատելանը, այդպիսի նենդութիւն, այդպիսի երկերեսանութիւն անկարելի է . . .

— Դուք կարծում էք, ասաց դօն Ալբերտ։

— Ախը էդ միայն դուշակութիւն է, ասաց դօն Խուիանը։ Ինչն է ձեզ էդպէս կարծել տալիս։

— Ի՞նչը . . . — իմ ապիտակ մազերս . . . այն է, պարզ ասեմ, իմ երկար փորձս . . .

— Փորձառութիւնը յայտնում է մեզ միայն անախորժ հրամարտութիւն, որտեղ ասաց Դատելանը։

— Դուք համար է, որ ծերութիւնը անհաճոյ է, պատասխանեց Ալբերտ։ Ինչու ամենայնիւ, շարունակեց նա, փորձառութիւնը միշտ չէ անում ծերերին կամապաշտ, սառը մտիկ տուող ուրիշների նեղութեանը։ Երբեմն նա անում է նրանց աւելի հանձարեղ, կամ, աւելի լաւ ասել, վստահ, էնդուր որ վստահութիւնն էլ հանձարոյ պտուղն է։

Սատիկ զբաղելով իրանց խօսակցութեամբը նրանք ամենևին չըտեսան, որ նրանցից հեռու, պանդոկի մին մութ անկիւնում շատուց լուռ նստած էր մին Ռոմինիկեան։ Դա մարդն էր Ինքուիսիսիթելի Խոշէն։ Դա ուշադրութեամբ մտիկ էր անում նրանց խօսակցութեանը։ Ալբերտի վերջին խօսքերը ասելիս նա կամաց վեր կացաւ իրա տեղից, զգուշութիւն գնաց խոհանոցը, ուրտեղից ներս էր մտել պանդոկը, չորս դին մտիկ տուեց և քշեցնելով ասաց Կոկոնին՝

— Դա մտիկ տուր դօն Դատելանի հետ խօսող էդ երկու-

ալին։ Ինձ հարկաւոր է, որ դու յետոյ նրանց Հանաչես։

— Այս Հանաչում եմ նրանց, Հայր էմ, պատասխանեց Ա.Լ-գվարդելը, նոյնպէս քշտիշալով։

— Ուրեմն նրանց եաւելց մանն ասի և նրանց բոլոր գործերը Ինձ իմացրու։

— Ամ Ինկվիզիթորի՞ն էլ հրամայում էք իմաց անել։

— Ոչ, միայն Ինձ, Ինձ միայն, սատանի Թեամբ ասաց Լյոզէն։

— Գլխիս վրայ, պատասխանեց Կոկոն, որ, ինչպէս կարդացողը մոքին ունի, բոլորովին անձնատուր էր ջահիլ Գոմինիկեանին։

Այս ժամանակումը էն խօսակցուԹիւնը, որին մոիկ էր անում Լյոզէն, շարունակում էր։

— Ուրեմն դուք մե՞ծ յոյս ունէք, Թադաւորի ԹղԹից, հարցրուց Դատելանին դոն Լյիմենէսը։

— Եթէ դոն Պոդրիգէզի խօսքին մոիկ տանք, պատասխանեց երիտասարդը, մին բոպէ լռելից յետոյ, էն գրից ոչինչ յոյս չըպիտի ունենանք. բայց ես այնու ամենայնիւ, կըփորձեմ և պէտք է փորձել բոլոր կարելի հնարքները։

ԻնպատՀառ, դոն Դատելան, ասաց Ալբերօն։

Այս խօսելս պանդոկը ներս մտան մին քանի խիտաններ և ուրիշ ամէնօրուայ եկօղներից մին քանիսը։ ԼյոսակցուԹիւնը հարկաւ պէտք էր վերջանար։

— Ինձ ժամանակ է ձեզանից բաժանուելու, ասաց Դատելանը իրա խօսակիցներին, մնա՛ք բարով, պարոննե՛ր.

— Ամենք էլի կըտեսնուի՞նք, հարցրուց Ալբերօն ցած ձէնով։

— Ինչ տեղ, հարցրուց Դատելանը, նմանապէս ցած ձէնով։

— Ինձ մոիկ արա, պատասխանեց Ալբերօն։ Եթէ քեզ ասուած նամակը բանի պէտք չըգայ - Թէ և ես կասկած չունիմ, — արի՛ ուշ ժամանակ գետեղիրը։ Այս ամէն երեկոյ էրիկուայ հացից առաջ էն տեղ մանում եմ դալի։ Կարելի է, մենք միմեանց բան հնարենք քո գործի մասին։

Դատելանը ալինդ հուի տուեց նրա ձեռքը, լռութեամբ գլուխ տուեց դոն Լյիմենեսին և դուրս գնաց։

— Գնա՛ք, և մոիկ տանք էստեղի խաբեբայուԹիւններին, ասաց Ալբերօն իրա բարեկամին։ Այս տեղ երբեմն պատահում են շատ ծաղրական բաներ, ես էս տեղ շուտ շուտ եմ դալի հետաքրքրուԹիւնից։

Դոն Խիմենեսը Վալերոյի յառաջարկութիւնը ընդունեց։ Երբ որ նրանք նստեցան, պանդոկը մտան և էլի մին քանի մարդիք և կանայք։



XVII

ԱԿՈՒԹԻՆ

Ինկվիզիցիայի դատարանի ժողովը ամենայն օր քննում էր, էնդուր որ, աֆտո-դա-ֆէի օրը մօտենում էր։

Լատուվանը և Ֆրանչիսկեանը ամենայն առաւօտ գալիս էին ժողովոց դահլիճը։ Նրանք յոյս ունէին տեսնել էն տեղ Ուրգօղօ Կոմին։ Բայց այնքան մեղադրանքներ կային, որ կարդը նրան ուշ հասաւ։

Վերջապէս հասաւ նրանց ցանկալի օրը։

Ֆրանչիսկեանը և Լատուվանը մին օր առաջ տեղեկութիւն ստանալով շատ կանուխ եկան վերոյ յիշեալ դահլիճը, և նստան վերայից համար պատրաստած աթոռի վրա. (նրանց առանց արդելքի թողնում էին շնորհիւ վարժապետի առաջնորդին)։

Նրանց դահլիճը մտած ըսպէին էնտեղ կային միայն սրբերներ և դահիճներ։ Բայց շուտով ներս մտան Ինկվիզիցիայի սեկ-

բնտարները, և սկսան հաւաքուիլ օտարները էլ։

Այս վերջիններից խիստ շատ հաւաքուեցան, պատճառ որ, Լիբիկուանից քաղաքումը ձայն էր տարածուել, թէ էս անդամ անպատճառ պէտք է դատեն Աբգօջ Կոմսին։

Վերջապէս եկան Ինկվիզիցիօնները և շուտով նստեցան իրանց տեղը։

Իսկոյն սրբերներն էլ ներս բերին մեղապարտներին, — որոնք էին՝ Գոլօրէսի տարաբաղդ հայրը, մեզ ծանօթ Ֆրանցիսկայ Լերմը, Լյենոչիոտ, Սեբիլից քաղաքացի Անտոնի Գերրեզուելօ, որ կոչւում էր Ֆրանկօ, և մին Գոմինիկեան։ Այս վերջի չորսին մենք էլի կը տեսանենք նրանց զարհուրելի վայրկենումը. իսկ այժմ դառնանք դէպի առաջինը։

Գոն Մանուէլ Աբգօջ քոլորովին առողջացած իրա շահառուածներից և վերքերից, գնում էր համարեա թէ առանց դժուարութեան։ Բայց այնպէս դեղնած և լցաբած էր, որ Լաստեվանը չըճանաչեց նրան։

— Ա՛հա մեր Կոմսը, թախծութեամբ ասաց վարժապետը Լաստեվանին։

— Կոմսը . . . . նա՞ . . . . էս կիսակենդան ձևը . . . . անկարելի՛ է . . . զարհուրելով ասաց երիտասարդը, մոխիկ տալով Գոն Մանուէլի դէմքի գծագրութիւններին։

— Այ, սա նա է, պատասխանեց վարժապետը առաջուանից աւելի թախծեալ ձևով։

Այս միջոցումը Գոն Մանուէլը հասաւ դատապարտելոց աթոռի՝ մօտ և նստաւ նրա վրա միւս մեղապարտների կարգումը։

Գահլիճի մէջ տիրում էր խորին լռութիւն։

Այս լռութիւնը կարեց Աբգուէսը. նա սկսեց խօսել Աբգօջ Կոմսի՝ հետ՝

— Կանգնեցէք, որդեակ իմ։

Կոմսը կատարեց նրա հրամանը անվրդով հոմարեա թէ մեքենաբար, որպէս մարդ, որ գլուխը արդարացնելու. քոլոր հնարքներից յոյսը կտրել էր։

— Որդեակ իմ, շարունակեց Աբգուէսը, աչքի տակից մոխիկ տալով Յովան Աբելեանին և Լաստեվանին։ Ձեզ վրայ բաւական է զարհուրելի ամբաստանութիւն, Այն ձեզ արդէն յայտնի է։ Բայց մենք պարտաւոր ենք այժմ ամէնի առջև ձեզ յայտնել նրա

ինչ լինելը։ Ձեզ մեղադրում են, որ դուք հերետիկոսների հետ հաղորդակցություն եք ունեցել, նա և ինքներդ էլ ընկել եք հերետիկոսության մեջ։ Այնքանպես վիշտներդ առնում եք։

Ադրոզոս Կոմը ամենևին պատասխան չտվեց։

— Ի՞նչպես հասկանանք, որդեակ իմ, ձեր լռությունը, շարունակեց Ինկվիզիտորը կեղծաւոր հեզությամբ։ Կարելի է վիշտերդ եք առնում։

— Ա՛խ, պատասխանեց Դոն Մանուելը, ես մինչև հիմա ոչինչ բան վիրտ չեմ առած և այժմ էլ չեմ առնում, ինքդուք որ ես իմ մեջս ոչինչ մեղք չեմ տեսնում։ Ես չեմ բարդել ինձ վերայ չիլած յանցանքը, թե և նրանով փոյտակուռից ազատուիլ իսրաղանդի։

— Ա՛ինքա՞ծ . . . . չէ՞ որ ձեզ մեղադրում են մեզ յայտնի և ուստ չքնաղ անձինք։ Իսկ ձեզ արդարացնելու համար ոչ մին ապացոյց կայ և ոչ մին վկայ . . . .

— Այ կայք կան, ասաց Ֆրանչիսկեանը ոտի կանգնելով։

— Ա՛նք ցանկանում ենք և յոյս ունինք Դոն Մանուել Ադրոզոյի վրա բարդեալ յանցանքը ցրել, կցեց Լասարվանը նոյնպէս տեղից վեր կենալով։

— Ինչպես դուք, հարցրուց նրան Ադրուէսը։

— Լասարվան գրագիր դէ Արգաս, պատասխանեց երիտասարդը։

— Ա՛նք չենք կարող, դոն Լասարվան, ասաց Ինկվիզիտորը, մենք իրաւունք չունինք թոյլ տալ, որ դուք վկայեք։ Ձեր կարգադրութեան զօրութեամբ արդարացնելու ցուցումն կարանք առնել միայն էն մարդկերանցից, որոնք կարող են անարկելի ապացուցանել, թե սիրեալ են էնպիսի Խալանիացիներից, որոնք միշտ դաւանել են կաթոլիկական հաւատ. իսկ ձեր հէնց պապը մահմեդական էր։ Ինչ յայտնի է նամանավանդ էն էլ, որ ձեր պապի անունը ոչ թե Արգաս էր, այլ Ենեգաս, և թե նա փոխեց իրա մահմեդական հաւատը փոխելիս։

— Ներդ արքազնութիւն, պատասխանեց Լասարվանը բարկութիւնից կարմրելով. իմ հայրս արժանացել է մոնբմնութեան մեր թագաւոր դոն Փիլիպից։ Սրին մեծութիւնը նա և բարեհաճեցաւ նշանակել նրան Կաստիլիոյ խորհրդարանի անդամ։ Պիտի՞ այսպիսի մեծ ատիճան ունող մարդու որդին չէ կարող լինել հաստատակամ վկայ Ինկվիզիցիայի ժողովի մէջ։

— Կրկին ասում եմ ձեզ, որդեակ իմ, մեր կարգադրութիւնը արգելում է մեզ թոյլ տալ ձեզ, որ վկայէք. իսկ կարգադրութիւնը քանդել մենք չենք կարող. ուրեմն դուք նստէք և ժամանակ տուէք պատասխանել ձեր ընկերին։

Յատուկանը հնազանդեցաւ, աղէկիզեալ մռիկ տալով Աբգօզ Կոմսին, որ իրա աչքը չէր հեռացնում նրանից Աբբուէսի հետ բոլոր խօսակցութեան ժամանակը։ Այնտառարդի համարձակ պատասխան տալու վայրկենումը նահատակի աչքերը համարեա թէ ասում էին՝

«Ընտիր տեղը . . . դու չես կարող ազատել ինձ»,

Բայց երբ Ֆրանչիսկեանը կրկին կանդնեցաւ Ինկվիզիցիայի վերջի խօսքը ասելու, էն բոպէին Աբգօզ Կոմսի աչքերումը փայլեցաւ յուսոյ Հառագայթ։

Աբբուէսը, իրա կողմից, նմանատէս մռիկ տուեց տարտարոսը Աբգօզ Կոմսին, քայց նրա աչքերումը ոչ թէ կարեկցութիւն կար, այլ անգութ ուրախութիւն։

Յետոյ նա ասաց, դառնալով դէպի Ֆրանչիսկեանը՝

— Ձեր անունը, հայր իմ։

— Յովհան, որ ընդհանրապէս կոչում են Աւիլեան, ասաց Այրժապետը։

— Ի՞նչ կարող էք դուք ասել մեղապարտին Հշմարտելու համար։

— Ոչ նա ոչ մին ժամանակ և ոչ մին բանով չէ մեղանչել ոչ հոգևոր և ոչ մարմնաւոր իշխանութեան մօտ։

— Հայր իմ, պատասխանեց Աբբուէսը, ձեր ցուցումը անկասկածելի է, արժանի կատարեալ հաւատարմութեան և շատ վեր է մեր։ քայց որքան էլ ձեզ յարգում ենք, մենք չենք կարող նրա զօրութեամբ արդարացնել մեղապարտին։

Մեր սահմանադրութեան զօրութեամբ, որին մենք պարտական ենք հնազանդիլ, մեղապարտը կ՚արդարանայ միմիայն, էն ժամանակ երբ նրա անմեղութիւնը կը հաստատուի տասն երկու վկայքով։ Ո՞ւր են, հայր իմ, ձեացած տասն և մի վկայքը։

— Ա՛յդանք չըկան, ձերդ որբազնութիւն, հեզութեամբ ասաց Յովհան Աւիլեանը, քայց ես կարող եմ ներկայացնել ձեզ գրաւոր հաւաստութիւն այնպիսի մարդու, որի հաւատարմութեան վրայ, 'է հարկէ, դուք չէք կասկածիլ։

— Ո՞ւրկայությունքդ, հայր իմ։

Պարժապետը տուեց Ադբուէսին Պարոլոս Նդի նամակը։ Ադբուէսը բաց արաւ առանց շտապելու, իբրու թէ, առաջուց իմանալով մէջն ինչ է գրած. յետոյ կարդաց մտադրութեամբ և դանելով մին թուղթ, որ գրած էր Ինկվիզիցիոնի տեղի առջևի գըրասեղանի վրայ, ասաց Պարժապետին՝

— Ինքդ կըհամեմատեցիր, հայր իմ, թէ ինչպէս պէտք է վարուիր դ էս բանումը. իսկ այժմ սկսեցիր հարցնել միւսներին։

Ադամ, Ադրդօզ Պոմի վիճակը անդարձ վճռուեցաւ . . .

Ինկվիզիցիոնի տասած հարցումը սկսուեցաւ։

Մինչև մնացած մեղապարտներից ոչ մինն էլ անմեղ դուրս չեկաւ։ Իսկ որ ինչ կըվերաբերի Ֆրանցիսկայ Լերմին, գլխաւոր ապացոյց նրա մեղապարտութեան էր Լուտերական աստուածաշունչը, որը գտել էր նրա մօտ Ադբուէսը . . .

Ատենակալութիւնը վերջացաւ։

Ադրդօզ Պոմը դուրս գալիս մտիկ տուեց իրա անբիկիւղ պաշտպաններին անպատմելի յուսահատութեամբ։ Ա՜ա, համարեա թէ, նրանց մնաք բարով ասաց յաւիտեան։

Յովհան Ադիլեանը Նստեվանին շուտով դուրս հանեց դահլիճից, վախենալով, որ կրակոտ եբիտասարդը չըկորցնի իրա դըլուխը որպէսի և էլ անզգուշ խօսքով։

Վերջ երկրորդ հատորոյ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՏՈՒՆ
Հ.Ս.Խ.Հ. Հայկական Պետական Գրադարան
7/XI-1922
ՍՊԱՍՊԵՏՅԱՆ ԱՆՎԱՆ

Օ՛ն ոչի՛նչ է՝ ի ծառուն՝ որ ոչ յոյսն ունիցի, և զարդանն՝ որ ոչ ծանիցի։ Օ՛ր ասեմ՝ Հեղ՝ ի խառատն՝ առագի՛ն՝ ի լոյս։ և զոր քան՝ յանիկանն՝ քարտուղացի՛ն՝ ի վերայ առնեսցուք։

Պատ՝ զԼ ժ։ Հատոր 27։

2594

2013